

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

1826-1828 թթ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻ ՔԱՆԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Երևան 1999

Ա.Ա.ԿՅՈՐԿՅԱՆ

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ
РУССКО-ИРАНСКОЙ ВОЙНЫ
1826-1828гг.

(история, историография)



Издательство "Гитутюн" НАН РА
Ереван 1999

9(55)
Թ-70

Քյուրքչյան Ալբերտ Հայրիկի

1826-1828թթ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻ ԲԱՆԻ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

(պատմություն, պատմագրություն)

4894



ՀՀ ԳԱՍ «Գիտություն» հրատարակչություն
Երևան 1999

ԳՄԴ 63.6(2Ռ)

Ք 709

Տպագրվում է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Ռուսաստանի պատմության ամբիոնի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտ.

դոկտոր Կ.Ա. Հարությունյան

Գիրքը հրատարակության են ներառվում գրախոսներ՝ պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Բ.Պ. Բալայանը և պատմական գիտությունների թեկնածու Ռ.Հ. Գասպարյանը

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ Ա.Հ., Ք 709. 1826-1828թթ. ռուս - պարսկական պատերազմի մի քանի Հիմնահարցեր (պատմություն, պատմագրություն) (պատ. խմբ. Կ.Ա. Հարությունյան) - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 127 էջ

Աշխատությունը նվիրված է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառների և այդ հարցում մեծ տերությունների խաղաղած դերի լուսաբանմանը:

Նախատեսված է պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

Ք 0503020901 99թ.
703(02)-99

ԳՄԴ 63.6(2Ռ)

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999թ.

ՆԱԽԱԲԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցի արդիականությունը: Հայկական պետության անկախության հռչակումը և հանրապետության նախագահի համաժողովրդական ընտրությունը պատմական նշանակություն ունեցող իրադարձություն է հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ: Հայ ժողովուրդը այդ հաղթանակին հասավ հապարավոր տարիների պատագրական պայքարից հետո: Ղեկնա 1786թ. Մադրասի հայ համայնքի և հայ պատագրական շարժման նշանավոր քաղաքական գործիչ Ծահամիր Ծահամիրյանը մշակել էր խորհրդարանի և նախագահի ղեկավարությամբ Հայկական պետության ստեղծման նախագիծը: Սակայն Արևելյան Հայաստանում դեռևս գտնվում էին պարսկական զորքեր, իսկ Ծ.Ծահամիրյանի երազանքն իրականացավ միայն 205 տարի հետո:

Այդ երկարատև և փշոտ ճանապարհին կարևոր փուլ էր 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, որը վերացրեց պարսկական տիրապետությունը Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում, միացրեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին, բայց չստեղծեց Հայկական պետություն: Այդ առումով ճշգրտման կարիք ունի նաև հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը: Այդ կողմնորոշումն իսկապես գոյություն ուներ, ցարիզմի կողմից պարտադրված և, առավել ևս, առանձին հայ քաղաքական գործիչների քարացած մտածելակերպի արդյունք չէր: Ուղիակառակը, այդ կողմնորոշումը հայ ժողովրդի շահերի արտաքին քաղաքական հաշվեկշռի բավակողմանի և կշռադատված վերլուծության արդյունքն էր, որն անմիջականորեն կապված էր Հայկական պետականության ստեղծման մասին հայ պատագրական շարժման ակնկալիքների և արտաքին օգնության ստացման իրական հնարավորությունների կանխագուշակման հետ:

Ուրդ էին և ոչ միանշանակ հայ ժողովրդի հարաբերությունները արևմտյան մեծ տերությունների հետ: Հայ հասարակական ակնավոր գործիչներ Իսրայել Օրոն և Հովսեփ Էմինի դիվանագիտական գործունեության օրինակով ակնբախ էր, որ նախքան Ռուսաստանից օգնություն խնդրելը նրանք ապարդյուն փորձեր էին անում հասնելու արևմտյան մեծ տերությունների աջակցությանը, իսկ այդ չէր ստեղծում հայ ժողովրդի արտաքին քաղաքական միակողմանի կողմնորոշման տպավորություն, առավել ևս, որ արտաքին քաղաքական կողմնորոշման հիմնահարցն

ընդհանրապես չի կարելի վննել նրա վերջնական նպատակներից կտրված:

Հայաստանում պարսից դժնդակ տիրապետության դեմ հայ ժողովրդի պատագրական պայքարը նշանակալի չափով բարդանում էր արևմտյան մեծ տերությունների, հատկապես Ֆրանսիայի կողմից՝ առաջին ռուս-պարսկական պատերազմին և Անգլիայի կողմից՝ երկրորդ ռուս-պարսկական պատերազմին միջամտելու հետևանքով: Այդ մեծ տերությունները ոչ միայն չէին օգնում հայ ժողովրդին պարսկական և թուրքական նվաճողների դեմ նրա մղած պայքարում, այլև չգտում էին պարսկական տիրապետության պահպանմանն Անդրկովկասում՝ այդ տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերը թուլացնելու համար, բոլորովին հաշվի չառնելով այն, որ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ էին նպատակաուղղված հայ ժողովրդի շահերը: Կարելի է լոկ ցավել, որ երկար ժամանակ հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը խեղաթյուրվում էր հայ և ռուս պատմագրության մեջ, այդ թվում նաև ռուսական ցարի՝ Ալեքսանդր 1-ինի կողմից հայ ժողովրդին ուղղված 1813թ. հոկտեմբերի 15-ի «Ռուսաստանի նկատմամբ հավատարմության և ջերմեռանդության համար» նրա հայտնի հրովարտակում, որում, մասնավորապես, նշվում էր, որ հայ ժողովուրդն աչքի էր ընկնում ցարական Ռուսաստանի նկատմամբ ունեցած իր «մշտական նվիրվածությամբ» և ցարիսկին «կյանքը գոհաբերելու իր պատրաստակամությամբ»: Մինչդեռ այդ նվիրվածությունը վերաբերում էր ոչ թե ցարիսկին, այլ կապված էր Հայկական պետականության ստեղծման հույսերի հետ, որն այդպես էլ չիրագործվեց:

Սույնիսկ հայերի ցույց տված տնտեսական օգնությունը ռուս պինվորներին հայ պատմաբան Ա.Նրիցյանցը թյուր կերպով ներկայացնում էր որպես հայ ժողովրդի հավատարմության և երախտապարտության արտահայտություն ցարիսկի նկատմամբ¹, թեպետև չէր նշում, թե հայ ժողովուրդը ինչի՞ համար պետք է արտահայտեր ցարիսկին իր երախտապարտությունը: Չէ՞ որ «Թուրքմենչայից» հետո հայ ժողովուրդը պայքարում էր ցարիսկի դեմ:

Հայ ժողովուրդը այլընտրանք չունեցավ իր ճակատագիրը որոշելու և մուսուլմանական ծայրահեղականների շրջապատում գոյատևելու համար, բացի ռուսական կողմնորոշումից և դաշնակից ռուսական զորքերին միանալուց: Միաժամանակ, չի կարելի համարել, որ հայ պատագրական շարժման և ցարական Ռուսաստանի նպատակներն ու շահերը բացարձակապես համընկնում էին: Ծախերի ընդհանրություն կար միայն ընդհա-

¹ Երիցյանց Ա., *Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Ֆայթ 19-րդ դարում, մասն 1, Թիֆլիզ, 1894, էջ 237-243:*

նուր թշնամիների դեմ միասնական պայքարի հարցում, քանի որ ցարիսկին չգտում էր հասնել ամբողջ Անդրկովկասում իր գերիշխանությանը, իսկ հայ ժողովուրդը՝ պարսկական տիրապետությունից ապատագրմանը և իր պետականության վերականգնմանը: Հենց դրանով էլ պայմանավորվում էր հայերի ակտիվ մասնակցությունը Արևելյան Հայաստանի տարածքում ծավալված ռուս-պարսկական պատերազմին: Կովկաս քարտված դեկաբրիստների Հավաքական գնդի կազմում հայ կամավորներն անչնապոհ կերպով մարտնչում էին պարսկական զորքերի դեմ ռազմաճակատի բոլոր ամենավտանգավոր հատվածներում:

Հայ ժողովրդի պատմության մեջ հավերժ կիիջվեն հայ հետախույզների սխրանքները պարսկական զորքերի թիկունքում: Խոշտանգում էին նրանց, հանելով աչքերը, կտրելով ականջները, շուրթերը, կրունկները, բայց հետախույզները չէին հայտնում Էջմիածնի գաղտնիքները: Ներսես Աշտարակեցու ստեղծած հայոց հետախույզության լայն ճյուղավորված ցանցը, ինչպես նաև հայ գյուղացիների կողմից ցույց տրված լայնածավալ օգնությունը ռուս պինվորներին պարենամթերքով, երբ Հայաստանում սով էր տիրում, ծանրակշիռ ներդրում ունեցավ Պարսկաստանի դեմ պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի մեջ: Հայ հայրենասերների դրսևորած անշահախնդիր մարդասիրական օգնության շնորհիվ դիմակայեց պաշարված Ծուշին: 1834թ. Օշականից Էջմիածին տանող ճանապարհին հայերը հուշարձան-կոթող կանգնեցրին գեներալ Կրասովսկու՝ հերոսի մահով գոհված 1154 ռուս պինվորների և սպաների հիշատակին, որոնք կարողացան, ճեղքելով կրակի ծովը, օգնության հասնել օրհասական վիճակի մեջ գտնվող Էջմիածնի վանքին, ուր գտնվում էին 500 ծանր հիվանդ ռուս պինվորներ:

Այդ պատերազմում ռուսական զորքերի տարած հաղթանակի մեջ վիթխարի դեր խաղաց տաղանդավոր զորավար գեներալ-լեյտենանտ Մադաթովը: Նրա զորքերի հաղթանակը և նրա անչնական հերոսությունը վերջ դրեցին պարսկական զորքերի 50-օրյա հարձակումներին և բացեցին պատերազմի երկրորդ փուլը և ամբողջ Կովկասյան հատուկ կորպուսի հակահարձակումները, որոնք կանխորոշեցին ամբողջ պատերազմի ելքը:

Որոշ չափով հավանական կարելի է համարել, որ Ռուսաստանին Ղրիմի միացումից և Գեորգիևսկի պայմանագրի կնքումից հետո 1783թ. Ռուսաստանն ամրացնում էր Կայսրության հարավային սահմանը, սահմանային արգելապատնեջ ստեղծելով Ղրիմի թերակղզով, որն իր աշխարհագրական դիրքով հսկայական վանգվածով խորը մխրճվում էր Սև ծովի մեջ, և Թուրքիային սահմանակից Վրաստանի միջոցով: Ենթադր-

վում էր, որ այդ արգելապատնեշի շարունակությունը կկազմի Արևելյան Հայաստանը, որը կարող էր օգտագործվել որպես ռազմավարական հենակետ Օսմանյան կայսրություն ռուսական պորթերի ներխուժման համար: Հայտնի է, որ դրա շնորհիվ 1828թ. հունիսի 14-ին (1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում) գեներալ Պասկևիչը 12 հազար բանակով անցավ Ախուրյան գետը Գյումրիի շրջանում, դուրս եկավ Կարսի ուղղությամբ, ապատագրեց գերությունից 750 հայ ընտանիք, հունիսի 23-ին գրավեց Կարսը, հուլիսի 24-ին՝ Ախալքալաքը, օգոստոսի 15-ին՝ Ախալցխան, իսկ օգոստոսի 22-ին՝ Արդահանը¹:

Ինքնակալության գաղափարախոսներն իրենց նպատակների համար օգտագործեցին հայ և վրացի ժողովուրդների մեջ դարերով կուտակված ատելությունը Արևելյան Հայաստանը և Արևմտյան Վրաստանը նվաճած թուրքական գավառների հանդեպ: Մինչդեռ «պատնեշի» հետագա կառուցումն ուշանում էր Արևելյան Հայաստանում պարսկական պորթերի առկայության, ինչպես նաև Վրաստանի վրա 1795թ. Աղա-Մոհամմեդ խանի հարձակման և Թիֆլիսը հրի մատնելու պատճառով: Եկատերինա 2-րդի չեղնարկած պատասխան միջոցները՝ կապված գեներալ Չուբովի Կասպյան կորպուսի՝ Ադրբեջանի վրա կատարած արշավանքի հետ, հանգեցրին Ադրբեջանի լարված իրադրության լոկ առժամանակյա կայունացման, որտեղ Իբրահիմ-Սալի խանը գլխավորեց գեներալ Չուբովի դեմ կազմակերպված դավադրությունը: Այն քանից հետո, երբ 1796թ. դեկտեմբերին Պավել 1-ինը ետ կանչեց Մոսկովյան գեներալ Չուբովի կորպուսը, Սերևանի բերդը պարսկական պորթերի պատագրելու մասին մայրը Բոգդանյանի պլանը չախողվեց:

Արևելյան Հայաստանում պարսկական պորթերի բազմապատիկ գերակշռության պայմաններում հայ ապատագրական շարժումը չէր կարող հույս ունենալ լոկ իր սեփական ուժերով հաղթանակի հասնել Աբաս-Միրզայի պորթերի դեմ պայքարում: Պարսկական բռնապետությունից Արևելյան Հայաստանի ապատագրման վերաբերյալ իրենց ակնկալիքները հայերը կապում էին ռուս-պարսկական պատերազմների հետ: XVIII դարի վերջին Հայկական պետության ստեղծման մասին ծրագրերը մնացին չկենսագործված: Ծահամիր Ծահամիրյանի ծրագիրը անընդունելի էր ցարիկի համար, քանի որ ինքնակալությունը չէր կարող թույլ տալ Ռուսաստանում խորհրդարանի և նախագահի գլխավորությամբ հայկական ժողովրդավարական հանրապետության կազմավորում: Անընդունելի էր նաև ռուս և հայ ազգերի միջև Հովսեփ Արղությանի կազմած պայմանա-

գիրը՝ Արևելյան Հայաստանում պարսկական պորթերի առկայության պատճառով:

Հայկական պետություն ստեղծելու 1784թ. իրական հնարավորությունը կապված էր շահական գահի հավակնորդ Ալի-Մուրադ խանի նախագծի հետ, որը չգտում էր հասնել ճանաչման Եկատերինա 2-րդ կայսրուհու կողմից և Պարսկաստանի պաշտպանությանը Ռուսաստանի կողմից՝ թուրքական ագրեսիայի դեպքում, իսկ դրան որպես փոխհատուցում նա պատրաստ էր Ռուսաստանին պիջել Արևելյան Հայաստանը՝ Սերևանի, Սախիջևանի, Ղարաբաղի և Ղարադաղի խանությունների կազմով, ինչպես նաև Պարսկաստանի մերձկասպյան գավառները՝ Գիլանը, Մավանդարանը և Գորգանը: Սակայն Եկատերինա 2-րդը գրավեց սպասողական դիրք, հավանաբար, սպասելով շահական գահի հավակնորդների միջև ծավալված պայքարի ելքին և XVIII դարի 20-ական թվականներին Պարսկաստանի և Թուրքիայի հետ իր հարաբերություններում ռուսական դիվանագիտության կողմից թույլ տված սխալների կրկնությունից խուսափելու համար: Մինևույն ժամանակ Մոսկովում էր գտնվում նաև շահական գահի մեկ այլ հավակնորդ՝ Աղա-Մոհամմեդ խանի կրթուսեր եղբայր, Գորգանի նահանգապետ Մորտեկա-Կուլի խանը: Բացառված չէ, որ Եկատերինա 2-րդը պոռնանում էր Անդրկովկասում պարսկական կողմնորոշման առաջացումից: Իսկ երբ Իսպահան էր ժամանել և Ալի-Մուրադ խանի հետ բանակցություններ էր վարում Ֆորյեր-Սովբեֆի ֆրանսիական միսիոն հակառուսական ֆրանս-թուրք-իրանական դաշինք կազմելու նպատակով, Եկատերինա 2-րդը միտքը փոխեց և Իսպահան ուղարկեց իր դեսպանին՝ գնդապետ Վ.Ս.Տոմարովին, որն Ալի-Մուրադ խանին այլևս կենդանի չգտավ: Վրացական թագավորության 1801թ. վերացման պատճառները, ըստ երևույթին, դեռևս լիովին լուսաբանված չեն: Թննարկված չէ, մասնավորապես, ֆեոդալական գերիշխանության հիմնահարցն Անդրկովկասում, որը առաջացել էր XVIII դարի վերջին Հերակլ 2-րդ թագավորի և Ղարաբաղի Իբրահիմ-Սալի խանի գլխավորությամբ մուսուլմանական դաշինքի միջև տեղի ունեցող պայքարի հետևանքով:

Հնարավոր է, որ վրացական պետության վերացման համար գոյություն ունեին այլ պատճառներ ևս, այդ թվում նաև այն, որ ցարիկը չէր կարող ցանկանալ ռուսաստանյան պետության մեջ ունենալ այլ պետական կազմավորումներ: Հենց այդ էլ կարող էր Ալի-Մուրադ խանի նախագծի նկատմամբ Եկատերինա 2-րդի բացասական վերաբերմունքի պատճառը հանդիսանալ:

Բացառված չէ նաև, որ կայսրուհին Հայկական պետություն ստեղծելու փոխարեն գերադասում էր երկրով մեկ ցիրուցան հայկական համայնք-

¹ Պարսամյան Վ.Ա., *Հայ ժողովրդի պատմություն, հ.3, եր., 1967, էջ 85:*

ները լայնորեն օգտագործել որպես հայկական առևտրի կենտրոններ: Ցարիկվը շահագրգռված էր հայ ժողովրդի տնտեսական հզորությունն իրացնելու մեջ: Փորձառու հայ վաճառականները և առևտրականները Ռուսաստանին անհրաժեշտ էին Հյուսիսային Կովկասում Մոզդոկյան գծի և Ռուսաստանին միացված շրջանների տնտեսական յուրացման համար: Ավելին, Եկատերինա 2-րդը օգտագործում էր հայ վաճառականներին ոչ միայն Կովկասի տնտեսական պարզացման համար, այլև Ղրիմի Գիբեյ խանին տնտեսապես թուլացնելու համար (Ռուսաստանին Ղրիմը միացնելու նախօրյակին) և այդ նպատակով 1778թ. Ղրիմ ուղարկեց հռչակավոր ռուս զորավար Ա.Վ.Սուվորովին, որը Ղրիմից 20 հազար հայեր վերաբնակեցրեց Գոնի Ռոստովում, այդ թվում նաև շատ հայ վաճառականներ, արհեստավորներ և երկրագործներ:

Անկախ այն բանից, որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Հայկական պետություն չստեղծվեց, իսկ Հայկական մարզը (Երևանի և Նախիջևանի հայկական նահանգների կազմով) պետական կառուցվածք չէր, այլ ցարիկվմի համար մեխանիզմ էր տարածաշրջանում նահանգավորման և համառուսաստանյան շուկային Արևելյան Հայաստանի միացման համար, պարսկական տիրապետության վերացումը Հայաստանում կարևոր նշանակություն ուներ հայ ժողովրդի հետագա ապատագրական պայքարում: Մինևույն ժամանակ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով XIX դարի սկզբին հայերի վանգվածային գաղթով դեպի Արևելյան Հայաստան, ինչպես նաև լուսավորության պարզացմամբ, ուսումնական հաստատությունների և Մոսկվայում Լազարյան ճեմարանի բացումով Արևելյան Հայաստանում ստեղծվում էր կենսականորեն անհրաժեշտ և կարևոր մի օջախ հայ ժողովրդի ապահովման համար:

* *
*

Պարսկական լծից Արևելյան Հայաստանի ապատագրումից հետո քննարկվող հիմնահարցի վերաբերյալ կուտակվել է մեծ չափով գիտական և պատմական գրականություն, պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի, Անդրկովկասում պարսկական լծի թոթափման և Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման հարցերի մասին: Համապատասխանաբար կուտակվել են բազմաթիվ տեսակետներ և գիտական ենթադրություններ, որոնցից շատերը սպասում են արմատական վերանայման և վերաիմաստավորման, իսկ մյուս մասը թեպետև պահպանում է իր արդիականությունը, կարիք է պահում ճշտումների և լրացումների:

Այդ բոլորը պայմանավորում է հիմնահարցի արդիականությունը:

Պատմագրության մեջ հիմնականում նոր տեսակետների քննադատական վերլուծության հիման վրա աշխատության մեջ ներկայացված է երկրորդ ռուս-պարսկական պատերազմի հետազոտումը և ըմբռնումը ռազմական, քաղաքական և միջպագային, հայ ժողովրդի և նրա ապատագրական շարժման ազգային շահերի, ինչպես նաև Հայաստանում պարսկական լծի դեմ հայ ժողովրդի պայքարի անցումային շրջանում հայ-ռուսական հարաբերությունների ըմբռնման տեսանկյուններից:

Աշխատության մեջ ներկայացված՝ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառների լուսաբանումը հեղինակին հնարավորություն ընձեռեց ոչ միայն տալ պատմագրության մեջ այդ պատերազմի պատճառների մասին հիմնական տեսակետների ծավալում վերլուծությունը պատերազմող կողմերի, այլև, գլխավորապես, հայ ժողովրդի և նրա ապատագրական շարժման շահերի տեսանկյունից:

Այդ հիմնահարցին այդպիսի մոտեցման անհրաժեշտությունը բնորոշվում է նրանով, որ մինչև վերջին ժամանակներս երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատմության ուսումնասիրությունը տարվում էր Անդրկովկասը նվաճողների՝ շահական Պարսկաստանի և ցարական Ռուսաստանի շահերի տեսանկյունից, չնայած նրանցից և ոչ մեկը ոչ մի իրավունք չունեին Անդրկովկասի վրա, որը պատկանում էր նրա հնագույն, գլխավորապես քրիստոնյա նախաբնիկներին և ոչ նվաճողներին:

Այդ հանգեցնում էր այն բանին, որ սկսեցին սխալ կերպով նույնացնել ցարիկվմի քաղաքականությունը և ժողովուրդների ապատագրական շարժումները: Իսկ երբ ցարիկվմն օգտագործեց Անդրկովկասի ժողովուրդների այդ շարժումը Պարսկաստանի դեմ իր պատերազմն Անդրկովկասի տարածքում վարելու համար իր իրավունքները հիմնավորելու նպատակով, իսկ փաստորեն XVIII դարի երկրորդ կեսից սկսած ստեղծում էր միայն պատրանք, ոյ այդ ժողովուրդներին պատրաստվում է տալ պետականություն և անկախություն, գործնականում անպայուցվեց, որ ցարիկվմը չի կարող թույլ տալ, որպեսզի Ռուսական պետության ներսում գոյություն ունենան նաև այլ պետականություններ: Այդ հիմնական նկատառումներով էլ հենց վերաբերված էր Անդրկովկասի միակ Վրացական պետությունը:

Ինչ վերաբերում է Պարսկաստանին, որը 1826թ. ներխուժեց Անդրկովկաս և Ռուսաստանի ու նրա դաշնակից զորքերի կողմից ետ շարվեց Արաքսից այն կողմ, ապա Անդրկովկասի նկատմամբ իրենց գլխավոր և միանգամայն ապօրինի նկրտումները պարսիկները հիմնավորում են թուրք-իրանական պատերազմի ընթացքում իրենց՝ որպես նվաճող-

ների վերապահված «իրավունքներով», համաձայն այդ պատերազմի ավարտից հետո 1555թ. կնքված Ամասիայի պայմանագրի, որն Անդրկովկասի ժողովուրդների համար ոչ մի ուժ չուներ, քանի որ նրանք երբեք այն չեն ճանաչել:

Հատկանշական է, որ Անդրկովկասի, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի նկատմամբ պարսկական իրավունքների մասին առասպելը հոդս ցնդեց Անդրկովկասի տարածքում թուրք-իրանական պատերազմների վերսկսումից անմիջապես հետո: Սկզբում թուրքական սուլթան Մահմուդ 3-րդը (1574-1595) գրավեց Հայաստանը և Վրաստանը, իսկ այնուհետև Շահ-Աբասը 1603 և 1607 թթ. ետ խլեց թուրքերի կողմից 1578-1590 թթ. գրավված տարածքները: 1616թ. Թուրքիան վերստին պատերազմ հայտարարեց Պարսկաստանին, թուրքական զորքերը վերստին ներխուժեցին Անդրկովկաս, սակայն ջախջախվեցին պարսիկների կողմից Սարդարապատում: Անդրկովկասի տարածքի նորանոր զավթումները պարսկական և թուրքական նվաճողների կողմից շարունակվում էին նաև XVIII դարում: 1723թ. թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս, սակայն ետ շարվեցին Նադիր շահ Աֆշարի պարսկական զորքերի կողմից:

Պարսկաստանի և Թուրքիայի միջև տեղի ունեցող պատերազմներն ապացույցում են, որ Անդրկովկասը երբեք չի պատկանել նրանցից և ոչ մեկին, և Անդրկովկասի նկատմամբ նրանք երբեք որևէ իրավունք չեն ունեցել:

Գեորգիսկի 1783թ. պայմանագիրը Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի հովանավորության մասին առաջացրեց հայկական անկախ պետականության վերաստեղծման մասին տենչող հայ ժողովրդի ապստաղրական շարժման վերելք, առավել ևս, որ այդ զուգադիպեց Եկատերինա 2-րդի այն ժամանակվա ծրագրերին՝ պարսկական և թուրքական սահմանների մոտ Ռուսաստանի հովանավորության ներքո պետությունների մի դաշինք ստեղծելու մասին, սակայն այդ ծրագրերն անիրագործելի էին Արևելյան Հայաստանում պարսկական զորքերի առկայության պատճառով, և անհրաժեշտ եղան XIX դարի սկզբին երկու ռուս-պարսկական պատերազմներ՝ Ռուսաստանի կողմից ամբողջ Անդրկովկասի գրավման և պարսկական տիրապետությունից այդ տարածքի ժողովուրդների ապստաղրման համար: Վերն արդեն նշվել է, որ Հայկական պետության ստեղծման մասին իրականությունից և ցարիզմի քաղաքականությունից կտրված բազում ծրագրերի կողքին նախքան ռուս-պարսկական պատերազմները Հայկական պետության ստեղծման միակ հավանականությունը 1784թ. էր, երբ շահական գահի հավակնորդ Ալի-Մուրադ խանը

անհաջող փորձեր էր անում Եկատերինա 2-րդի կողմից իր իրավունքների ճանաչմանը հասնելու և թուրքական ագրեսիայի դեպքում Ռուսաստանի կողմից Պարսկաստանին օգնություն ցույց տալու համար, իսկ որպես փոխհատուցում առաջարկում էր ստեղծել Հայկական պետություն Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և Ղարադաղի կազմով, սակայն կայսրուհին Ռեշտում ռուսական հյուպատոսին հանդիմանեց այդ հարցում ցուցաբերած նախաձեռնության համար, իսկ բանակցությունները Ալի-Մուրադ խանի հետ այնքան չգոչեց, մինչև նա մահացավ 1785թ.:

Պրոֆ. Վ.Ա.Գիլոյանը գտնում է, որ «արտաքին մեծ տերության շեղում փրկությանը պասիվորեն սպասելը կարող էր մեկընդմիջտ թաղել հայկական պետականության վերականգնման բաղձալի նպատակը: Այդ պատճառով հայկական պետականության վերականգնման համար գործունեություն ծավալած գործիչները այդ նպատակի իրականացման համար առաջնությունը տալիս էին ապստամբական շարժմանը, իսկ արտաքին օգնությունը դիտում էին որպես լրացուցիչ կարևոր բաղադրամաս, որը կարող էր դառնալ հաջողության իրական երաշխիքը»¹:

Չնայած այն բանին, որ այդ հայեցակետը ժամանակի տեսանկյունից վերաբերում է, հիմնականում, ռուս-պարսկական պատերազմներին նախորդող ժամանակաշրջանին, լիակատար հիմունքով կարելի է պնդել, որ պարսկական զորքերի քանակական քայքայից գերակշռության պայմաններում հայ ժողովրդի ոչ մի ապստամբական շարժում չէր հասնի իր նպատակին և ջախջախված կլիներ առանց ռուսական զորքերի մասնակցության, եթե նույնիսկ նրանք հանդիսանային «լրացուցիչ կարևոր բաղադրամաս»: Յարիզմ ուներ Անդրկովկասի նվաճման իր ծրագրերը և առանց այդ լրացուցիչ բաղադրամասերի: Հատկանշական է, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմում ցարիզմը թույլատրեց ոչ ավելի, քան երեք հայկական դրուժինաների կազմավորում, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր մոտ 100 հոգուց, չհաշված նրանց միացած հայ կազմավորներին:

Չնայած այն բանին, որ ռուս-պարսկական պատերազմներն ամբողջությամբ վերջրած ունեին դրական նշանակություն հայ ապստաղրական շարժման համար, 1812թ. Հայրենական պատերազմի ավերիչ հետևանքները և նրա հետ կապված Գլուխստանի 1813թ. դաշնագրի կնքման անհրաժեշտությունը հայ ժողովրդին դրեցին նրա հերթական տրոհման փաստի առջև, քանզի Գլուխստանի դաշնագրով Պարսկաստանի կազմում թողնվեցին Երևանի, Նախիջևանի, Ղարադաղի հայկական նահանգներ:

¹ Գիլոյան Վ.Ա., *Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 335:*

րը և հայ ժողովրդի համաշխարհային կրոնական կենտրոն Էջմիածինը: Ավելին, Արցախը և Հայաստանի հյուսիսային շրջանները նույնպես կտրվեցին Արևելյան Հայաստանի մնացած մասից:

Թուրքմենչայի 1828թ. հաշտության պայմանագիրը վերամիավորեց Արևելյան Հայաստանը, և այդ պատճառով այն ցնծությամբ ընդունվեց ամբողջ հայ ժողովրդի կողմից:

Հայ ժողովրդի պետականության չգտման կողքին կար նաև մեկ այլ, ոչ պակաս կարևոր հիմնահարց, որը վրիպել էր հայ հասարակական գործիչների տեսադաշտից:

1826-1828 թթ. երկրորդ ռուս-պարսկական պատերազմը և Թուրքմենչայի հաշտությունը լուծեցին հայ ժողովրդի նաև մյուս համապային խնդիրը՝ ազգի գոյատևման և ապագայում հայ ժողովրդի անկախության չեղքերման խնդիրը:

Դարերի ընթացքում Արարատյան հարթավայրը ենթարկվում էր քաղաքիվ օտարերկրյա արշավանքների և ավերածությունների: Բազմա-հազար հայության բնաջնջման և հարկադրական տեղահանման հետևանքով այդ տարածքի հիմնական բնակիչների՝ հայերի թիվը XIX դարի առաջին քառորդի վերջերին բավականաչափ նվազել էր:

Կարելի է միայն վարմանալ, որ Հայկական պետության ստեղծման նախագծերի հեղինակները բոլորովին հաշվի չէին առնում այդ աղետալի հանգամանքները: Արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու և մյուս հայ գործիչների համար ակնբեր էր, որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին հայերի մասնակցությամբ միայն, իսկ Պարսկստանի և Թուրքիայի դեմ պատերազմներում Ռուսաստանի տարած հաղթանակից հետո Պարսկաստանից և Թուրքիայից հայերի արտագաղթով հայրենիք՝ պետք է քաղվեին իրական հեռանկարներ Արևելյան Հայաստանում հայերի ազգահավաքման կենտրոն ստեղծելու համար: Երկու տարվա ընթացքում (1828-1830) Արևելյան Հայաստանի հայ բնակչությունն ավելացավ համարյա 130 հազարով:

Հայկական մարզի օգնությամբ Արևելյան Հայաստանը ներգրավվում էր համառուսաստանյան շուկա, հայ վաճառականության գործունեությունն ստացավ հզոր խթան, լայնորեն ծավալվեց լուսավորական շարժումը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ուսումնասիրությունը պատմագիտության մեջ աննախադեպ է իր ընդգրկմամբ: Մոսկվայի,

Ս.Պետերբուրգի, Թբիլիսիի և Երևանի պետական պատմական արխիվները պահպանել են հազարավոր փաստաթղթեր այդ պատերազմի վերաբերյալ, հրամանագրերի բնագրեր և պատճեններ, պորբերի հրամանատարության կողմից կազմված պատերազմական գործողությունների մատյաններ, հրատարակվել են պատերազմի մասնակիցների հուշերը և օրագրերը: Կուտակված են հսկայական քանակով նյութեր այդ պատերազմի հանդեպ Անդրկովկասի ժողովուրդների ունեցած վերաբերմունքի ու ռուսական պորբերի պատերազմական գործողություններին նրանց մասնակցության մասին:

Վերոհիշյալ ժամանակաշրջանի, մասնավորապես 1804-1813 և 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմների նկատմամբ պատմաբանների հետաքրքրությունը գնալով աճում է, և դա հասկանալի է:

Հայ ժողովրդի ազգային-պատագրական պարթոնքի ֆունի վրա ռուս-պարսկական պատերազմների պատմությունը, մասնավորապես երկրորդ պատերազմի պատմությունը խիստ արդիական հնչեղություն է ստանում: Պատահական չէ, որ այդ կապակցությամբ հրատարակված են արխիվային նյութերի տասնյակ ժողովածուներ, հրատարակված են ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության փաստաթղթերը:

Բավականին ուսանելի և անսովոր է պատերազմի պատմության ուսումնասիրության կազմակերպման փորձն իսկ:

Բարձր մակարդակով ծավալված այդ աշխատանքը տարվում էր քաղաքիվ ուղղություններով: Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի կոնկրետ խնդիրների ուսումնասիրման կենտրոններից էր Կովկասյան հնագիտական հանձնաժողովը Ա.Պ.Բերժեի ղեկավարությամբ, որը կոորդինացնում էր պատերազմի փորձի ընդհանրացման և վերլուծության վերաբերյալ տարվող ամբողջ գործունեությունը:

Այդ հանձնաժողովին, որն իր աշխատանքներն սկսել էր 1864թ. մարտի 11-ին, հանձնարարված էր մշակման ենթարկել կովկասյան և անդրկովկասյան գլխավոր արխիվների նյութերը, հրապարակել առանձին պրակներով պատմական և գիտական հետաքրքրություն ներկայացնող կարևորագույն պատմական փաստաթղթերը:

Հրատարակված են հսկայական ծավալի ընդամենը 12 հատորներ: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի վերաբերյալ նյութերն ամփոփված են 6-րդ և 7-րդ հատորներում: 6-րդ հատորը բաղկացած է երկու մասից և լուսաբանում է Անդրկովկասում գեներալ Ա.Պ.Մրմուլովի կառավարչության ժամանակաշրջանը (1816-1827, Թիֆլիս, 1874, 875 էջ), իսկ 7-րդ հատորը՝ գեներալ Ի.Ֆ.Պասկևիչի կառավարչության ժամանակաշրջանը (1827-1831, Թիֆլիս, 994 էջ):

1876թ. սկսած մինչև 1908թ. Կովկասյան սինվորական օկրուգի շտաբը Թիֆլիսում հրատարակեց «Կավկասկի սբորնիկ»-ի 27 հատորները, որոնցից 1900թ. լույս տեսած 21-րդ հատորն ամբողջությամբ նվիրված է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմությանը:

Նրկրորդ ռուս-պարսկական պատերազմի ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության դիվանագիտական փաստաթղթերի հրատարակումը՝ «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին» վերնագրով:

Առաջին ութ հատորները (առաջին շարքի) ընդգրկում են 1801-1815 թթ. և պարունակում են հիմնականում 1804-1813 թթ. առաջին ռուս-պարսկական պատերազմի վերաբերյալ վավերագրեր:

Նրկրորդ շարքի 6-րդ հատորում (մինչ այժմ հրատարակված 14 հատորներից) լուսաբանվում են 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի դիվանագիտական հարցեր՝ կապված մեծ մասամբ այդ պատերազմի պատճառների և սկզբի հետ:

Աշխատության մեջ քննադատության է ենթարկվում Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության կողմից հրատարակված ժողովածուի երկրորդ շարքի 6-րդ հատորում ներառված «Ռուսաստանյան կառավարության կողմից Պարսկաստանին 1826թ. սեպտեմբերի 16/28-ի պատերազմ հայտարարելու մասին հռչակագրում» սահմանային վեճերը որպես պատերազմի պատճառներ ընդունելու ցարական մեկնակերպը: Նշվում է, մասնավորապես, որ 1827թ. սկզբից 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի երրորդ փուլը, զավթողական՝ ցարիզմի և պատագրական՝ հայ ժողովրդի համար, քանի որ այդ պատերազմի հետևանքով Սրևանի և Նախիջևանի խանություններն ապստաբրվեցին պարսկական լծից և միավորվեցին Արևելյան Հայաստանի մյուս մասի հետ, իսկ նրանց հիմքի վրա կազմվեց Հայկական մարզը¹:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը հրատարակել է «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» վերնագրով փաստաթղթերի մեծածավալ երկհատոր ժողովածուն²: Առաջին հատորը նվիրված է առաջին ռուս-պարսկական պատերազմին, իսկ երկրորդ հատորը՝ երկրորդ պատերազմին: Մենք լայնորեն օգտագործել ենք այդ ժողովածուի երկրորդ հատորի վավերագրերը:

¹ Кюркчян А.А., Русско-иранская война 1826-1828. Новые концепции современной историографии, изд. АН Армении, Ер., 1991, с.35.

² "Присоединение Восточной Армении к России", Сборники документов под ред. ак. Ц.П.Агабяна, т. 1(1801-1813), Ереван, 1972; т.2 (1814-1830), Ер., 1978.

Ռուս-պարսկական պատերազմների պատմության ուսումնասիրության մեջ ծանրակշիռ ներդրում ունեցան XIX դարի ռուս պատմաբանները՝ ակադ. Ն.Ֆ.Գուբրովինը՝ «Կովկասում ռուսների տիրապետության և պատերազմի մասին»¹ բավաճառոր հրատարակության հեղինակը և գեներալ Վ.Ա. Պոտտոնը՝ «Կովկասյան պատերազմը առանձին ակնարկներով, իրադարձություններով, լեգենդներով և կենսագրականներով» աշխատության հեղինակը²: Լայնորեն օգտագործվել է նաև Շչերբատովի մեծարժեք աշխատությունը³:

Պատմագիտության մեջ մեծ և արդյունավետ աշխատանք է կատարվել ռազմապատմական վավերագրերի հավաքման, մշակման և հրատարակման գործում: Պատմաբանների տրամադրության տակ է գտնվում, բացի պետական պատմական արխիվներում պահպանվող վավերագրերից, ընդարձակ փաստական նյութ, որի ուսումնասիրությունը չի կորցրել իր արդիականությունը:

Ռուս հետ մեկտեղ շատ հարյուր դեռևս լուսաբանման կարիք են պոլում պատմագրության վարձապետ ժամանակակից մակարդակի և, որ գլխավորն է, հրապարակայնության տեսանկյունից:

4897
Ստեղծագործական նոր իմաստավորում է պահանջում ոչ միայն կուտակված փաստագրական նյութը: Խորը հիմնավորված քննադատական վերլուծության կարիք են պոլում ոչ միայն XIX դարի պատմաբանների, այլև խորհրդային պատմաբանների տեսակետները: Հատուկ նշանակություն են չեռք բերում ժամանակակից խորհրդային և արտասահմանյան պատմագրության նոր տեսակետները: Միանգամայն ակներև է, որ այդ բանի համար անհրաժեշտ էր վերականգնել և արխիվային և այլ տվյալներով ճշգրտել 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ռազմական գործողությունները, նրա քաղաքական և դիվանագիտական պատմությունը, վճռականորեն հրաժարվելով դրանց գաղափարայնացման վրա հիմնված հնացած մեթոդաբանական չափանիշներից: Այսօր, ըստ էության, բացակայում են այդ հարյուր նվիրված նոր լուրջ պատմագրական և պատմական հետազոտությունները: Այդ կապակցությամբ մենք չգտում ենք բացահայտել հետագա գիտական որոնումների առավել արդիական ուղղությունները և առավել կարևոր տեսանկյունները: Միանգամայն ակնբախ է նաև, որ չի կարելի սահմանափակվել լոկ կուտակած աղբյուրագիտական նյութերի և պատերազմի պատմագրության հիմնա-

¹ Дубровин Н.Ф., История войны и владычества русских на Кавказе, т.111-112, СПб. 1886.

² Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, изд. 2-е, т.2, Персидская война 1826-1828гг., СПб., 1886.

³ Шербаатов. Генерал-фельдмаршал князь Паскевич. т.2, - СПб., 1890.

կան ուղղությունների վերլուծությամբ: Մեկ այլ, նույնքան կենտրոնական հարց է նաև 1826-1828թթ. պատերազմի հետապոստությունն ամբողջությամբ վերցրած, այլապես անհրաժեշտ հիմքեր չեն լինի արդի պատմագրության նորագույն հայեցակարգերի քննադատական վերլուծության համար:

* * *

Մենագրության փաստագրական հիմքը կազմել են պետական պատմական արխիվների վավերագրերը:

Մոսկվայի Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում (ЦГВИА) օգտագործվել են Գլխավոր շտաբի Ռազմագիտական արխիվի (ВУА) ֆոնդերը և Ռազմագիտական արխիվի «Պարսկաստան» (446-րդ ֆոնդի) հավաքածուն: Ս.Պետերբուրգի Կենտրոնական պետական պատմական արխիվում (ЦГИАЛ) օգտագործվել են 1018-րդ («Պասկևիչ Էրիվանսկի»), 560-րդ և 1329-րդ ֆոնդերը:

Ս.Պետերբուրգում ռազմածովային նավատորմի կենտրոնական պետական արխիվում (ЦГА ВМФ) օգտագործվել են «Ա.Ս.Մենշիկով» և «Պարսկական բաժին» ֆոնդերը:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (АВПР) ծանոթացել ենք արտաքին գործոց նախարարության ֆոնդին, 1826-1827թթ. ժամանակաշրջանի գրասենյակի ֆոնդին, գլխավորապես, «Լոնդոնից դեսպան Լիվենի հաղորդագրություններին» (արխիվի ֆրանսերեն լեզվի թարգմանիչների բյուրոյի օգնությամբ):

Մ.Սաշտոյի անվան հին շեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում, օգտագործվել է «Դիվան կաթողիկոսի Ներսես Աշտարակեցու» հարուստ ֆոնդը: Այդ դիվանի վավերագրերը, այնպես, ինչպես Յա. Գ. Լապարևի շեռագրերի պատճենները՝ «Հայերի ծառայությունները 1826-1827թթ. ժամանակաշրջանում» վերնագրով, որոնց բնագրերը գտնվում են Հայաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՀԿՊՊԱ ֆ.42), երեք հայկական ռազմական կազմավորումների և ողջ հայ ժողովրդի մասսայական հերոսության տարեգրությունն են ռուս-պարսկական պատերազմների տարիներին:

Վրաստանի Կենտրոնական պետական արխիվում ծանոթացել և մասամբ օգտագործել ենք հետևյալ ֆոնդերի վավերագրերը. 11-րդ՝ «Կովկասի փոխարքայի դիվանագիտական գրասենյակի» ֆոնդը՝ բաղկացած է փաստաթղթերի 4045 թղթապանակներից, 548-րդ՝ «Կովկասյան

բանակի Գլխավոր շտաբի Ռազմական բաժին», 1087-րդ՝ «Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի Ռազմա-պատմական բաժին» ֆոնդերը:

Ա.Ս.Մենշիկովի դիվանագիտական միսիայի հիմնական արխիվային նյութերը պահպանվում են Ս.Պետերբուրգի ЦГВМФ-ում: Այդ նյութերը գտնվում են Ռազմածովային նավատորմի արխիվում այն պատճառով, որ պարսկական անհաջող միսիայից հետո Ա.Ս.Մենշիկովը 1829թ. նշանակվեց ծովային Գլխավոր շտաբի պետ: Այդ արխիվի «Ա.Ս.Մենշիկով» ֆոնդում մեր կողմից օգտագործվել է Թավրիպում ռուսաստանյան գործերի հավատարմատար Սեմյոն Մապարովիչի վեկույագիրը «Պարսկական կամպանիայի պլանը» վերնագրով, որում մեծ ուշադրություն է նվիրված պարսկական հարձակման անակնկալության հանգամանքին, պարսկական զորքերի թվական գերակշռության հմուտ օգտագործմանը, ինչպես նաև պարսկական զորքերի կողմից մերձկասպյան մուսուլմանական շրջաններում հակառուսական խռովությունների տարածման հարցերին¹:

Մեր կողմից ուսումնասիրված է «Մենշիկովին Պարսկաստան գործուղելու մասին» գործը ВУА ЦГВИА -ի ֆոնդից²: ЦГА ВМФ -ի 19-րդ ֆոնդից («Պարսկական բաժին») օգտագործվել են 444-րդ գործը («Սահմանային վեճ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև») ³, 453-րդ գործը («Մենշիկովի դեսպանատանը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տեղի ունեցած վեճի մասին») ⁴, 455-րդ թղթապանակը («Մենշիկովի նամակագրությունը շահի, գահաժառանգի և բարձր աստիճանավորների հետ») ⁵:

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմը սկսվեց Արևելյան Հայաստանում: Վրաստանի ЦГИА-ի արխիվային վավերագրերը հաստատում են Հասան խանի (Երևանի Սարդարի եղբոր) բարբարոսությունները, որը թալանի և հրի էր մատնել հայկական գյուղերը Գյումրիի ճանապարհին և գերել էր հարյուրավոր հայ ընտանիքներ⁶:

Արաւ-Միրզայի զորքերի Ղարաբաղյան ուղղությամբ պատերազմական գործողությունների և Շուշիի պաշարման պատմության վերլուծության համար օգտագործվել են ЦГВИА-ի վավերագրերը⁷: ВУА-ի ֆոնդի հիման վրա ներկայացված են Շամխորի շրջանում գեներալ

¹ЦГА ВМФ, ф. "А.С. Меншиков", д.25, л.12, 12об.

²ЦГВИА, ф. ВУА, д. 4293.

³ЦГА ВМФ, ф.19, д.444.

⁴Նույն տեղում, վավ. 453:

⁵Նույն տեղում, վավ. 455:

⁶ЦГИА Грузии, ф. 1087, оп.1, д.429, л. 5об.

⁷ЦГВИА, ф.ВУА, д.4290.

Մադաթովի հակահարձակման նախապատրաստությունները¹, իսկ 1087-րդ ֆոնդից օգտագործվել են ռուսական զորքերի կողմից Փանչակի տակ տեղի ունեցած պատերազմական գործողությունների մասին նյութերը²:

Ռուսական զորքերի՝ 1826թ. հակահարձակումն ակտիվացրեց անգլիական դիվանագետների գործունեությունը:

АВПР-ի նյութերի հիման վրա աշխատության մեջ ներկայացված են Ջ. Կաննինգի ապարդյուն փորձերը Լոնդոնում ռուսական դեսպան Զ.Լ.Իվենի հետ բանակցությունների ընթացքում հասնելու Անգլիայի մասնակցությանը՝ հաշտության մասին ռուս-պարսկական բանակցությունների³:

Գեներալ Մադաթովի զորարշավը 1826թ. դեկտեմբեր-1827թ. հունվար ժամանակաշրջանում ներկայացվում է ЦГВИА-ի արխիվային նյութերի հիման վրա⁴: Գեներալ Մադաթովի այդ զորարշավը վկայեց մասնավորապես այն մասին, որ 1827թ. պատերազմական կամպանիայի վերաբերյալ Գլխավոր շտաբի և գեներալ Սրմոլովի նախագծերի հետ միասին իրական կերպով գոյություն ուներ նաև ռուսական զորքերի թավրիկյան չմեռային գործողության մադաթովյան նախագիծը: Այդ չմեռային գործողության իրագործմամբ պատերազմը կարող էր ավարտվել դեռևս 1827թ. սկզբին: Այդ կապակցությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թավրիկում շերբակաված տիտուլյար խորհրդական Նոսկովի հաղորդագրությունները օրհաս ապրող Թավրիկի իրադրության մասին՝ մադաթովյան զորաջոկատի մոտենալու ժամանակ⁵, ինչպես նաև Նիկոլայ 1-ին հղած Սրմոլովի պեկուցագրերը մադաթովյան զորարշավի հետևանքով Կաջարներին և անգլիական դիվանագետներին համակած խուճապի մասին⁶:

Վրաստանի ЦГИА-ում մենք օգտվել ենք 1827թ. պատերազմաշրջանի պլանի նախագծերի, Գլխավոր շտաբի պետ Գիբիչի, Սրմոլովի և Պասկևիչի միջև տեղի ունեցող գաղտնի պայքարի և գեներալ Սրմոլովին 1827թ. մարտի 27-ին Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարությունից պաշտոնապրկելու մասին արխիվային ֆոնդերից⁷, ինչպես նաև արքայադեսպանների, այդ թվում և գվարդիայի Հավաքական գնդի, որը կազմավորված էր բռնակալության դեմ Սենատի հրապարակում 1825թ. դեկտեմբերի 14-ին ելույթ ունեցած լեյք-գվարդիայի Սեմյոնովյան,

¹ЦГВИА, ф. ВУА, д. 4294.

²ЦГВИА, ф. 1087, оп. 1, д. 429, лл. 4, 15, 15об.

³АВПР, ф. МИД, отд. Канцелярия, 1826, дд. 6956, 6958.

⁴ЦГВИА, ф. ВУА, д. 4315, л. 29.

⁵ЦГВИА, ф. ВУА, д. 4315, л. 26-38 (“Копия записки поручика Носкова, находившегося в Тебризе до 1 февраля 1827г.”).

⁶ЦГВИА, ф. 446, д. 3, л. 5об. -10.

⁷ЦГИА Грузии, ф. 1087, оп. 1, д. 429, л. 20об.

Գրենադերական և Մոսկովյան գնդերից, 38 նախկին սպաների և 1282 շարքայինների¹ կազմով, իսկ 1826թ. սեպտեմբեր-հոկտեմբերին նաև Թիֆլիս ժամանած Չերնիգովյան գնդի ապստամբության 1527 մասնակիցների² մասին արխիվային նյութերից:

1827թ. պատերազմաշրջանի նկարագրման համար օգտագործել ենք արխիվային հետևյալ նյութերը. «1826-1828թթ. պարսկական պատերազմի պատերազմական գործողությունների մատյանը»³ գնդապետ Ավերյանովի «1826-1828թթ. պարսկական պատերազմը»⁴ չեռագիրը, գնդապետ Էնգոլմի հեղինակությամբ «Պարսկաստանի ռազմա-քաղաքական պատմության»⁵ ակնարկը, «Պասկևիչի կողմից անչամբ լրացված ռազմական գործողությունների մատյանը»⁶:

Մեծ ուշադրության է արժանի Բուտուրլինի «Պարսկական պատերազմը» 1533 էջից բաղկացած արժեքավոր աշխատությունը, որի 378 էջը գրված է ռուսերենով, իսկ 1155 էջը՝ ֆրանսերենով⁷:

Պետական արխիվներում պահվում են Դեհկարհանի հաշտության բանակցությունների և Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքման մասին հարուստ արխիվային նյութեր: Առավելագույն արժեք են ներկայացնում, մեր կարծիքով, 306 էջից բաղկացած «Հաշտության բանակցությունների և Պարսկաստանի հետ 1828թ. հաշտություն կնքելու մասին գեմ. ադ. Պասկևիչի հաղորդագրությունները»⁸: «Հաղորդագրություններից» մեկում լուսաբանվում է Ա.Ս.Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը, ինչպես նաև կապիտան Վոլյուովսկու գործունեությունը Թեհրանում: Պարսիկները չգճգում էին բանակցությունները՝ սպասելով ռուս-թուրքական պատերազմի սկսվելուն, շահավետ հաշտություն կնքելու կամ Թուրքիայի հետ դաշնակցած՝ պատերազմը շարունակելու նպատակով, իսկ Պասկևիչն իր հերթին բանակցություններն ավարտելու և հաշտություն կնքելու համար հրամայեց իր զորքերին գրավել Թավրիկը:

Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքման մասին այլ արխիվային նյութերը մեր կողմից օգտագործվել են Վրաստանի ЦГИА-ում, 11-րդ ֆոնդը («Կովկասի փոխարքայի դիվանագիտական

¹ЦГИА Грузии, ф. 548, оп. 1, д. 77, л. 451-452.

²ЦГВИА, ф. ВУА, д. 4288, л. 5.

³ЦГВИА, ф. ВУА, д. 4294.

⁴ЦГИА Грузии, ф. 1087, оп. 1, д. 429.

⁵ЦГВИА, ф. 446, д. 56438.

⁶ЦГИАЛ, ф. 108, д. 98.

⁷ЦГИАЛ, ф. 108 (“Паскевич-Эриванский”), д. 76, 8081.

⁸ЦГВИА, ф. ВУА, д. 4329.

գրասենյակը»): «Թուրքմենչայում Պարսկաստանի հետ Ռուսաստանի կողմից հաշտություն կնքելու մասին» թղթապանակը¹, իսկ ЦГИАЛ-ի («Պասկևիչ-Էրիվանսկի») 1018-րդ ֆոնդից օգտագործվել են «Մի քանի փաստաթղթեր և Վեկույագրեր, որոնք կարող են ծառայել որպես աղբյուր Պարսկաստանում 1827թ. տեղի ունեցած դիվանագիտական բանակցությունների վերաբերյալ»²:

Թուրքմենչայի 1828թ. պայմանագրի կնքումից հետո հայ ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցավ Սենատում Նիկոլայ 1-ինի ելույթը Պարսկաստանի հետ հաշտության և Երևանի ու Նախիջևանի խանությունների կազմով Հայկական մարզի ստեղծման մասին: Սենատում ցարի այդ ելույթի տեքստը գտնվում է ЦГИАЛ-ում³, ուր կան պատերազմի վերաբերյալ արժեքավոր նյութեր: Նյութի ուսումնասիրության առումով խիստ արժեքավոր է Հայաստանի գլխավոր արխիվային վարչության «Ռուս-հայկական համագործակցությունը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում 1826-1828թթ.» փաստաթղթերի ժողովածուն⁴:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու հարցը մանրամասն լուսաբանված է «Հայ ժողովրդի պատմության»⁵ հինգերորդ հատորում:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմագրության արդիական հարցերը ուսումնասիրված են Վ.Ս.Գիլոյանի, Հ.Մ.Ղապարյանի, Գ.Ա.Սուրադյանի «Պատմագրական ակնարկ Հայաստանի նորագույն պատմության»⁶, Ն.Բ.Սարոյանյանի «Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ»⁷, Բ.Պ.Բալայանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին ժամանակակից պարսկական պատմագրության գնահատմամբ»⁸ և «Ա.Ս.Գրիբոյեդովի սպանության պատմության նենգափոխումը ժամանակակից

պարսկական պատմագրության մեջ»¹, Ա.Հ.Զյուրքչյանի «1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը: Ժամանակակից պատմագրության նոր կոնցեպցիաներ»² գործերում:

Աշխատության մեջ տրված է Մ.Ն.Պոկրովսկու պատմական հայեցակարգի սկզբունքային գնահատականը, որն էական աղբյուրություն էր ունեցել հայ և ռուս պատմաբանների ամբողջ մի սերնդի վրա (պրոֆ. Լեո և ուրիշներ), քննադատության են ենթարկվում Մ.Ն.Պոկրովսկու «Ցարական Ռուսաստանի դիվանագիտությունը և պատերազմները 19-րդ դարում»³ ուսումնասիրության մեջ շարադրված հիմնական հայեցակարգերը, բերվում է Մ.Ն. Պոկրովսկու բնութագիրը՝ տրված Ն.Ս.Կինյանյանի «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի առաջին կեսին»⁴ գրքում:

Հայկական ապատագրական շարժումը և հայ ապատագրական մտքի պատմությունը ուսումնասիրված են Ա.Գ.Հովհաննիսյանի «Ուրվագծեր հայ ապատագրական մտքի պատմության»⁵, Վ.Կ.Ոսկանյանի «Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման առաջացման պրոբլեմը խորհրդային պատմագրության մեջ»⁶, Գ.Ա.Գալոյանի «Ռեմոկրատական մտքի դերը Անդրկովկասի ժողովուրդների ռուսական կողմնորոշման ամրապնդման մեջ»⁷, Ա.Ռ.Հովհաննիսյանի «Ռուսաստանը և հայ ապատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին»⁸, Ի.Լ.Սնիսյանի «Հայերի և հայ ապատագրական շարժման ռուսական կողմնորոշման որոշ հարցեր Լեոյի աշխատություններում»⁹, Խ.Ն.Սոմջյանի «Հայ ժողովրդի հասա-

¹Балаян Б.П., Фальсификация истории гибели А.С.Грибоедова в современной иранской историографии. - "Историко-филол. жур". АН Армении, 1962, N:2 (17), с. 118-129.

²Кюркчян А.А., Русско-иранская война 1826-1828. Новые концепции современной историографии, Ер., 1991.

³Покровский М.Н., Дипломатия и войны царской России в XIX столетии, М., 1923.

⁴Киняпина Н.С., Внешняя политика России первой половины XIX в., М., изд. "Высшая школа", 1963, с.23-150.

⁵Иоаннисян А.Г., Очерки истории армянской освободительной мысли, Ер., 1955 (Автореферат докторской диссертации).

⁶Восканян В.К., Проблема возникновения русской ориентации армянского народа в советской историографии. - "Известия" АН Армении (Общ. науки), 1958, N:4, с. 29-50.

⁷Галоян Г.А., Роль демократической мысли в укреплении русской ориентации народов Закавказья, "Историко-филол. жур." АН Армении, 1976, N:3, с. 19-38.

⁸Иоаннисян А.Р., Россия и армянское освободительное движение в 80-х гг. XVIII столетия, Ер., 1947, Его же Иосиф Эмин, Ер., 1945.

⁹Сихчян И.Л., Некоторые вопросы русской ориентации армян и армянского освободительного движения в трудах Лео, Ер., 1967 (Автореферат кандидатской диссертации).

¹ЦГИА Грузии, ф.11 ("Дипломатическая канцелярия наместника Кавказа"), д. 11.

²ЦГИАЛ, ф.1018, 423.

³ЦГИАЛ, ф. 1329, д.452.

⁴Ռուս-հայկական համագործակցությունը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում 1826-1828թթ. «Բաների Հայաստանի արխիվների», Երևան, 1978թ. հծ.2(51):

⁵Հայ ժողովրդի պատմություն, հ.5, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ. 1974, էջ 113-197:

⁶Галоян В.А., Казарян Г.М., Мурадян Д.А., Историкографический очерк новой истории Армении, "Вестник общественных наук" АН Армении, 1967, N:3.

⁷Саруханян Н.Б., Проблема присоединения Восточной Армении к России в дореволюционной историографии.

⁸Балаян Б.П., Присоединения Закавказья к России в освещении современной иранской историографии. В кн. "Краткие сообщения Института народов Азии АН СССР", М., изд. "Восточная литература", т.73, 1963, с.192-197.

րակական մտքի պարզացման վրա 19-րդ դարի Ռուսաստանի առաջավոր գաղափարների ունեցած ազդեցության մասին»¹ աշխատություններում:

Հայ պատմաբանների այդ և նման հետազոտությունների մեծ մասը հաստատում է, որ հայ և ռուս ժողովուրդների պատագրական շարժումը հիմք էր ծառայում այդ ժողովուրդների մերձեցման համար:

Հայ-ռուսական հարաբերություններին և հայերի մասնակցությանը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին նվիրված են Մ.Գ. Ներսիսյանի², Չ.Տ.Գրիգորյանի³, Վ.Ա. Դիլոյանի⁴, Ն.Ս. Թավաքալյանի⁵, Գ.Ա.Գալոյանի⁶, Վ.Բ. Բարխուդարյանի, Վ.Կ. Ոսկանյանի⁷, Վ.Ա. Պարսամյանի, Շ.Ռ. Հարությունյանի⁸ ուսումնասիրությունները և հոդվածները՝ ընդգրկված ԵՊՀ կողմից հրատարակված գիտական ժողովածուի մեջ՝ նվիրված Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակին⁹:

¹Момджян Х.Н., О влиянии передовых идей России XIX века на развитие общественной мысли армянского народа. - "Труды Объединенной научной сессии АН СССР и Академий наук Закавказских республик по общественным наукам (29 марта - 2 апр. 1954 г.)", Баку, 1957, с. 416-428.

²Ներսիսյան Մ.Գ., Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից, հ.1, Երևան, 1956, հ.2, Երևան, 1961 (ռու.), Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, Освобождение Еревана от ханского ига, Ист. - фил. ж. АН Арм., 1977, №3; Материалы по новой истории Армении, там же, 1959, №4.

³Գրիգորյան Չ.Տ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957, Присоединение Восточной Армении к России в начале XIX в., М., 1959; Участие армян в русско-персидских войнах начала XIX в., "Вопросы истории", 1951, №4.

⁴Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:

⁵Тавакалян Н.А., Русско-армянские отношения в период русско-иранской войны 1826-1828 гг., М., 1950 (автореферат канд. дис.), Роль армянского народа в русско-персидской войне 1826-1828 гг. - "Уч. записки Грозненского гос. пед. ин-та", №9, вып. 6, 2, 1956.

⁶Галоян Г.А., Россия и народы Закавказья. Очерки политической истории их взаимоотношений с древних времен до победы Великой Октябрьской социалистической революции, М., 1976.

⁷Բարխուդարյան Վ.Բ. և Ոսկանյան Վ.Կ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978:

⁸Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Շ.Ռ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1878թթ.), Երևան, 1979:

⁹Присоединение Восточной Армении к России, сб. статей, ЕГУ, 1978, ЗІІ с.

ՊԼՈՒՄ ԱՌԱՅԻՆ

1826-1828թթ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՆՈՒՆԵՐԸ

1. Ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության պաշտոնական տեսակետը սահմանային վեճերը որպես պատերազմի պատճառներ դիտելու մասին

Ցարական կառավարության հռչակագիրը Պարսկաստանին պատերազմ հայտարարելու մասին հրապարակվեց 1826թ. սեպտեմբերի 16-ին (28-ին)¹: Պատերազմ հայտարարելու ուշացումը կապված էր այն բանի հետ, որ Պարսկաստանը, առաջինն սկսելով պատերազմը, 50 օրվա ընթացքում ռազմական գործողություններ էր վարում Անդրկովկասում՝ առանց պատերազմ հայտարարելու, հաշվի չառնելով ռուսական դեսպան Սենշիկովի՝ Պարսկաստանում գտնվելու փաստը:

Դեռ 1826թ. օգոստոսի 1-ին (13-ին) արտաքին գործոց նախարար Կ.Վ. Նեսսելրոդեն Վրաստանի կառավարիչ Ա.Պ. Երմոլովին առաջարկեց հանձնարարել ռուսական դեսպանին՝ բացատրություն պահանջել պարսից արքունիքից Երևանի սարդարի կողմից սկսած ռազմական գործողությունների համար, այնուհետև պատժել սարդարին և նախագգուշացնել Աբաս-Միրզային, որ նրա ոչ զոհացուցիչ պատասխանը «կնշանակի Պարսկաստանի կողմից պատերազմի հայտարարում Ռուսաստանին»²: Կ.Վ. Նեսսելրոդեն, իրադրությանը տեղյակ չլինելով, Սենշիկովի³ հետ կապը խզվելու վերաբերյալ Երմոլովի լրատվության մասին իրագեկ չլինելով, առաջարկում է Աբաս-Միրզային ներկայացնել Պարսկաստանում ռուսական կողմի առաջարկությունները, այն դեպքում, երբ զահաժառանգ արքայորդին զորքով անցել էր Արաքսը դեռ հուլիսի 16-ին, ներխուժել էր Ղարաբաղ և գտնվում էր արդեն Ռուսական կայսրության սահմաններում:

Կառավարական հռչակագրի ներածականում նշվում էր, որ հանկարծակի հարձակման մասին առաջին լուրերից հետո Ռուսաստանի

¹Առաջին անգամ այդ հռչակագիրը հրատարակվել է ռուսական "Московские ведомости" թերթի 1826թ. սեպտեմբերի 22, հմ. 76-ում, իսկ ֆրանսերեն "Journal de Saint-Petersbourg" թերթում, 1826թ. սեպտեմբերի 23-ին: Սենք օգտվել ենք այդ կառավարական հռչակագրի ռուսերեն թարգմանությունից՝ հրատարակված Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերի երկրորդ սերիայի 5(14) հատորում "Внешняя политика России XIX и начала XX века", N:214, Ծ., 1985, р. 601, 602.

²ВПП, т.6(14), М., 1985, с.545.

³Նույն տեղում:

կառավարությունը համարյա թե մեկ ամիս իրեն իրավունք էր վերապահում չհավատալու, որ փոխադարձ երդումներով հաստատված խաղաղության պայմաններում առանց տարածայնությունների և բողոքների համար լուրջ պատճառներ ու առիթներ ունենալու պարսից շահը «կտարածեր մեզ վրա պատերազմի սարսափները»¹:

Յոթնականում նշվում էր, որ «կոնֆլիկտն սկսվեց ոչ թե մեր հարևանությամբ ապրող ցեղերի ասպատակությամբ, այլ հենց շահի և գահաժառանգի զորքերի ներխուժումով», և որ Ռուսաստանը ստիպված էր ուժին դիմագրավել ուժով և պատերազմին պատասխանել պատերազմով: Սակայն պատրաստվելով զենքով վերջ տալու առաջացած երկպառակությանը, պարտք կհամարեր ամբողջ Եվրոպայի առջև քննել անաչառ կերպով, թե ինչը դրդեց պարսիկներին խզելու խաղաղ հարաբերությունները»: Այնուհետև հռչակագրում ասվում է, որ Գյուլիստանի հաշտության պայմանագրի համաձայն սահմանն անցնում է Գյուլիստանի պայմանագրի կնքման ժամանակ ռուսական բանակի գրաված գծով՝ «ստատուս քվոյի» հիման վրա:

Ըստ Գյուլիստանի պայմանագրի՝ Ռուսաստանը օրինական թագաժառանգ պետք է ճանաչեր շահի որդիներից նրան, որին ինքը՝ շահը կնշանակեր ժառանգորդ: Եվ քանի որ ժառանգորդ էր նշանակվել Ֆաթ-Ալի-շահի երրորդ որդի Աբաս-Միրզան, ռուսական արքունիքն անմիջապես և հանդիսավոր կերպով ճանաչեց նրան որպես պարսից տերության² ժառանգորդ, սակայն հայտնի է, որ Ռուսաստանի կայսրը Աբաս-Միրզային ճանաչեց ոչ «անմիջապես», ինչպես նշվում է հռչակագրում, այլ 1819 թվականին կամ Գյուլիստանի հաշտությունը կնքելուց վեց տարի անց միայն: Յոթնականում չեն բացահայտվում այդ ուշացման պատճառները: Ըստ Գյուլիստանի պայմանագրի երկրորդ հոդվածի՝ սահմանները ենթակա էին ճշտման, իսկ ըստ այդ պայմանագրի Սեպարատակտի՝ պարսիկ դիվանագետներին իրավունք էր վերապահվում դիմել ցարին, սակայն գեներալ Երմոլովը ձգձգում էր պարսիկ շատ դիվանագետների մեկնումը Թիֆլիսից և հնարավորություն չէր տալիս նրանց գնալ Պետերբուրգ: Այդ մասամբ բացատրվում էր նրանով, որ Ալեքսանդր 1-ինը երկար ժամանակ գտնվում էր Եվրոպայում: 1815թ. մարտի 20-ից Ֆրանսիան նապոլեոնյան հերոսապատման «100 օրվա» լարվածություն էր ապրում, որն իր ավարտին հասավ Վաթեռլոոյի ճակատամարտով և երկրորդ ռեստավրացիայով, իսկ Փարիզի հաշտության երկրորդ պայմանագիրը կնքվեց նոյեմբերի 20-ին միայն:

Մինչ յոթերորդ կոալիցիայի զորքերի Փարիզ մտնելը (1815թ. հուլիսի 6-8)³՝ Կաջարները հույս ունեին, որ Նապոլեոնի ակտիվությունը բա-

րենպաստ կերպով կանդրադառնա սահմանների մասին Ռուսաստանի հետ իրենց բանակցությունների վրա, մանավանդ որ «100 օրվա» ընթացքում Նապոլեոնը փորձում էր վերականգնել շահի հետ խզված կապերը և 1815թ. հունիսի 9-ին Կոստանդնուպոլսով Պարսկաստան ուղարկեց ֆրանսիական դեսպան Ամադեյ Ժոբերին, սակայն այդ առաքելությունը ձախողվեց Վաթեռլոոյի ճակատամարտից և երկրորդ Ռեստավրացիայից հետո, իսկ Աբաս-Միրզան այդ ժամանակ ձգձգում էր առաջին ռուս-պարսկական պատերազմի ռուս ռազմագերիների հայրենիք վերադառնալը:

Ալեքսանդր 1-ինի՝ Պետերբուրգ վերադառնալուց հետո կայսրին սպասող պարսկական արտաքին գործոց նախարարին հայտարարեցին, որ «Գյուլիստանի հաշտությունը չի ապահովում ռուսական սահմանների անվտանգությունը, իսկ սահմանների մասին որոշումը վերջնականապես կընդունվի Ա.Պ.Երմոլովի կողմից՝ սահմանները վերանայելուց հետո միայն, այն բանից հետո, երբ նա կփոխարինի գեներալ Ռոիշչևին գլխավոր հրամանատարի պաշտոնում և կմեկնի Պարսկաստան որպես արտակարգ ու լիազոր դեսպան: Այնինչ, Երմոլովի՝ 1817թ. պարսկական միսիան ավարտվեց նրա և Աբաս-Միրզայի հարաբերությունների խիստ սրմամբ այն բանից հետո, երբ Երմոլովը փորձում էր գահաժառանգ արքայորդուն հակադրել նրա եղբայր Մուհամեդ-Ալի-Միրզային, և երբ Երմոլովի և Մուհամեդ-Ալի-Միրզայի գաղտնի հանդիպումներն աղմկոտ արձագանք գտան Ռուսաստանում: Այսպիսի պայմաններում Աբաս-Միրզայի հռչակումը պարսից գահաժառանգ ձգձգվում էր, մինչև որ Ալեքսանդր 1-ինը 1819թ. Թավրիզում դիվանագիտական միսիայի բացման հետ միաժամանակ, շրջանցելով Երմոլովին, ճանաչեց Աբաս-Միրզային «Նայիր-օսսալթանե»՝ գահաժառանգ:

Այսպիսով, կառավարական հռչակագրում ռուս-պարսկական հարաբերությունների այս մասը բավականին խեղաթյուրված էր ներկայացված:

Յոթնականում ոչ պակաս միտումնավոր էր խոսվում նաև ռուս-պարսկական հարաբերությունների լարվածությունը սրող սահմանային վեճերի մասին: «Սահմանները որոշելու ժամանակ, - ասվում էր հռչակագրում, - ծագեցին որոշ, ասենք, աննշան դժվարություններ... Պատերազմից հետո մի կողմից՝ պարսիկները գրավեցին պայմանագրով մեզ տրված Քափանակչայ և Չուդուր գետերի միջև ընկած հողերը, մյուս կողմից՝ մենք զինվորական ջոկատներով շրջապատեցինք մի փոքր տարածք, որը Գոկչան (Սևանը - Ա.Ք.) բաժանում էր մերձակա լեռներից»⁴, և ճանաչելով շահի իրավունքներն այդ տարածքի վրա՝ առաջարկում էինք այն վերադարձնել պարսիկներին, եթե նրանք վերադարձնեն

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

⁴Նույն տեղում, էջ 602:

Ռուսաստանին պատկանող շրջանը կամ փոխանակեն այդ տարածքները, չնայած այն բանին, որ Սևանի այդ անբերրի ափը, որի նշանակությունը միայն լճին մոտ գտնվելու մեջ է, «չի կարող ո՛չ մեծությամբ, ո՛չ օգտակարությամբ համեմատվել այն հողահատվածի հետ, որը մենք էինք զիջում պարսիկներին»¹:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ կառավարական հռչակագրի հեղինակները սահմանային վեճերը ներկայացրել են մշուշոտ արտահայտություններով՝ չհիշատակելով մի շարք բնակավայրերի անվանումներ: Հռչակագրում չէր խոսվում, մասնավորապես, այն մասին, որ Յուսիսային Թալիշի և Փամբակի շրջանի մի շարք բնակավայրերի փոխարեն Աբաս-Միրզան Ռուսաստանին առաջարկում էր հայկական Մեղրիի մարզը: Չէր նշվում նաև, որ ռուս սահմանային էմիսարները մերժեցին Աբաս-Միրզայի այդ տարբերակը, իբրև թե այն պատճառով, որ Յուսիսային Թալիշը Ռուսաստանին էր միացվել դեռ մինչ 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմը և այդ պատճառով չէր կարող առնչություն ունենալ Գյուլիստանի պայմանագրի հետ: Իսկ ո՞ւմ էր պատկանում Թալիշը մինչև ռուսների գալը: Աբաս-Միրզան չհամաձայնվեց Յուսիսային Թալիշի վերաբերյալ ռուսական հարցադրմանը և ի նշան բողոքի Թալիշի խան Միրզա-Հասանին հասցրեց այն վիճակին, որ նա ստիպված եղավ փախչել Պարսկաստան:

Պարզ չէր խոսվում նաև Մեղրիի մարզի շուրջ տարվող վեճերի մասին, որի անվանումը հռչակագրում անհասկանալի պատճառով բացակայում էր, չնայած այն բանին, որ Գյուլիստանի պայմանագրի երկրորդ հոդվածով սահմանագիծը ձգվում էր «եղիբուլուկի ծանծաղուտով վեր դեպի Արաքս, մինչև Քափանակչայ գետաբերանը և այնուհետև մինչև Մեղրիի լեռները»², իսկ Կապանչայ և Քափանակչայ գետակների շրջանում է գտնվում Մեղրիի հայկական սահմանամերձ մարզը: Հարցն այն էր, որ 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի վերջերին ռուսական ջոկատը գրավել էր այդ մարզի կեսը: Երմոլովը արդարացիորեն համարում էր, որ հայկական այդ մարզն ամբողջությամբ անցել է Ռուսաստանին, իսկ պարսիկներն ապացուցում էին, որ «ստատուս քվո» սկզբունքով որոշված սահմանագիծն անցնում է այդ մարզով և բաժանում է այն:

Երմոլովը առաջարկում էր դուրս բերել պարսիկ զինվորներին Մեղրիից, բայց պարսկական սահմանային էմիսարները չէին համաձայնվում: Հարցն ավելի բարդացավ այն բանից հետո, երբ կլիմայական պայմանների պատճառով Մեղրիից հեռացան ոչ թե պարսիկ, այլ ռուս զինվորները, իսկ պարսիկները, օգտվելով դրանից, գրավեցին ամբողջ

¹Նույն տեղում:

²ЦГВИА, ф.В.УА, д.4294, д.4292, л.3.

մարզը: Բացառված չէ, որ ռուս զինվորները թողեցին մարզը հենց Երմոլովի հրամանով: Այնուհետև երկու ռուսական վաշտեր գրավեցին Սևանա լճի ափի հյուսիսարևմտյան մասը, և Երմոլովը Աբաս-Միրզային առաջարկեց օրինականացնել այդ փոխանակումը համապատասխան պայմանագրով: Ըստ էության, Երմոլովը առաջարկում էր փոխանակել հայկական տարածքները, և այդ հարցում նա դժգոհություն առաջացրեց հայ բնակչության մեջ, որը համառորեն ձգտում էր ազատագրվել պարսկական լճից: Ընդ որում, Երմոլովը Աբաս-Միրզային փաստի առաջ կանգնեցրեց՝ առանց նախապես համաձայնեցնելու այդ հարցը գահաժառանգ այքայորդու հետ, որ նույնպես հիշատակված չէր պատերազմի մասին Հռչակագրում, ճիշտ այնպես, ինչպես չէր խոսվում նաև հայկական Միրաք գյուղի շրջանում (Ապարանի մոտ) տիրող լարված դրության մասին, նույնիսկ այն բանից հետո, երբ Աբաս-Միրզան պարսկական զորքերը մոտեցնում էր այդ գյուղին՝ ռուսական սահմանային պահակակետերը վերացնելու նպատակով: Ռուսական և պարսկական ստորաբաժանումները Միրաքից դուրս բերելու պայմանագրի համաձայն՝ ռուսական հրամանատարությունը դուրս բերեց Միրաքից իր երկու վաշտերը, այնինչ պարսիկները խախտեցին այդ պայմանագիրը և իրենց զինվորներին դուրս չբերեցին այնտեղից¹: Պարսիկները հավակնություններ ունեին նաև Արևելյան Հայաստանի Շորագյալ մարզի նկատմամբ: Ալազյազի ստորոտին և Հայաստանի բարգավաճ հովտում գտնվող Շորագյալն ուներ կարևոր ռազմավարական նշանակություն: Մի կողմից այն մտնում էր Երևանի խանության և Ղարսի փաշայության միջև գտնվող տարածքի մեջ, մյուս կողմից՝ հարավից փակում էր Վրաստանի ճանապարհը: Ռուսական հրամանատարության կարծիքով Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակյա պատերազմի դեպքում Շորագյալը Ռուսաստանի կողմից կարող էր օգտագործվել որպես հարմար հենակետ:

Կառավարական հռչակագրում ոչինչ չէր ասվում նաև Արփաչայ գետի ամբողջ հոսանքը Պարսկաստանի հսկողության տակ թողնելու նպատակով Աբաս-Միրզայի ապարդյուն փորձերի և պայքարի մասին: Աբաս-Միրզան ձգտում էր դրանով Դարալագյազը պահել Պարսկաստանի սահմաններում:

Չի կարելի համաձայնվել հռչակագրի հեղինակների մեկ այլ հայտարարության հետ ևս, որ «1825թ. մարտին փոխադարձ պահանջները և հայեցակետերն սկսեցին մոտենալ և նմանվել իրար» և, թվում էր, որ ամեն ինչ «հակված էր բանակցությունների մոտալուտ գոհացուցիչ ավարտին, երբ ճակատագրի բերումով կտրվեց... Ալեքսանդր 1-ինի կյան-

¹ВИП, м.6(14), М., 1985, с.602.

քի թելը¹: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև համաձայնեցված սահմանագծի հաստատման վերաբերյալ 1825թ. մարտի 24-ին Թավրիզի Բեգյարբեկ Ֆաթի-Ալի-Բեկի և Կովկասյան հատուկ կորպուսի շտաբի պետ գեն. Ա.Ա. Վելյամինովի միջև կնքված Թիֆլիսի պայմանագրին:

Այդ պայմանագրի համաձայն Ռուսաստանն իր ձեռքում պահեց Սևանա լճի ափի հյուսիսային մասը, իսկ Պարսկաստանը՝ Ղափանի շրջանը², ինչպես նախկինում առաջարկում էր գեն. Երմոլովը: Սակայն Աբաս-Միրզան միտքը փոխեց, հրաժարվեց վավերացնել Թիֆլիսի պայմանագիրը և հայտարարեց, որ նոր սահմանը պետք է անցնի Յանգա-Չիման գետով, Սևանա լճով և ապա Ղափանի միջով, Մուղանի տափաստանով և Թալիշով, այդ բոլորը Պարսկաստանի սահմաններում թողնելու նպատակով: Սկզբում ենթադրվում էր, որ Ալեքսանդր 1-ինի մահվանից հետո գահաժառանգ արքայորդի Աբաս-Միրզան սպասողական դիրք էր գրավել, սակայն գեն. Երմոլովին հաջողվեց պարզել, որ Թիֆլիսի պայմանագրի հիմնական նպատակը և այն վավերացնելուց հրաժարվելը կապված էր Աբաս-Միրզայի գաղտնի մտադրության հետ՝ ահաբեկել Արևելա-Յնդկական ընկերությանը ռուս-պարսկական հարաբերությունների բարելավմամբ և կարողանալ ստանալ ընկերությունից դրամական երկարատև ներդրումներ Ռուսաստանի դեմ երկարատև պատերազմի նախապատրաստման համար:

Յետևաբար, կառավարական հռչակագրին հակառակ՝ 1825թ. մարտին ռուս-պարսկական բանակցությունները չհանգեցրին հարաբերությունների բարելավմանը: Ավելին, 1825թ. սեպտեմբերի սկզբից Սևանա լճի շրջանում իրադրությունը խիստ սրվեց: Կորպուսի շտաբի պետ Վելյամինովին ուղղված նամակում նշված էր, որ Երևանի սարդար Յուսեին խանի ստորաբաժանումները ետ են չպրտել Սևանի Գիլի շրջանի ռուսական պահակներին և սկսել են ստեղծել ռուսական զորքերի կողմից հսկվող այդ շրջանում պարսկական բնակավայրեր³: Նույն այդ ժամանակ, սեպտեմբերին, Երևանի սարդար Յուսեին խանի ջոկատը գրոհեց Սևանի ափին գտնվող գնդապետ Սևարսամիձեի ռուսական ստորաբաժանումների վրա: Երմոլովը հաղորդեց Պետերբուրգ սահմանի այդ խախտումների մասին և խնդրեց իրեն տրամադրել հետևակային դիվիզիա:

Կառավարական հռչակագրի եզրափակիչ մասում խոսվում է գեներ-

¹ЦГВИА, ф.1018, оп.2, д.90 (“Записка о войне”), л.6.

²ЦГВИА, ф.ВУА, д.4294(Журнал военных действий Персидской войны в 1826-1827 гг.), л.3.

³АКАК, т.У1, ч.2, N:581, с.322

րալ-մայոր իշխան Մենշիկովին Պարսկաստան ուղարկելու մասին¹: Մենշիկովին թույլատրվում էր, վերջ տալու համար վեճերին, որոնք նախկինում խանգարում էին սահմանները որոշելուն, վերստին առաջարկել երկուստեք ապօրինաբար գրաված հողերի փոխանակություն և, նույնիսկ, Պարսկաստանին «առավել օգտակար լինելու» և այդ տերությանը Ռուսաստանի բարյացակամության մեջ հավաստիացնելու նպատակով միացնել զիջվող շրջանին Թալիշի խանության մի մասը: Մենշիկովը պետք է ջանար համոզել շահին և նրա ժառանգորդին, թե ինչ աստիճան չափավոր և անշահախնդիր են ինքնակալ կայսեր քաղաքական դիտավորությունները, պետք է ապացուցեր նրանց, որ Ռուսաստանի սերտ բարեկամական կապը Պարսկաստանի հետ հավասարաչափ շահավետ է երկու տերությունների համար²:

Հռչակագրում չէր կարող հիշատակվել Մենշիկովի գլխավոր խնդիրը, որը 1826թ. հունվարի 8-ի գաղտնի հրահանգով կարգադրվել էր Նիկոլայ 1-ինի կողմից՝ «Թուրքիայի դեմ սպասվող պատերազմի պայմաններում Պարսկաստանի հետ խաղաղություն պահպանել»³: Հռչակագրում չէր խոսվում նաև այն մասին, որ Ա.Ա. Մենշիկովին առաջարկվում էր լուծել սահմանային վեճերը գեն. Երմոլովի կողմից մշակված և Աբաս-Միրզայի կողմից չվավերացված 1826թ. «Սահմանագծի վերաբերյալ ակտի» հիման վրա⁴, որը, մեր կարծիքով, շահի և Աբաս-Միրզայի հետ առաջիկա բանակցությունները դատապարտում էր ձախողման: Նշենք նաև, որ Մենշիկովը ուներ մեկ այլ գաղտնի հանձնարարություն ևս՝ ուսումնասիրել զորքի տրամադրությունները և հայտնաբերել Կովկասի գաղտնի ընկերությունները⁵: Կովկասյան կորպուսի սպաները ստորագրություն էին տալիս գաղտնի ընկերություններին մասնակից չլինելու մասին և լրացնում էին հարցաթերթիկներ, որոնց մեջ պահանջվում էր նշել գաղտնի ընկերությունների տեղն ու նպատակը՝ մասնակից լինելու դեպքում⁶: Նիկոլայ 1-ինի գաղտնի հրահանգում բերված է Կովկաս քստրված դեկաբրիստների ցուցակը, իսկ հինգերորդ էջի լուսանցքում Նիկոլայ 1-ինի ձեռքով մակագրություն է արված. «Լավ կլիներ այս անուններին ավելացնել Գրիբոյեդովին ևս»⁷: Մենշիկովը հարցաքննել էր նաև գեն. Երմոլովին, որին Նիկոլայ 1-ինը կասկածում էր դեկաբրիստ-

¹Մենշիկով Ալեքսանդր Սերգեևիչ(1787-1869)՝ պարսկական միսիայից հետո գլխավոր ծովային շտաբի պետը ծովակալի աստիճանով, իսկ Արևելյան պատերազմի ժամանակ՝ Ղրիմի բանակի գլխավոր հրամանատարը:

²ВІПР, т.6(14), М., 1985, с.602.

³Նույն տեղում, էջ 602-603:

⁴ЦГВИА, ф.ВУА, д.4288, л.1-10.

⁵Кузнецова Н.А., Иран в первой половине XIX в., М., 1985, с. 55.

⁶ЦГА, ВМФ, ф.19, оп.4, д.458, л.1.

⁷ЦГВИА, ф.ВУА, д.4288, л.5.

ների հետ կապեր ունենալու մեջ: Մենշիկովը հաղորդեց Պետերբուրգ այդ հարցաքննության արդյունքների մասին. «Գե՛ն. Երմոլովը կտրականապես ժխտում է Կովկասյան կորպուսի գորքերում գաղտնի ընկերությունների գոյությունը՝ «հաճախակի հաղորդակցության անհնարինության, եռանդուն ծառայության, զինավարժությունների և պարապ ժամանակ չունենալու պատճառով¹»: Գե՛ն. Երմոլովի այս հայտարարությունը գաղտնի ընկերությունների հնարավոր լինելու մասին միայն այնտեղ, որտեղ առկա է «պարապությունը, անգործությունը և մարդկանց հաղորդակցությունը» Նիկոլայ 1-ին պետք է հիշեցներ, որ դեկաբրիստների ապստամբությունը տեղի էր ունեցել ոչ թե Կովկասում, այլ հենց Պետերբուրգում: Պետք է ենթադրել, որ Չարավային ընկերության դեկաբրիստները և Կիևյան կորպուսի սպաները չհաստատեցին Գե՛ն. Երմոլովի հայեցակետը:

Ջոչակագրում ոչինչ չէր ասվում նաև Մենշիկովի և Ֆաթի-Ալի շահի անմիջական բանակցությունների մասին: Ըստ արխիվային տվյալների, ռուսական դեսպանը շահին հայտարարեց, որ իր նախաձեռնությամբ ռուսական ստորաբաժանումները դուրս եկան Միրաքի բնակավայրից և դրանով կանխեցին ռազմական բախումը Երևանի սարդարի ջոկատի հետ, որը, չնայած Աբաս-Միրզայի հրամանին, չէր հանում իր ստորաբաժանումները Սևանից: Մենշիկովը առաջարկեց շահին Մեդրիի հարավային մասը փոխանակել ռուսների կողմից գրավված Սևանի մերձափնյա հողաշերտի հետ և հայտարարեց Ռուսաստանի պատրաստակամության մասին զիջելու Պարսկաստանին Ղափանը և ոչ մեծ տարածք թափախելու: Շահը պատասխանեց, որ այդ հարցերն արդեն բազմաթիվ անգամ քննարկվել և մնացել են չլուծված այն պատճառով, որ կախված են եղել գլխավոր ամբողջ թափախելու Պարսկաստանին զիջելու հարցից: Շահի ուղղակի հարցին, թե «Դուք կարո՞ղ եք ամբողջ թափախել մեզ զիջել», Մենշիկովը պատասխանեց, որ այդ բանի համար նա չունի լիազորություններ և չի կարող շեղվել 1825թ. մարտի 28-ին կնքված պայմանագրից, որն ուժը կորցրել էր գահաժառանգ արքայորդու կողմից չվավերացվելու պատճառով: Այդ ժամանակ դեսպանին ցույց տվեցին Պարսկաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված Նեսսելրոդի նամակը, որում նշված էր, որ դեսպան Մենշիկովը օժտված է լայն լիազորություններով²: Դրանից հետո արտակարգ և լիազոր դեսպան Մենշիկովը հետզհետե վերածվեց գերված պատանդի, որը հազիվ փրկվեց փախչելով Երևանի սարդար Չուսեին-Կուլի խանի ամառանոցից:

¹Нечкина М.В., А.С. Грибоедов и декабристы, М., 1947, с. 475.

²АКАК, т. VII, №:637, с.350. Балаян Б.П., Дипломатическая история..., с. 152-163.

Այդպիսի ստորացուցիչ վերաբերմունքը ռուսաստանյան կայսեր դեսպանի հանդեպ կառավարական հռչակագիրը կազմողների մեջ ևս առաջացրեց զայրույթի բուռն պոռթկում. «Այդքան ակնհայտ վիրավորանքներ, բոլոր պարտականությունների այդ աստիճան չչսված մոռացումը չպետք է անպատիժ մնա»¹:

Այդ հարցում մենք մեծ թերահավատությամբ ենք վերաբերվում Ա.Վ. Ֆադեևի այն եզրահանգմանը, որ Նիկոլայ կայսրը, փաստորեն, հեռացնում է Երմոլովին «դիվանագիտական մասից»՝ թեհրան ուղարկելով իր ֆավորիտներից Ա.Ս.Մենշիկովին² որպես արտակարգ և լիազոր դեսպան: Եվ հարցը միայն այն չէր, որ Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր հրամանատարի բարձր պաշտոնը համարյա թե բացառում էր Գե՛ն. Երմոլովի դիվանագիտական միսիայի կրկնությունը Պարսկաստանում, այլ ավելի շատ այն, որ Երմոլովին անհնար էր պատկերացնել գերված պատանդի դերում՝ Մենշիկովի փոխարեն:

Շահի և Մենշիկովի երկխոսության ժամանակ թափախելու մնում էր որպես «կռվասնձոր», չնայած այն բանին, որ պատերազմի մասին հարցը իրականում որոշված էր, իսկ Կաջարները, կուրացած վրեժխնդրության տենդից, ավելի շատ մտածում էին ամբողջ Անդրկովկասին տիրելու մասին:

Դրա հետ միասին թափախելու ցարիզմի համար նախ և առաջ ռազմական հարմար հենակետ էր և հետո միայն խանություն, որն իր մուսուլման հարևաններից առաջ էր ընկել Ռուսաստանին միանալու հարցում: Պատահական չէ նաև, որ թափախելու հետ էին կապված ինքնակալության դիվանագիտական վրիպումները, և Կ.Մարքսը «Լորդ Պալմերստոն» աշխատության մեջ քննադատության ենթարկեց ցարական Ռուսաստանի քաղաքականությունը թափախելու հարցում. «Այդ (Թուրքմենչայի - Ա.Ք.) պայմանագրի միակ նպատակը, Նիկոլայ 1-ինի պնդումով, հանդիսանում է երկու պետությունների միջև բոլոր ապագա վեճերի վերացման իբր միակ միջոցը: Բայց միևնույն ժամանակ նա հրաժարվեց վերադարձնել Պարսկաստանին Արաքսի պարսկական ափին գտնվող թափախելու Մուղանը»³:

Չեռազոտողները ուշադրություն չեն դարձրել «Պարսկաստանին պատերազմ հայտարարելու մասին ռուսաստանյան կառավարության հռչակագրի» եզրափակիչ մասին. «Ինքնակալ կայսրը պատերազմ է հայտարարում պարսից շահին, հայտարարում է, որ Գյուլիստանի

¹ВПР, т.6(14), М., 1985, с.603.

²Фадеев А.В., Россия и Восточный кризис 20-х годов XIX века, М.,1958,с.142.

³Маркс К., Лорд Пальмерстон. Статья вторая.- Маркс К., Энгельс Ф., Соч., 2-е изд., т.9, с.371.

պայմանագիրը ոչնչացված է պարսիկների կողմից, և որ նա զենքը ցած չի դնի, մինչև վերջնականապես չապահովի մեր սահմանների անվտանգությունը, վարձահատույց լինելով իրեն՝ կորուստների և գործ դրած ջանքերի համար՝ Կայսրության արժանապատվությանը և շահերին համապատասխան կայուն խաղաղության հաստատումով»։ Նախ և առաջ աչքի է ընկնում այն փաստը, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմը սկսվեց 1826թ. հուլիսի 16(28)-ին, իսկ Ռուսաստանի կառավարությունը Պարսկաստանին պատերազմ հայտարարեց 1826թ. սեպտեմբերի 16(28)-ին միայն, կամ պատերազմը սկսվելուց երկու ամիս անց։ Հայտնի է նաև, որ պատերազմի առաջին հիսուն օրվա ընթացքում հարձակվում էին պարսկական զորքերը, իսկ այնուհետև՝ Շամխորի ճակատամարտով, սկսվեցին ռուսական զորքերի հակահարձակումները, որոնք ետ չպարտեցին պարսկական զորքերին Արաքսից այն կողմ և վերականգնեցին Գյուլիստանի հաշտության պայմանագրով ընդունված սահմանները։ Թվում էր, թե սրանով կարելի էր պատերազմն ավարտել և վերականգնել Գյուլիստանի պայմանագրի իրավական ուժը։ Պատերազմի այս երկրորդ փուլում Ռուսաստանը բացառիկ դրական դեր էր խաղում։ Սակայն Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Պարսկաստանին 1826թ. սեպտեմբերի 16(28)-ին, երբ Պարսկաստանի դեմ պատերազմն, ըստ էության, վերջացել էր արդեն։ Ի՞նչ նպատակներ էր հետապնդում ինքնակալությունը, հայտարարելով Գյուլիստանի պայմանագրի ոչնչացման մասին։

Ցարիզմը փաստորեն սկսեց զավթողական պատերազմ՝ ամբողջ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու և նոր պետական սահմաններն Արաքսով անցկացնելու համար։ Այդպիսով, 1827թ. սկսվեց 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի երրորդ փուլը, զավթողական՝ ցարիզմի և ազատագրական՝ հայ ժողովրդի կողմից, քանի որ ռուս-պարսկական պատերազմի հետևանքով նրա ավարտման փուլում Ռուսաստանին էին միացվել Արևելյան Հայաստանում Երևանի և Նախիջևանի խանությունները, և նրանց հիման վրա ստեղծվել էր Հայկական մարզը։

Դրա հետ միասին, արտաքին գործերի ցարական նախարար Կ.Վ. Նեսսելրոդեն չէր կարող կանխատեսել, որ Անգլիան և մյուս եվրոպական տերությունները կդատապարտեն ցարական Ռուսաստանին ռուս-պարսկական պատերազմի երրորդ փուլի համար և կտեսնեն ցարիզմի այդ քայլի մեջ Հնդկաստանին սահմանակից Պարսկաստանը զավթելու և Անգլիային Պարսկաստանից և Պարսից ծոցից դեմ շարտելու գաղտնի մտադրություն։ Երկյուղ կրելով ընկնել քաղաքական մեկուսացման մեջ ռուս-պարսկական պատերազմի 1827-1828թթ. երրորդ փուլի նախօրյակին, Կ.Վ. Նեսսելրոդեն կառավարական հռչակագրի հետ միաժամանակ ուղարկեց նույնանման բովանդակությամբ ճեպագրեր ար-

տասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչներին¹։

Այնպես, ինչպես «Ռուսաստանյան կառավարության հռչակագրում», շրջաբերական ճեպագրերում Նեսսելրոդեն փորձում է երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատճառները հանգեցնել նույն այդ սահմանային վեճերին, թեև ծգտում է դրանք ընդհանրացնել, ուժեղացնել Ռուսաստանի արտաքին քաղաքականության խաղաղասիրական կոնցեպցիան, ապացուցել պատերազմի նախօրյակին ռուս-պարսկական հարաբերությունների «միանգամայն բարեկամական բնույթը», որով բացարձակապես ժխտում է սահմանային վեճերի էությունը հենց։ Չնայած նրան, որ ռուս-պարսկական երկու պատերազմների միջև ընկած 13-ամյա միջանկյալ փուլում սահմանային վեճերն անընդհատ սրվում էին, կոմս Կ.Վ. Նեսսելրոդեն փորձում էր համոզել ոչ այնքան դյուրահավատ «օտարերկրացիներին», որ «հենց նոր խանգարված է մեր սահմանների անդորրությունը այն տեղերից մեկում, ուր, ինչպես մենք հույս ունեինք, այն պետք է լիներ հաստատուն Գյուլիստանի հաշտությունը կնքելու ժամանակներից... Մեր հարաբերությունները Պարսկաստանի հետ չեն դադարել միանգամայն բարեկամական լինելուց։ Ռուսաստանի և Թեհրանի արքունիքի միջև հարաբերություններում սրբորեն պահպանվում էին չափավորության և բարյացակամության քաղաքականության ավանդույթները»²։ Սակայն շրջաբերական ճեպագրի եզրափակիչ մասը գրված էր շատ ավելի կտրուկ, քան կառավարական հռչակագրում՝ պատերազմի մասին. «Հարձակումը կատարված է առանց հարգելի պատճառի, առանց նպատակի բացեփբաց հայտարարման, առանց նախազգուշացման և հաշվի չառնելով խաղաղ իրավիճակը։ Հարձակումն այնքան անսպասելի է, որ կայսրը դեռ չի ցանկանում հավատալ, որ դա հանդիսանում է պարսից արքունիքի գործը։ Մենք զենքով կպատժենք կայսրության արժանապատվությանը հասցրած վիրավորանքի համար։ Նա կպատժի և վրեժ կլուծի, որպեսզի հետայսու չլինի հար ու նման ներխուժում։ Կայսրը կօգտագործի բոլոր միջոցները, որպեսզի դաս տա ուխտադրության համար, որպեսզի ամենայն վճռականությամբ պատերազմը տանի մինչև հաջող ավարտ և հասնի պատվաբեր հաշտության կնքման»³։

Եվրոպայում դժվար էր հակաճառել կոմս Նեսսելրոդեին, քանի որ 1826թ. հուլիսի 16-ին պարսկական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս և 50 օր շարունակ ավերում էին այն։

¹ВПП, N206. "Циркулярная депеша статс-секретаря К.В. Несельроде дипломатическим представителям за границей". М., 16(28) августа 1826г., т.6(14), М., 1985, с.583-584.

²Նույն տեղում, էջ 583։

³Նույն տեղում, էջ 584։

Ռուս նշանավոր պատմաբան Մ.Ն. Պոկրովսկին զգալի ծառայություն մատուցեց հայրենական պատմագիտությանը, անկախ այն բանից, որ Յոկտեմբերի գաղափարախոսության ազդեցության տակ ինքնակալության նկատմամբ սրված մոլեգին ատելությունը դրդեց նրան հայտարարել ցարիզմին «խաչակրաց արշավանք», և նրա մեղքը չէր, որ անզուսպ աճապարանքի մեջ նա ոչ միայն դեն շարտեց ցարիզմի հետ միասին իր ժողովրդի պատմության մի մասը, այլև «Կովկասի նվաճումը» աշխատության մեջ քննադատաբար չօգտագործեց Շչերբատովի միտումնավոր գիրքը ցարական գեներալ-ֆելդմարշալ Պասկևիչի մասին: Այսպես ծնունդ առան մի շարք փաստագրական սխալներ, որոնք տեղափոխվեցին վերոհիշյալ աշխատության մեջ չստուգված աղբյուրներից և գրականությունից:

Մ.Ն. Պոկրովսկին պնդում է, օրինակ, որ «ռուսական պետականության առաջին իսկ ներկայացուցիչները, որոնց հանդիպեցին Կովկասի քաղաքներում, Պյոտր Մեծի զորքերն էին, որոնք կռվի էին գնում պարսիկների դեմ»¹: Սակայն, իրականում Պյոտր Մեծի զորքերը կռվի էին գնում ոչ թե պարսիկների, այլ աֆղանական զիլզայների դեմ: Պյոտր 1-ին իր զորքերի հետ Պարսկաստան էր հրավիրել գահաժառանգ արքայորդի թահմազ 2-րդը՝ պարսիկներին աֆղանների ներխուժումներից ազատելու համար, որոնք տիրել էին այն ժամանակվա պարսից մայրաքաղաք Իսպահանին, իսկ 1722թ. հոկտեմբերի 22-ին տապալեցին Սեֆյանների դինաստիան: Յայտնի է, որ Պյոտր 1-ինը այդպես էլ չգնաց Պարսկաստան, քանի որ ստիպված էր վերադառնալ Պետերբուրգ 1723թ. գարնանը Պարսկաստանի և Անդրկովկասի վրա կատարված թուրքական ագրեսիայի պատճառով, իսկ ռուսական զորքերի կողմից գրավված Բաքուն և մերձկասպյան Գիլան մարզի մի մասը, ինչպես նաև 1723թ. Պետերբուրգյան պայմանագրի համաձայն Ռուսաստանի կողմից մերձկասպյան Մազանդարան և Աստրաբադի նահանգները գրավելու չիրականացված իրավունքը արտացոլում էին ցարիզմի ընդհանուր հայեցակետը «Կասպից ծովը ռուսական լճի վերածելու» մասին: Ինքնակալության այդ ձգտումները տեղ էին գտել Ստամբուլի 1724թ. հունիսի 24-ի պայմանագրում, որը բովանդակությամբ հիշեցնում էր 1731թ. Թահմազ 2-րդ շահի և թուրքական սուլթանի միջև կնքված պարսկա-թուրքական պայմանագիրը, ըստ որի Թուրքիան պահպանում էր Արաքսից հյուսիս գտնվող զավթած տարածքը: 1724թ. Ստամբուլի պայմանագիրը ձևականորեն գոյություն ունենալով 7 տարի (մինչև 1731թ. պարսկա-թուրքական պայմանագիրը) չունեցավ իրավական ուժ, քանի որ Անդրկովկասը դեռ չէր գտնվում Ռուսաստանի տիրապետության տակ: 1735-1736թթ. թուրքերը վճռվեցին Անդրկովկասից Նադիր շահի զորքերի, ինչպես նաև Արցախի և Սյունիքի հայության ազատագրական շարժման շնորհիվ: Յայտության այդ ազատագրական շարժման շնորհիվ Նադիր շահը Խորասան արտաքսեց թուրքմեն ջավանշիրական ցեղերին և ճանաչեց Ղարաբաղի Յայկական պետական կազմավորումը, որը գոյատևեց 15 տարի (1736-1750թթ.):

¹Покровский М.Н. Дипломатия и война царской России в XIX столетии. Завоевание Кавказа. Россия, Турция и Персия в Закавказье (1800-1829). Сборник статей. Изд. "Красная новь", М., 1923, с.179.

կա-թուրքական պայմանագիրը, ըստ որի Թուրքիան պահպանում էր Արաքսից հյուսիս գտնվող զավթած տարածքը: 1724թ. Ստամբուլի պայմանագիրը ձևականորեն գոյություն ունենալով 7 տարի (մինչև 1731թ. պարսկա-թուրքական պայմանագիրը) չունեցավ իրավական ուժ, քանի որ Անդրկովկասը դեռ չէր գտնվում Ռուսաստանի տիրապետության տակ: 1735-1736թթ. թուրքերը վճռվեցին Անդրկովկասից Նադիր շահի զորքերի, ինչպես նաև Արցախի և Սյունիքի հայության ազատագրական շարժման շնորհիվ: Յայտության այդ ազատագրական շարժման շնորհիվ Նադիր շահը Խորասան արտաքսեց թուրքմեն ջավանշիրական ցեղերին և ճանաչեց Ղարաբաղի Յայկական պետական կազմավորումը, որը գոյատևեց 15 տարի (1736-1750թթ.):

Այսպիսով, Մ.Ն. Պոկրովսկու հայտարարության հակառակ Պյոտր 1-ինի զորքերը չեն մտել ռազմական բախումների մեջ ոչ միայն պարսիկների, այլև Գիլանի բնակիչների հետ:

Վիճելի է նաև Պոկրովսկու այն հայտարարությունը, որ ռուս-պարսկական երկու պատերազմների միջև ընկած 13 տարիներն ապացուցեցին, որ պարսիկների հույսերը վիճելի խանությունները ետ ստանալու մասին ավելի ամուր հիմք ունեին: Սակայն նա չի ծշտում, թե դրանք ի՞նչ «վիճելի խանություններ»¹ էին, որոնք իբրև թե հույսեր էին կապում «ետ վերադարձվելու» հետ: Չնայած այդ չէր վերաբերվում հայերին, Պոկրովսկին պետք է ասեր այդ մասին ավելի հստակ, առավել ևս, հաշվի առնելով այն, որ վեճերն ու տարածայնությունները գնում էին նաև հայկական հողերի շուրջ: Պատմաբան Շչերբատովից մեջբերում անելով, Պոկրովսկին գեն. Մադաթովին անվանում է «այնուամենայնիվ, քաջ հուսար»², մինչդեռ Մադաթովը տաղանդավոր զորավար էր, Շամխորի տակ ռուսական բանակի հակահարձակման կազմակերպիչը և, փաստորեն, Անդրկովկասում ռուսական բանակի պատիվը փրկողը, պարզևատրված աղամանդագարդ երեք սուսերով: Իսկ ինչ վերաբերում է Չանախչիում իր ամառանոցի շինարարության վրա մի քանի զինվորներ աշխատեցնելուն, ապա դա թեև անթույլատրելի, բայց շատ սովորական բան էր ռուսական բանակում: Երևանը բնորոշող ցարական արհամարհական «Կավե կճուճ» անվանումը կրկնելով, Պոկրովսկին նեղություն չի կրում հիշեցնելու, որ XIX դարի սկզբին դեռ ընդհանրապես գոյություն չուներ երկնաքերներ, և որ Կովկասի ու Միջին Ասիայի քաղաքներում շատ կային կավե տներ: Նա չի տեսնում այն փաստը, որ հայերը հռչակ ձեռք բերած շինարարներ էին: Պատահական չէ, որ Իսպահանի շատ պալատներ ու կամուրջներ՝ ճարտարապետական գլուխգործոցներ, կառուցված էին Նոր Ջուղայի հայ շինարարների կող-

¹Նույն տեղում, էջ 184:

²Նույն տեղում, էջ 187:

Վից: Չնայած նրան, որ Ադրբեջանում հակառուսական խռովությունները սադրել էին Աբաս-Միրզան և մուլաները, իսկ այդ խռովությունների պարագլուխները՝ մուսուլմանական փախստական խաները, իրենց ռազմական ուսուցումը ստացել էին Պարսկաստանում, Պոկրովսկին միանգամայն սխալ կերպով ելիզավետպոլի 1826թ. հուլիսի ռեակցիոն խռովությունը անվանում է «իսկական հեղափոխության քատերաբեմ»:¹ Իսկ ի՞նչ հեղափոխություն էր դա և ինչո՞ւ Պոկրովսկին հիացմունքի մեջ է ընկնում այն բանից, որ իր իսկ բառերով ասած «շատ ռուսներ էին մորթոտվել»:² Չէ՞ որ խոսքը ռուս զինվորների մասին էր և ոչ ցարիզմի: Դեռ լավ է, որ հաջորդ էջում նա արտահայտվում է փոքր-ինչ այլ կերպ՝ «համընդհանուր խռովության մեջ, երբ թշնամին սպառնում էր տառա-ցիորեն բոլոր կողմերից...»: Նշենք, որ Պոկրովսկին ակնհայտորեն դժգոհ է Շուշիի «հերոսական մեկուկեսամյա պաշտպանությունից»: Իր բառերով ասած՝ «Շուշին սովի պատճառով անխուսափելիորեն անձնատուր կլիներ՝ պարսից զորքերի կողմից գոնե որոշ չափով համառ շրջափակման դեպքում»³, ընդ որում, չհիշատակելով այն փաստի մասին, որ հացն անհրաժեշտ քանակությամբ մատակարարվում էր տեղի հայերի կողմից: Շուշիի այդ հերոսական պաշտպանությունը բնութագրելիս հեղինակի մոտ նկատվում է միայն բուռն ատելություն ցարիզմի և ցարական Ռուսաստանի նկատմամբ:

Ահավասիկ, Անդրկովկասի ժողովուրդների միջև խտրականություն չդնելու մի օրինակ: Ոչ մի խոսք չասելով այն մասին, որ Երևանի բերդի համեմատաբար արագ հանձնվելը տեղի ունեցավ ոչ միայն և ոչ այնքան բերդային հրետանու, որքան Երևանի բերդի միջի հայերի հակապարսկական ապստամբության և Կովկաս աքսորված դեկաբրիստների մասնակցության շնորհիվ բերդի գրոհին, Մ.Ն. Պոկրովսկին նշում է, որ գեմ. Պասկևիչի երևանյան արշավանքը «Պետերբուրգում թվում էր համարյա թե Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների կրկնությունը», իսկ «երջանիկ հաղթող Պասկևիչի վրա այնքան առատ պարգևներ տեղացին, որքան չէր ստացել դեռևս ոչ մի ռուս գեներալ Սովորովի և Կուտուզովի ժամանակներից ի վեր»²: Չարմացնում է նաև Պոկրովսկու մեկ այլ հայտարարությունն այն մասին, որ «Կիսաանկախ, թուրքական կայսրության հետ այն ժամանակ բավական թույլ կապված Հայկական լեռնաշխարհի ցեղերի համար ըստ էության միևնույն էր, ո՛ւմ ճանաչել սյուզերեն՝ թուրքական սուլթանին, թե ռուսական կայսրին»³: Այս դեպքում ևս Մ.Ն. Պոկրովսկին չի ասում, որ խոսքը Հայկական լեռնաշխարհի հայերի մասին չէ: Եվ քանի որ խոսքը գնում էր Երևանի

¹Նույն տեղում, էջ 191:

²Նույն տեղում, էջ 195:

³Նույն տեղում:

խանության և ինչ-որ, մի դեպքում՝ «племена», իսկ մյուս դեպքում «народны» - ժողովուրդ, ազգություն իմաստով, հեղինակն այս դեպքում ևս չի ասում կոնկրետ կերպով, թե ում մասին է խոսքը, երբ գրում է, որ «ըստ էության միևնույն էր, ո՛ւմ ճանաչել սյուզերեն՝ թուրքական սուլթանին, թե ռուսական կայսրին»¹:

Ամենայն հավանականությամբ խոսքն, այնուամենայնիվ, ադրբեջանցիների մասին է, որովհետև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանությունը տեղի ունեցավ Մ.Ն. Պոկրովսկու կենդանության ժամանակ, և նա չէր կարող չիմանալ, որ հայերը թուրքիայի թշնամիներն էին, իսկ ադրբեջանցիները թուրքերի հետ ունեին մուսուլմանական և լեզվական ընդհանրություն: «Պատահական հանգամանքը,- նշում է Պոկրովսկին,- Ռուսաստանին փրկեց նոր դինաստիայի հիմնադիր՝ Աղա-Մուհամմեդ-խանի հետ անմիջապես բախումից՝ նա սպանվեց իր մերձավորների կողմից հենց այն պահին, երբ պատրաստվում էր պատերազմել ռուսների դեմ: Բայց մինչ այդ նա, այնուամենայնիվ, հասցրեց ավերել Վրաստանը, վրեժխնդիր լինելով նրանից՝ Ռուսաստանի հովանավորությանն ապավինելու համար»²: Պոկրովսկին այստեղ ևս թույլ է տալիս անճշտություն: Եթե նույնիսկ չլիներ Աղա-Մուհամմեդ-խանի այդ պատահական սպանությունը Շուշիում, միևնույն է, չէր կարող լինել ռուսական և պարսկական զորքերի բախում, քանի որ դեռ 1796թ. դեկտեմբերին Պավել 1-ինը Անդրկովկասից և Գիլանից ետ կանչեց գեմ. Չուբովի Կասպյան կորպուսը Մոզդոկյան գիծ, և Աղա-Մուհամմեդ-խանն անմիջապես օգտվեց դրանից և 1797թ. գարնանը զորքով ներխուժեց Ղարաբաղ՝ Անդրկովկասը նվաճելու և այս անգամ Ղարաբաղի կառավարիչ (Ջա-Նեշին) Իբրահիմ-խալիլ-խանին³ պատժելու նպատակով, որը Աղա-Մուհամմեդ-խանի՝ Ղարաբաղ կատարած առաջին արշավանքի ժամանակ կարողացել էր խուսափել պատժից:

Այսպիսով, պատահական հանգամանքը կապված Աղա-Մուհամմեդ-չախի սպանության հետ, չէր կարող Ռուսաստանն ազատել նոր դինաստիայի հիմնադիր Աղա-Մուհամմեդ-չախի հետ անմիջական բախումից,-

¹Նույն տեղում, էջ 181:

²Նույն տեղում:

³Իբրահիմ-խալիլ խանը, ինչպես և նրա հայրը՝ Փանահ-խանը, սերված էին բուրբենական ջավանշիր ցեղից, որ բնակություն էր հաստատել Արևելյան Խորասանում, Սերախս քաղաքի շրջանում (Մեշխեդից արևելք, թուրքմենիային սահմանակից): Ղարաբաղը կառավարելու շնորհագիրը Իբրահիմ-խալիլ-խանը ստացել էր 1749թ. Քերիմ-խան-Չենդից Շիրազում, որտեղ նա իր հոր հետ Քերիմ խանի պատանդն էր: Ղարաբաղ վերադառնալուց անմիջապես հետո Աղան էր ուղարկվել Շիրազում Քերիմ խանի հրամանով սպանված՝ նրա հոր՝ Փանահ-խանի դին:

ինչպես պնդում էր Պոկրովսկին: Բացի դրանից, 1796թ. Աղա-Մուհամմեդն արդեն շահ էր և չէր կրում խանի տիտղոսը: Այդ նշանակում էր, որ Աղա-Մուհամմեդ-շահը 1797թ. կարող էր պատրաստվել պատերազմելու ռուսների դեմ՝ Պոկրովսկու հայտարարությանը հակառակ¹: Յետևաբար, Մ.Ն. Պոկրովսկին, չիմանալով պատմական փաստերը, սխալ է լուսաբանում հարցի պատմության այդ մասը և այնուհետև ավելացնում է, ըստ որում, որ Աղա-Մուհամմեդ-խանը «մինչ այդ (դա համարյա երկու տարի անց էր՝ 1795թ. սեպտեմբերին - Ա.Բ.) հասցրեց, այնուամենայնիվ, ավերել ամբողջ Վրաստանը, վրեժխնդիր լինելով նրանից՝ Ռուսաստանի հովանավորությանն ապավինելու համար»²: Նշենք անմիջապես, որ երկրորդ դեպքում ևս Վրաստանում զորք չկար: Գնդապետ Բուռնաշևի երկու գումարտակները ետ էին կանչված Ռուսաստան Գեորգիևսկի պայմանագիրը կնքելուց երեք տարի անց և ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, իսկ Պոկրովսկին, ըստ երևույթին, չգիտեր նաև այդ փաստի մասին: Այդ կապակցությամբ Պոկրովսկին չէր կարող ճիշտ եզրակացության հանգել, որ Աղա-Մուհամմեդն Անդրկովկաս կատարած իր 1795թ. և 1797թ. արշավանքների ժամանակ գիտեր, որ այնտեղ արդեն ռուսական զորքեր չկային: Ոչ պակաս կարևոր էր նշել, որ ոչ թե ռուսներն էին երկյուղ կրում պարսիկներից, այլ պարսիկները՝ ռուսներից և հայտնվում էին Անդրկովկասում, երբ այնտեղ ռուսական զորքեր չէին լինում: Ավելին, այն ժամանակ, երբ պարսիկները Անդրկովկասից ռուսական զորքերը ետ կանչելու պատճառով Պավել 1-ին համարում էին հաշտարար թագավոր, Աղա-Մուհամմեդ շահը ներխուժում է Անդրկովկաս: Մ.Ն. Պոկրովսկին նշում է. «Աղա-Մուհամմեդ-շահի սպանությունից հետո կոնֆլիկտն արդեն լիովին հասունացել էր և պայթեց Ֆաթի-Ալի շահի օրոք», սակայն Աղա-Մուհամմեդ-շահի սպանությունից հետո կոնֆլիկտը հասունանում էր յոթ տարվա ընթացքում, և այդ ժամանակաշրջանում տեղի ունեցան կարևոր շատ իրադարձություններ, որոնց թվում և 1801թ. Վրաստանի միացումը Ռուսաստանին: Վերջապես, Պոկրովսկին ոչինչ չի գրել Վալերիան Զուբովի Կասպիական արշավանքի մասին, այն Զուբովի, որն իրեն ենթարկեց Արևելյան Անդրկովկասի բոլոր մուսուլմանական խաներին, որից բացահայտորեն երկյուղ էր կրում Աղա-Մուհամմեդ-խանը, և որի դեմ Ղարաբաղի տիրակալ Իբրահիմ-խալիլ-խանը կազմակերպեց գաղտնի դավադրություն: Միանգամայն ակնհայտ է, որ զուբովյան պատմությունը չէր տեղավորվում Պոկրովսկու «հակացարական» շրջանակներում: Որոշակի հակասություններ են նկատվում նաև ինքնակալության առևտրական քաղաքականությանը Պոկրովսկու տված գնահատականի մեջ: Մի կողմից

¹Покровский М.Н., Указ. соч., с. 181.

²Նույն տեղում:

նա նշում էր, որ կենտրոնական կառավարությունը մշտապես հիշեցնում էր Անդրկովկասում իր ներկայացուցիչներին՝ ռուսական առևտրական կապիտալի շահերի նկատմամբ Պարսկաստանում հոգ տանելու անհրաժեշտության մասին: Կայսր Ալեքսանդր 1-ինը մի անգամ գեմ. Երմոլովին 1816թ. հուլիսի 29-ին ուղղած հրահանգում գրել է նույնիսկ, որ ինքը առևտրական շահերը տարածքային ձեռքբերումներից ավելի բարձր է դասում: Գյուլիստանի պայմանագրի վերջնական վավերացմանը նախորդող բանակցությունների շրջանում ռուսական դիվանագիտությունը շատ ջանք էր թափում էնգելիում և Աստրաբադում ռուսական գրասենյակներ հիմնելու և Ռեշտում ու Պարսկաստանի այլ խոշոր առևտրական կենտրոններում ռուսական դիվանագիտությանը տեղ բացելու համար, որը, թերևս, այնքան էլ շահի կառավարության սրտով չէր¹: Մյուս կողմից Պոկրովսկին պնդում էր, որ «Ռուսաստանի տեղական գործակալները տնտեսական հարցերին վերաբերում էին բավականին անտարբեր: Նրանք զինվորական մարդիկ էին և ոչ առևտրական, նրանց համար առաջին պլանում ռազմական կամպանիաներն էին, որոնք նրանց թվում էին առավել «վեհ», քան արտասահմանյան ինչ-որ վաճառականների շահերն ու կարիքները: Անդրկովկասը նվաճվեց ոչ թե բուրժուական, այլ դեռ ազնվականական Ռուսաստանի կողմից, և նրա վերաբերմունքն իր նվաճումներին վերին աստիճանի «ֆեոդալական» էր²:

Մ.Ն. Պոկրովսկին գտնում է, որ ի տարբերություն Անգլիայի, որն անգլիական կապիտալի համար ճանապարհ էր բացել Պարսկաստան և ուներ տնտեսական կոնկրետ խնդիրներ, «ռուսական նվաճումները ոչ մի նմանօրինակ խնդիր չէին հետապնդում»: Պոկրովսկու այս կարծիքի հետ չի կարելի համաձայնվել, առավել ևս, որ նա ինքն իր գրքում հերքում է այդ անհիմն տեսակետը համարյա թե յուրաքանչյուր էջում, իսկ «առևտրական կապիտալի» պրոբլեմը նրա հետագա ուսումնասիրությունների հիմքն է դառնում:

Ամբողջությամբ վերցրած չի կարելի չհամաձայնվել Մ.Ն. Պոկրովսկու՝ որպես պատմաբանի բնութագրի հետ, որ բերված է Ն.Ս. Կինյայի-Նայի «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի առաջին կեսին» գրքում: Մ.Ն. Պոկրովսկու «պատմական կոնցեպցիան ձևավորվել է հիմնականում նախահեղափոխական շրջանում, երբ պատմաբան-կոմունիստի գլխավոր խնդիրն էր ինքնակալության մերկացումը՝ որպես առաջադիմության ճանապարհը փակող ռեակցիայի ամենաուժեղ հենարանի: Անհրաժեշտ էր բացահայտել ցարիզմի ո՛չ միայն

¹Покровский М.Н., Указ. соч., с.184.

²Նույն տեղում:

հակաժողովրդական բնույթը, այլև նրա քաղաքական թուլությունը, որպեսզի հեշտացվի պայքարը նրա դեմ: Այդ պատճառով,- նշում է Ն.Ս. Կինյապինան,- Պոկրովսկին, Ռուսաստանի պատմությունը շարադրելով, կանգ է առնում առավելապես անցյալի բացասական կողմերի վրա: Այստեղից էլ բխում են նրա սխալները արտաքին քաղաքական մի շարք պրոբլեմների լուսաբանման մեջ¹:

3. Նոր տեսակետներ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատճառների մասին հայ և ռուս պատմագիտության մեջ

1826-1828թթ. երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատճառները վերջին տարիներին քննության են առնվում մի քանի տեսանկյունով: Ամենից առաջ շահական Պարսկաստանի և ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականության տեսանկյունից, երկրներ, որոնցից և ոչ մեկը իրավական հիմք չունեն Անդրկովկասի նկատմամբ, որը մշտապես պատկանել էր այդ հնագույն երկրամասի բուն բնակիչներին: Վրեժխնդրության տենդով բռնկված Կաջարական Պարսկաստանը ջանք էր թափում հասնելու ոչ միայն 1804թ. սահմանների վերականգնմանը, երբ սկիզբ առավ առաջին ռուս-պարսկական պատերազմը, այլև հույս ուներ հասցնել դրանք մինչև Յուսիսային Կովկաս և Դաղստան: Ինքնակալությունն իր հերթին պատրաստվում էր տեղի ժողովուրդների օգնությամբ ամբողջ Անդրկովկասն իրեն միացնել և սահմանները հասցնել մինչև Քուռ և Արաքս գետերը: Կայսրության հարավային սահմանն ամրացնելու համար Եկատերինա 2-րդը պլաններ էր մշակում Անդրկովկասում կազմավորել քրիստոնեական պետություններ Ռուսաստանի հովանավորության տակ «սահմանային միջնապատի» կազմում: Ինչպես նշեցինք, այդ միջնապատի կառուցումն սկսվել էր 1783թ. Ղրիմի միացումով Ռուսաստանին, ինչպես նաև, Գեորգիևսկի պայմանագրով Վրաստանի միացումով: Սակայն Երևանի խանությունում դեռ գտնվում էին պարսկական զորքեր, իսկ Արևելյան Անդրկովկասում առանձին խանությունները հայ և ադրբեջանական խառն բնակչությամբ (Շիրվանի, Գանձակի) կառավարվում էին շահի կուսակալների կողմից: Ավելին, ռուսական զորքերը բավականին մեծ հեռավորության վրա էին գտնվում, իսկ Թիֆլիսի ռուսական կայազորը չափազանց սակավաթիվ էր բաղկացած ընդամենը երկու գումարտակից՝ գնդապետ Բուրմաշևի հրամանատարությամբ, որոնք բացի այդ, ետ էին կանչվել Մոզդոկյան գիծ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ըստ վրաց-թուրքական

¹Киняпина Н.С., Внешняя политика России первой половины XIX века, М., 1963, с.19.

պայմանագրի, որ կնքված էր Ախալցխայի փաշայի հետ՝ Վրաստանը ռուս-թուրքական պատերազմի թատերաբեմի չվերածելու նպատակով: Գեորգիևսկի պայմանագրի կնքումից հետո Վրաստանի ինքնապաշտպանության անկարողությունը հանգեցրեց այն բանին, որ, ինչպես արդեն նշել ենք, շահական գահի նկատմամբ հավակնություններ ունեցող Աղա-Մուհամմեդ-խանն իր զորքով 1795թ. սեպտեմբերի 12-ին կրակի մատնեց Թիֆլիսը և դրա հետ մեկտեղ վրաց թագավոր Յերակլ 2-րդի պալատը: Այդ հրդեհի կրակներում 1795թ. զոհվեց հայ ժողովրդի մեծ զավակ Սայաթ-Նովան, հազարավոր վրացիներ և հայեր գերի վերցվեցին¹ Աղա-Մուհամմեդ-խանի և նրան ուղեկցող Ջիադ-օղլի տոհմից սերված, Գանձակի խան Ջավադի կողմից, որն սպանվեց 1802թ. գեմ. Ցիցիանովի զորքերի կողմից՝ Գանձակի բերդը գրոհելու ժամանակ: Երկու ռուսական գումարտակ, որ մեծ ուշացումով ուղարկվել էին ռուսական զորքերի հրամանատար գեմ. Գուդովիչի կողմից «Վրաստանը փրկելու», դանդաղ շարժվում էին դեպի նպատակակետ և չէին կարողանում դուրս գալ Ռազմավիրական ճանապարհից, և երբ մտան Վրաստան, այնտեղ արդեն պարսկական զորքեր չէին մնացել: Տեղյակ չլինելով Վրաստան և Դաղստան ուղարկված ռուսական երկու ջոկատների քանակի մասին, Աղա-Մուհամմեդ-խանը, ենթադրելով, որ ռուսները պատրաստվում են շրջապատել իրեն ու արքանի մեջ առնել, մեծ աճապարանքով վերադարձավ Պարսկաստան՝ թողնելով Մուղանում հարյուրավոր պարսիկ վիրավոր զինվորներ և մարտասայլեր:

1795-1797թթ. Աղա-Մուհամմեդ-շահի երկու արշավանքները կարողացան համոզել Անդրկովկասի քրիստոնեական ժողովուրդներին, որ առանց Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու և առանց Անդրկովկասում ռուսական մեծաքանակ զորքերի տեղակայման, ինչպես նաև առանց Երևանի խանության մեջ և ամբողջ Արևելյան Յայաստանի տարածքում ռուսական զորքերի առկայության, չէր կարող խոսք լինել հայկական պետության ստեղծման մասին: Հենց այդ պատճառով XIX դարի սկզբից, երբ Ռուսաստանը պատերազմում էր Պարսկաստանի դեմ ամբողջ Անդրկովկասը նվաճելու համար, դա հայ ժողովրդի համար ևս փրկության միակ ելքն էր, քանի որ սահմանային սիմվոլիկ միջնապատի կազմում քրիստոնեական պետությունների կազմավորման պլանը տապալվեց Աղա-Մուհամմեդ-խանի զորքերի կողմից, իսկ 1801թ. վրացական թագավորության վերացումն արդեն հայ ժողովրդի հրաժեշտն էր իր դարավոր երազանքին ու հույսերին՝ ստեղծել մոտ ժամանակներում հայկական ազգային պետականություն: Այդ բանը հաստատվեց

¹Գերիները ազատագրված և վերադարձված էին Վրաստան արքայորդի Ալեքսանդրի կողմից 1796թ. մարտին, երբ գեմ. Վ.Չուբովը կազմավորում էր Կասպյան կորպուսը:

Երևանի մարզի կազմավորումով, որի մեջ մտնում էին Երևանի և Նախիջևանի նահանգները, քանի որ այդ մարզը նախատեսված էր Արևելյան Հայաստանի նահանգավորման պրոցեսի արագացման և Ռուսաստանյան կայսրության տնտեսության համակարգի մեջ նրա ներառման համար: Այդ նշանակում էր, որ 1813թ. Գյուլիստանի պայմանագիրը չէր բավարարում կողմերից և ոչ մեկին և ռուս-պարսկական երկու պատերազմների միջանկյալ փուլ էր միայն: Մեզ մոտ և արտասահմանում բավական տարածված է այն տեսակետը, ըստ որի երկրորդ ռուս-պարսկական պատերազմը համարվում է առաջինի շարունակությունը, որն ընդհատվել էր 1813թ. մի շարք օբյեկտիվ պատճառներով կապված գլխավորապես 1812թ. Հայրենական պատերազմի և նրա ավերիչ հետևանքների հետ, այն է՝ Կովկասյան հատուկ կորպուսի թուլացում, Անդրկովկասից Ռուսաստան նրա զինվորական մասերի հարկադրված տեղափոխությունը՝ Ֆրանսիացիների դեմ պատերազմում դրանք օգտագործելու նպատակով, Հայրենական պատերազմից հետո Նապոլեոնի դեմ մղվող պայքարին ցարիզմի մասնակցությունը:

Առաջին ռուս-պարսկական պատերազմի վերջում Ֆաթի-Ալի-շահը և Աբաս-Միրզան ամեն կերպ փորձում էին օգտվել Ֆրանս-ռուսական պատերազմից և ամեն կերպ խուսափում էին հաշտության բանակցություններից:

Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան շահի և նրա մերձավորների կողմից ընդունվում է որպես ուրախալի իրադարձություն, մասնավորապես քանից հետո, երբ հրդեհով բռնկված Մոսկվայից Նապոլեոնի բժիշկը (Կ. Պոլսում անգլիական դեսպան Լիստոնի վկայությամբ) ժամանում է «Թեհրանի դարպասների մոտ» և հայտարարում, որ Նապոլեոնն իր խոստման համաձայն, արդեն նվաճել է Ռուսաստանը և շուտով «կվերադարձնի» Պարսկաստանին Վրաստանը¹, որը նա մեկ ուրիշ անգամ արդեն «նվիրել էր» Կաջարներին Պարսից ծոցի Կեշմ ոչ մեծ կղզու փոխարեն:

Չնայած այն բանին, որ Ֆրանսիայի հետ դաշինքը կարող էր Պարսկաստանին զրկել Անգլիայի ռազմական և ֆինանսական օգնությունից, որը կարող էր, բացի այդ, Պարսկաստանի համար վերածվել վտանգավոր թշնամու Հնդկաստանի սահմանի մոտ, Կաջարներն, այնուամենայնիվ, որոշեցին առավելագույն չափով օգտագործել իրենց հնարավորությունը և փորձել ճակատագիրը՝ հույս դնելով Նապոլեոնի հաղթանակի վրա: Ինչպես վկայում են փաստերը, Աբաս-Միրզան որոշում է գործել երկու ուղղությամբ: Մի կողմից օգտագործել Կախեթում 1812թ. բռնկված ապստամբությունը, իսկ մյուս կողմից՝ անցնել հակահարձակ-

ման և Ռուսաստանի վզին փաթաթել պայմանագիր ողջ Անդրկովկասը Պարսկաստանին միացնելու մասին:

1812թ. Կախեթի ապստամբությունը Օ. Պ. Մարկովայի գնահատմամբ հետևանք էր ցարական պաշտոնյաների կամայականությունների: Սկզբում այդ ապստամբությունը կրում էր տարերային գյուղացիական շարժման բնույթ, իսկ երբ ապստամբության գլուխ անցան ֆեոդալները, որոնք դժգոհ էին Վրաստանի միացումից Ռուսաստանին, ապստամբությունն արդեն տարածվեց Փշավիայի, Խևսուրիայի և Վրաստանի այլ շրջանների վրա և երկարատև բնույթ կրեց: 1812թ. մարտի սկզբին ճնշվելուց հետո այն վերսկսվեց ապրիլին, իսկ ապստամբների պարտությունը մայիսից հունիս բերեց ժամանակավոր անդորրություն: Կախեթի ապստամբների պարագլուխները օգնության խնդրանքով դիմեցին Աբաս-Միրզային, որը 1812թ. փետրվարին ներխուժեց ոչ թե Կախեթի, ինչպես կարելի էր սպասել, այլ Ղարաբաղ, Շուշիից ոչ հեռու (Սուլթանբուղե շրջանում), ուր շրջապատեց ռուսական ջոկատը՝ կազմված 560 մարդուց և կոտորեց նրանց մեծ մասին: Աբաս-Միրզայի այս հաղթանակը նվաճված էր նաև շնորհիվ անգլիական խորհրդական՝ մայոր դ'Արսիի հրամանատարության տակ գտնվող պարսից հրետանու, որը զըն-
¹ *Іаіиѹ³ Ү³ »ҸА³ нІ»ó éááç³ І³ Ү³ Ӧ³ çáІ³ Կաջարներին²:*

Կաջարներին և Վրաստանի փորձերը անցնելու ռուսական զորքերի դեմ հարձակողական գործողությունների: 1812թ. հոկտեմբերի 8(20)-ին սկսված ասլանդուզյան բանակցությունների ժամանակ պարսից պատվիրակությունը պահանջեց պայմանագրային սահմանների վերականգնում, և, Աբաս-Միրզան կանխատեսելով այդ բանակցությունների տապալումը, նախապես մոտեցրեց իր զորքերը Ասլանդուզի գետանցին և նախապատրաստում էր հարձակողական գործողություններ: Սակայն տաղանդավոր զորավար գեներալ-փոխգնդապետ Աբաս-Միրզային, 1812թ. հոկտեմբերի 19(31)-ին զորքերով անցավ Արաքսը Ասլանդուզի գետանցի մոտ և անսպասելի կերպով հարձակվեց պարսկական ճամբարի վրա: Աբաս-Միրզան նահանջեց² և փորձեց համախմբել ցիրուցան եղած ուժերը, սակայն մյուս առավոտ, հոկտեմբերի 20-ին Կոտլյարևսկին նոր կործանիչ հարված հասցրեց նրան, որի հետևանքով հակառակորդի քանակով գերակշռող ուժերը մեծ կորուստներ կրեցին. 1200 սպանված, 500 գերի և 119 հրանոթ³: Կորուստներ կրեցին նաև Աբաս-Միրզայի անգլիացի ռազմական խորհրդականները, որոնք մույնպես մասնակցել էին Ասլանդուզի ճակատամարտին:

Այսպիսով, 1812թ. ռազմական գործողությունների վերակսումից հե-

¹Иоаннисян А.Р., Указ. соч., с.359-361.

²Նույն տեղում, էջ 380:

³Նույն տեղում, էջ 381:

¹Иоаннисян А.Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. 387-390.

տո Աբաս-Միրզայի փորձերը՝ օգտվել Նապոլեոնի՝ Ռուսաստան կատարած արշավանքից, ձախողվեցին և հանդիսացան Գյուլիստանի հաշտության կնքման գլխավոր պատճառներից մեկը:

Այն ժամանակ, երբ Ֆաթհ-Ալի-շահը գերագնահատում էր նապոլեոնյան բանակի հնարավորությունները և հույս էր փայփայում նշանակալից տարածքային զիջումների հասնելու, անգլիական դիվանագիտությունը, հակառակ Կաջարների սպասումներին, գրավեց, ըստ էության, հակապարսկական դիրքորոշում: Թեհրանում Անգլիայի նախկին դեսպան և 1812թ. Ռուսաստանի դեմ Պարսկաստանին ռազմական օգնության կազմակերպիչ՝ Գոր Աուզլին, 1813թ. կարողանալով ռուս-պարսկական բանակցությունների ժամանակ ստանձնել միջնորդ-հաշտարարի դերը, աջակցում էր Գյուլիստանի հաշտության շուտափույթ կնքմանը «ստատուս-քվո»-ի հիման վրա և դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն ապագայում սահմանների ճշտման հեռանկարով:

1814թ. օգոստոսի 28-ին Փարիզից վերադարձած Ալեքսանդր 1-ինը պարզևատրեց բրիտանական դեսպան Գ. Աուզլին Ալեքսանդր Նևսկու շքանշանով՝ Գյուլիստանի պայմանագրի կնքման ժամանակ նրա աջակցության և գործադրած ջանքերի համար: Դրանից հետո պարսիկները Աուզլիի վրա նայում էին որպես խաբեբայի, որն իր հակառուսական քաղաքականության համար ետ էր կանչվել 1812թ., իսկ հակապարսկական և ռուսասիրական քաղաքականության համար 1813թ. պարզևատրվում էր պատվավոր շքանշանով:

Անգլիան չէր կարող հաշվի չառնել Եվրոպայում ռուսական բանակների օգտագործման հեռանկարները՝ Նապոլեոնի դեմ հետագա պայքարում, որը 1813թ. մայիսին Լյուցենի և Բաուցենի մոտ, իսկ նույն տարվա օգոստոսին Դրեզդենի տակ տեղի ունեցած ճակատամարտերում հաջողությամբ ետ մղեց հակաֆրանսիական կռաւիցիոն գորքերի գրոհը և նախկինի պես սարսափ էր տարածում անգլիացիների վրա: Եվ քանի որ Անգլիայի անվտանգության պրոբլեմը կանգնած էր նրա արտաքին քաղաքականության առաջին պլանում, անգլիական դիվանագետները, վախենալով Ռուսաստանին վանել իրենցից, այժմ արդեն ձգտում էին պատերազմի ավարտին, այն դեպքում, երբ նախքան այդ հենց իրենք էին բորբոքում և ֆինանսավորում այն:

Այսպիսի շրջադարձ կատարելով քաղաքականության մեջ, Անգլիան չէր կարող հաշվի չառնել, որ պարսից բանակը ջախջախված էր Ասլանդուզի և Լենքորանի ճակատամարտերում: Շահի բանակի կապիտուլյացիան Պարսկաստանի ծանր տնտեսական վիճակի, ինչպես նաև իննամյա պատերազմից և ժայրամասերում տարբեր ցեղերի

առաջնորդների՝ սեպարատիստական գործողություններից ուժասպառ լինելու հետևանք էր:

Գյուլիստանի պայմանագրի կնքմանը նախորդող լարված դիվանագիտական պայքարի ընթացքում Անգլիան համառորեն, թեև անհաջող, ջանում էր, որպեսզի Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվի ոչ թե հաշտություն, այլ երկարաժամկետ զինադադար՝ նախնական համաձայնության հետագա կնքումով: Այս միջոցով անգլիացիները հույս ունեին սպասել մինչև պատերազմի վերջը Եվրոպայում, որպեսզի ետպատերազմյան միջազգային իրադրության մեջ հասնեն նպաստավոր հաշտության և թույլ չտան Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը: Սակայն Ռուսաստանը հաշտություն կնքեց Գյուլիստանում 1813թ. հոկտեմբերի 12-ին կան Լեյպցիգի տակ «ժողովուրդների վճռական ճակատամարտից» չորս օր առաջ, որտեղ դաշնակցային զորքերը ջախջախեցին նապոլեոնյան բանակը, իսկ Անգլիան չհասցրեց օգտվել Պարսկաստանում այդ հաղթանակի հետևանքներից¹:

Բացառված չէ, որ Կաջարները նահանջեցին Անգլիայի ճնշման տակ, որպեսզի չգրկվեն անգլիական օգնությունից Ռուսաստանի դեմ պատերազմը շարունակելու համար:

Գյուլիստանի բանակցությունների ժամանակ բրիտանական այսպիսի քաղաքականության և Գ.Աուզլիի գործունեության լույսի տակ մինչեղափոխական շրջանի ռուս պատմաբան Ի.Ա. Զինովկի տեսակետը թվում է ոչ ճիշտ և չափազանցված: Նա միանշանակ գտնում էր, որ «1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմը դադարեցված էր շնորհիվ Մեծ Բրիտանիայի կառավարության միջնորդական միսիայի, որը բացառիկ մեծ ազդեցություն ուներ Պարսկաստանի վրա և ցանկանում էր մեր ձեռքերն արձակել Արևելքում, թեթևացնելու մեր հնարավորությունը՝ բոլոր ջանքերը Նապոլեոնի՝ Եվրոպական խաղաղության թշնամու դեմ ուղղելու համար»²:

Ի.Ա. Զինովկի տեսակետն ունի նմանակներ և ժամանակակից պատմագիտության մեջ: Ըստ Թեհրանի համալսարանի պրոֆ. Մ. Մահմուդի կարծիքի՝ «Գյուլիստանի պայմանագիրը Պարսկաստանի վզին փաթաթվեց Ռուսաստանի կողմից անգլիական դեսպան Աուզլիի պնդման շնորհիվ»: Գյուլիստանի պայմանագրի օգնությամբ անգլիացիները իբր թե «ցանկանում էին հանգստացնել ռուսներին, որպեսզի նրանց նախապատրաստեն Նապոլեոնի դեմ Եվրոպայում պատերազմին»: Մ.Մահմուդը դատապարտում է Անգլիային նաև նրա համար, որ իբր նա «լավ

¹Балаян Б.П., *Международные отношения Ирана в 1813-1828гг.*, Ереван, 1967, с. 12.

²Зиновьев И.А., *Россия и Персия (Эпизод из русско-персидской войны 1827г.)* СПб., 1897, с. 1-2.

Հարաբերություններ է ստեղծել ոչ միայն Ռուսաստանի և Անգլիայի միջև, այլև Ռուսաստանի և Թուրքիայի միջև», այնուհետև, վկայակոչելով լորդ Քերզոնի Պարսկաստանի մասին գիրքը, կշտամբում է անգլիական դիվանագետներ Աուզլիին և Ֆրեզերին, որոնք անբարյացակամորեն վերաբերվեցին Պարսկաստանին և օժանդակեցին Ռուսաստանին «տիրանալու պարսկական տարածքներին»¹: Այդ տեսակետի միտումնավորությունը ակնհայտ է ոչ միայն այն պատճառով, որ Անդրկովկասը երբեք չչափաներ Պարսկաստանին, զավթված էր պարսկական զորքերով: Հարցն այն է, որ Մ. Մահմուդը նկատում է այն ժամանակվա անգլիական արտաքին քաղաքականության մեջ գոյություն ունեցած երկու հիմնական ուղղություններից միայն մեկը, որն իսկապես կապված էր Եվրոպայում ռուսական բանակները Նապոլեոնի դեմ օգտագործելու պլանների հետ, իսկ մյուսը, որը փորձում էր թույլ չտալ Պարսկաստանի լիակատար քաղաքականությունը և Անդրկովկասում ու Պարսկաստանում Ռուսաստանի տարածքային նոր նվաճումները, չէր տեսնում: Ձարմանալի չէ, հետևաբար, որ Անգլիան, 1813թ. Ելույթ ունենալով որպես խաղաղության ջատագով, միևնույն ժամանակ «հատկացրել է գահաժառանգ շահադե Աբաս-Միրզային 20 հրանոթ և 12 հազար հրացան: Անգլիական սպա Մոնտիսը 1813թ. մարտին մասնակցում էր Երևանի խանության տարածքում ռուսական ջոկատի դեմ մղվող ճակատամարտերին և չնայած նահանջի հրամանին՝ չլքեց իր հրսկողության տակ գտնվող ժանձաղուտը, թույլ չտալու համար ռուսական ջոկատին անցնել Արաքսը»²:

Կաջարները հույս ունեին օգտագործել և մյուս տեսակետը Անգլիայի քաղաքականության մեջ, որը ձգտում էր թույլ չտալ Ռուսաստանի հզորացումը և Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Պարսկական կառավարությունը Բաղդադի փաշալըղի և քրդերով բնակեցված Սուլեյմանիե շրջանի պատճառով Թուրքիայի հետ ծագած սուր վեճը կարգավորելու հարցում օգտագործեց Անգլիայի միջնորդությունը: Ըստ Անգլիայի ծրագրերի՝ պարսկա-թուրքական մերձեցումը պետք է ամրապնդեր Պարսկաստանի դիրքերը ռուսների հետ բանակցություններում և հնարավորություն տար անգլիական դիվանագետներին ճնշում գործադրելու Ռուսաստանի վրա: Բացառված չէ, այդ պատճառով, որ Գյուլիստանի բանակցությունների նախօրյակին թուրքական զորքերը մտած լինեին Աբխազիա և Գուրիա: Արևմտյան Վրաստանում, Զյուսիսային Կովկասում և Դաղստանում գործում էին սուլթանի գործակալները, Իմերեթիայում, Գուրիայում և Մենգրելիայում տարածում էին Տրապիզոնի փաշայի հակառուսական կոչերը, Թավրիզում Աբաս-Միրզայի մոտ մեկ

¹ Балаан Б. П., *Международные отношения Ирана в 1813-1828гг.*, с.13.

²Նույն տեղում, էջ 13:

անսից ավելի գտնվում էր թուրքական գործակալ Շահսևար-բեկը, իսկ Դաղստանում վրաց արքայորդի Ալեքսանդրը պարսիկների և թուրքերի օգնությամբ պատրաստվում էր ներխուժել Կախեթ¹:

Այսպիսով, հակառակ ինքնակալության պլաններին, որը ձգտում էր ամբողջ Անդրկովկասը միացնել Ռուսաստանին և կայսրության սահմանները հասցնել մինչև Քուռ և Արաքս գետերը, ինչպես նաև, հակառակ Կաջարների ձգտումներին՝ վերականգնել իրենց տիրապետությունը ողջ Անդրկովկասում և Ռուսաստանի հետ սահմանը ետ տանել մինչև Զյուսիսային Կովկաս, ռուս-պարսկական պատերազմը դադարեցվում է 1813թ.:

1813թ. ռուս-պարսկական պատերազմի դադարեցման գլխավոր պատճառներն էին՝ պարսից զորքերի պարտությունը և 1812թ. Հայրենական պատերազմում Ռուսաստանի տարած պատմական հաղթանակը, ինչպես և արտաքին այլ գործոնների ազդեցությունը, Անգլիայի շահագրգռվածությունը առաջին ռուս-պարսկական պատերազմի ավարտի մեջ՝ Նապոլեոնի դեմ մղված պայքարում ռուսական զորքերն օգտագործելու նպատակով:

Երկու ռուս-պարսկական պատերազմների (1813-1826թթ.) միջանկյալ փուլի վերջում Անգլիան շահագրգռված էր ռուս-պարսկական պատերազմի մեջ, բայց արդեն այն պատճառով, որպեսզի Ռուսաստանը դադարի Թուրքիայի դեմ պատերազմելուց, երկյուղ կրելով երկու ճակատով՝ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակ պատերազմի սպառնալիքից:

Հայ ժողովուրդը և հայկական ազատագրական շարժումը շահագրգռված էին ռուս-պարսկական պատերազմի շարունակության մեջ, քանի որ Գյուլիստանի դաշնագրով որոշված սահմանը մասնատեց առանց այն էլ բաժան-բաժան եղած հայ ժողովրդին: Գյուլիստանի հաշտության կնքումից հետո Հայաստանի հյուսիսային շրջանները և Արցախը կտրվեցին Երևանից, Նախիջևանից և Ղարադաղից, կտրվեցին դավանակից Ռուսաստանից և ընկան պարսկա-թուրք-աղբբեջանական մուսուլմանական թշնամական շրջապատման մեջ: Եթե Թուրքիայի, Պարսկաստանի և Ադրբեջանի հետ կապված Հայաստանի հիմնահարցը դիտվում էր որպես անբարի, ապա ցարիզմի հետ կապված՝ որպես պրոտեկտորատ: Պրոտեկտորատը հայ ժողովրդի համար շատ ավելի զերադասելի էր, սակայն Ռուսաստանին մնում էր դեռ ազատագրել Երևանը և Նախիջևանը պարսկական զորքերից: Դա ռուսական զորքերի հեռու գտնվելու և ուժերի ոչ նպաստավոր հարաբերակցության պայմաններում հետաձգում էր հայկական պետության կազմավորման հնարավորությունը: Գեորգիևսկի պայմանագրով և Վրացական թագավորու-

¹Նույն տեղում, էջ 15:

թյան 1801թ. վերացումով տապալվեցին Յովսեփ Արղությանի, Շահամիր Շահամիրյանի և Ալի Մուրադ-խանի ծրագրերը, իսկ Արևելյան Հայաստանի հետ Կրաստանի միավորման ծրագրերը մնացին չիրականացված՝ վրաց եկեղեցու նկատմամբ էջմիածնում համաշխարհային հայկական կրոնական կենտրոնի գերակայության, վրաց բուրժուազիայի և վաճառականության համեմատությամբ հայ առևտրական բուրժուազիայի գերիշխանության և վրաց թագավոր Յերակլ 2-րդի հեգեմոնական ձգտումների պատճառով, որը ցանկանում էր իր իշխանությունը տարածել ամբողջ Անդրկովկասի վրա և պայքարել Ղարաբաղի կառավարիչ Իբրահիմ Խալիլ-խանի գլխավորությամբ կազմակերպված մուսուլմանական ընդդիմության դեմ:

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի սկիզբը՝ 1826թ. հուլիսի 16-ը հայ ժողովուրդն ընդունեց մեծ խանդավառությամբ և Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հույսով: Մրանով էր բացատրվում հայ ազատագրական շարժման ավանգարդում գտնվող հայ աշխարհագրականների ակտիվ մասնակցությունը ռուս-պարսկական երկու պատերազմներին:

Ականավոր հայ հասարակական գործիչներ Իսրայել Օրու, Յովսեփ Էմինի եվրոպական պետություններից օժանդակություն և պաշտպանություն ստանալու անհաջող փորձերից հետո հայ ժողովրդի փրկությունն ու գոյատևումը կապվել էր ռուսական դաշնակից գործերի հետ, որոնք XIX դարի սկզբին երկու անգամ պատերազմեցին Թուրքիայի և Պարսկաստանի դեմ և հաղթեցին նրանց:

Ցարիզմի քաղաքականությունից և նրա գերիշխանական ծրագրերից, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասը գրավելու ձգտումներից անկախ՝ հայ աշխարհագրականները և ռուս զինվորները դաշնակիցներ էին ընդհանուր թշնամու դեմ պայքարում, սակայն հայ ազատագրական շարժման նպատակները երբեք չեն համընկել ցարիզմի նպատակներին: Շահերի համընկնումը եղել է միայն հարաբերական և որոշակի նշանակությամբ, որը ծայրահեղ պայմաններում անհրաժեշտ էր ազգի գոյատևման համար:

ՊԼՈՒՏ ԵՐԿՐՈՐԳ

ԱՆՂԼԻԱՅԻ ԴԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԳ ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՆՁԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ԱՆՂԼՈՒ-ԻՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՄ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ժամանակակից ամերիկյան պատմաբան Մուրիել Էտկինի տեսակետը XIX դարի սկզբին անգլո-իրանական և ռուս-իրանական հարաբերությունների մասին

Կովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության մասին անգլիերեն գրքերի մեծ մասը հրատարակվել է XIX դարում, իսկ Ջոն Բեդլիի «Կովկասի նվաճումը Ռուսաստանի կողմից» աշխատությունը հրատարակվել է հենց դարասկզբին¹:

Սան Անտոնիոյում Տեխասի համալսարանի պրոֆեսոր Մուրիել Էտկինի «Ռուսաստանը և Պարսկաստանը, 1780-1828թթ.»² մենագրությունը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում իրենից: Գրքում լայնորեն օգտագործվել են ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի արխիվները, մինչևիդափոխական շրջանի և խորհրդային պատմագիտական գրականությունը ռուս, հայ, պարսիկ և այլ հեղինակների աշխատությունները:

Ամերիկյան ականավոր պատմաբան Մ.Ա. Էտկինը Ռուսաստանի, Կովկասի և Պարսկաստանի պատմության, Պավել 1-ինի պրագմատիկ դիվանագիտության, Ղարաբաղում Իբրահիմ-Խալիլ-խանի գործունեության, ռուս-պարսկական պատերազմների մասին մի շարք աշխատությունների հեղինակ է³:

Բազմալեզու հարուստ փաստական նյութերի հիման վրա սուր քա-

¹ Curson G. N., *The Persia and Persian Question, vol. I-II, London, 1892; Wilson A., Persia, London, 1932; Watson R., A History of Persia from Beginning of the XIX Century to the Year 1858, London, 1866; Sykes P., A History of Persia, vol. I-II, London, 1951; MacNeill J., Progress of Russia in the East, London, 1836; Fraser J.B., Travels and Adventures in the Persian Provinces, London, 1826; Malcolm J., The History of Persia, London, vol. I, II, 1829; Powlinson H., England and Russia in the East, London, 1875.*

² Atkin M.A., *Russia and Iran, 1780-1828. The University of Texas at San Antonio, University of Minnesota Press, Minneapolis, 1980.*

³ Atkin M.A., *The Strange Death of Ebrahim Khalil khan of Garabagh, 1979 (Irasian Studies); Atkin M.A., The Khanates of the Eastern Caucasus Russo-Iranian War, Ph. D. Dissertation, Yale University, 1979; Atkin M.A., The Pragmatic Diplomacy of Paul I: Russis's Relations With Asia, 1776-1801, Slavic Review, 38, 1979.*

ղաքական ոգով Էտկինը գրել է իր աշխատությունները, թեպետև վերջիններս բրիտանական և պարսկական դիվանագիտության գործունեության զնահատականների մեջ երբեմն զուրկ չեն միտումնավոր լինելուց, որը հետևանք էր «սառը պատերազմի» ժամանակների ազդեցության: Էտկինի «Ռուսաստանը և Պարսկաստանը, 1780-1828թթ.» մեծագուրությունը շատ բանով տարբերվում է XIX դարի անգլիական պատմաբանների աշխատություններից և հիմնականում արտահայտում XIX դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմների պատմության արդի ըմբռնումը:

Հրապարակայնության պայմաններում մենք ստիպված եղանք հրաժարվել խորհրդային պատմաբանների աշխատությունները լայնորեն օգտագործող ամերիկյան «բուրժուական» պատմաբանների նկատմամբ անվերապահ առճակատումից: Անհրաժեշտ էր գործնականապես վերահիմաստավորել Մուրիել Էտկինի տեսակետները, մանավանդ որ խորհրդային պատմաբանները ևս «տուրք էին տվել սառը պատերազմի» գաղափարախոսությանը, որը խանգարում էր օժանդակելու համատեղ ռուսումնասիրություններ կատարելու հեռանկարին:

Քանի որ Մ.Ա. Էտկինը իր աշխատությունում հաճախ է էքսկուրսներ կատարում դեպի Պյոտր 1-ինի և պարսկական Սեֆյանների դինաստիայի ժամանակների ռուս-պարսկական հարաբերությունների պատմությունը, ապա մենք ևս ստիպված ենք երբեմն հեռանալ թեմայից:

Մուրիել Էտկինը գտնում է, ընդ որում ոչ առանց հիմքի, որ Պարսկաստանի հետ ռուսաստանյան քաղաքականության ուշագրավ խթաններից էին Պյոտր 1-ինի և Եկատերինա 2-րդի հատուկ հետաքրքրությունը հայերի և վրացիների նկատմամբ: Երկուսն էլ սիրաշահում էին նրանց՝ մուսուլմանական տիրապետությունից Կովկասի քրիստոնյաների ազատագրման մասին իրենց հայտարարություններով և տարբեր գաղափարներով, որոնք այդ երկու քրիստոնյա ազգությունների կողմից ոգևորությամբ էին ընդունվում, մանավանդ, երբ հարցը վերաբերում էր հայերի և վրացիների պաշտպանությանը կամ պարսկական կենտրոնական նահանգները նվաճելու համար՝ հարավային շրջաններ ռուսական գործեր ուղարկելուն: Կովկասյան քրիստոնյաները մշտապես պատրաստ էին միանալ ռուսական բանակին¹:

Էտկինն ափսոսում էր, որ XVIII դարի 20-ական թվականներին Պյոտր 1-ինը չկարողացավ օգտագործել վրաց և հայոց գործերի՝ իրեն միանալու պատրաստակամությունը, իսկ 1790թ. արդեն հայերն ու վրացիները չկարողացան միավորել իրենց գորախմբերը:

Պյոտր 1-ինը և Եկատերինա 2-րդը, ընդգծում է Մ.Էտկինը, շահագրգռված էին համագործակցելու հայերի և վրացիների հետ որպես

¹Atkin M. *Russia and Iran*, p.5.

ասիական երկրների առևտրական հարաբերությունների մեջ փորձված և անփոխարինելի միջնորդների: Էտկինը կանգ է առնում նաև հայերի և վրացիների նկատմամբ ունեցած ռուսական ցարերի վերաբերմունքի բացասական կողմերի վրա: Մի կողմից Պյոտր 1-ինը և Եկատերինա 2-րդը հանդես էին գալիս խոստումնալից հայտարարություններով՝ օժանդակելու և նրանց պետականությունը վերականգնելու մասին, իսկ մյուս կողմից, ինքնակալությունն ամենուրեք թողնում էր հայերին և վրացիներին առանց Ռուսաստանի գործուն օգնության և պաշտպանության¹: Պյոտր 1-ինի կամպանիաներից մեկի ժամանակ, երբ վրացական և հայկական գործերը նախապատրաստվում էին միանալ ռուսական գործերին, վրաց Վախթանգ թագավորն այն աստիճան վարկաբեկվեց, որ ստիպված եղավ մինչև իր կյանքի վերջն ապրել տարաբանության մեջ, իսկ նրա հետ համագործակցող Ղարաբաղի և մյուս վայրերի հայերը ստիպված էին ապաստարան փնտրել անմատչելի լեռներում²: Եկատերինա 2-րդի ժամանակ վրացիները բողոքում էին Գեորգիևսկի պայմանագրի համաձայն Ռուսաստանի վերցրած պարտավորությունների և Վրաստանի 1795թ. անպաշտպան վիճակի անհամապատասխանությունից, իսկ Եկատերինա 2-րդն իր հերթին ջանում էր խուսափել Թուրքիայի հետ 1724թ. պայմանագիրը որևէ կերպ հիշատակելուց: Այդ նույն ձևով կայսրուհի Աննայի կողմից մոռացության էին ենթարկվել Պարսկաստանի հետ կնքված երկու պայմանագրերը, քանի դեռ XIX դարի սկզբին չբռնկվեց երկու պատերազմ Ալեքսանդր 1-ինի ու Նիկոլայ 1-ինի և Ֆաթի-Ալի-շահի միջև³:

Էտկինը Միջին արևելքում Եկատերինա 2-րդի արտաքին քաղաքականությունն ավելի բարձր է զնահատում, քան Պյոտր 1-ինի քաղաքականությունը: Նա գտնում է, որ Եկատերինա 2-րդը Պարսկաստանի հետ ուրույն քաղաքականություն է մշակել ժամանակի պահանջների սեփական վերլուծության հիման վրա:

Այս միտքը հաստատելու համար Էտկինը վկայակոչում է Կովկասի և Պարսկաստանի ժողովուրդներին ուղղված Եկատերինա 2-րդի հրովարտակը: Իր նոր քաղաքականությունը կայսրուհին բնորոշում է ոչ թե ռուսաստանյան թալանված վաճառականների շահերից ելնելով, ինչպես Պյոտր 1-ինի ժամանակ էր, այլ Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող Վրաստանի անվտանգությունը և բռնակալ Աղա-Մուհամմեդ-խանի ճնշումից բոլոր պարսկահպատակների, ներառյալ մուսուլմանների, պաշտպանությունն ապահովելու հարցից⁴:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Ուշագրավ է, որ Էտկինը պատմական գուգահեռ է անցկացնում և «նմանություն» է տեսնում XVIII դարի սկզբի և վերջի «Պարսկաստանը մասնատելու» նպատակով ռուսական զորքերի գործողությունների մեջ, օրինակ բերելով Պյոտր 1-ինի 20-ական թվականների սկզբի և Վալերիան Զուբովի 90-ական թվականների կասպյան արշավանքները: Հայտնի է, որ Կասպյան կորպուսի գեներալ Վալերիան Զուբովի 1796թ. արշավանքը Եկատերինա 2-րդի պատասխանն էր Վրաստանում Աղա-Մուհամմեդ-խանի բարբարոսություններին, որը սրբապղծել էր քրիստոնեական եկեղեցիները, հրի էր մատնել թիֆլիսը, թալանել էր Էջմիածնի վանքի նվիրական մատուցները և ավերել էր ամբողջ Անդրկովկասը՝ 1783թ. Ռուսաստանի հովանավորությունն ընդունած վրաց Յերակլ թագավորին պատժելու համար:

Գեներալ Զուբովի զորքերը չկարողացան կայունացնել լարված վիճակն Ադրբեջանում, որտեղ արշավանքի եզրափակիչ փուլում բացահայտվել էր Ղարաբաղի կառավարիչ Իբրահիմ-խալիլ-խանի գլխավորությամբ մուսուլմանական խաների հակառուսական դավադրությունը Կասպյան կորպուսի հրամանատար գեներալ Զուբովի դեմ: Բացի այդ, Կասպյան կորպուսի Ձինվորական խորհրդի հավանությամբ մայոր Ի.Բոգդանյան-Սերեբրովի նախագծով 1797թ. գարնանը սպասվում էր Երևանի բերդի ազատագրումը մուսուլմանական կայազորից, իսկ Իբրահիմ-խալիլ-խանի ընդդիմությունը մտադրվել էր թույլ չտալ այդ, սպանելով գեներալ Զուբովին: Մինչդեռ Զուբովը ոչ մի փորձ չէր արել Պարսկաստանը մասնատելու, իսկ Գիլանի նահանգում ժամանակավորապես գտնվող ռուսական զորաբաժանումներն ամբողջ Կասպյան կորպուսի հետ միասին ետ էին կանչվել Սոգդոկյան գիծ 1796թ. դեկտեմբերի սկզբին Պավել 1-ին կայսեր կողմից, որը Եվրոպայից ևս ռուսական զորքերը ետ կանչեց, որպեսզի Ռուսաստանը «չունչ քաշի» անընդհատ պատերազմներից: Չնայած այն բանին, որ XVIII դարի 20-ական թվականների սկզբին հոգեվարք ապրող Սեֆյանների տերություններն սկզբում աֆղանները, որոնք գահընկեց արեցին Հուսեյն շահին և 1722թ. հոկտեմբերի 22-ին տիրացան շահական գահին, իսկ 1723թ. գարնանը Պարսկաստան և Անդրկովկաս ներխուժեցին թուրքական զորքերը և գրավեցին Պարսկաստանի մեծ մասը, Էտկինն իր գրքի տարբեր տեղերում փորձում է ապացուցել, որ Սեֆյանների տերության անկումը տեղի էր ունեցել Ռուսաստանի պատճառով, որից օգնություն էր հայցել աֆղանների կողմից գահընկեց արված Հուսեյն շահի որդին՝ Թահմազ 2-րդը: Այսպես երևան եկավ Ս.Էտկինի սխալ տեսակետը՝ Պարսկաստանի գործերին Պյոտր 1-ինի միջամտության այսպես կոչված «վերջնական ստադիայի» մասին Սեֆյանների կայսրությունը դեզինտեգրացիայի ենթարկելու ճանապարհով, համաձայն Ռուսաստանի հետ կնքած երկու պայ-

մանագրերի՝ 1723թ. սեպտեմբերի 23-ին Պարսկաստանի հետ (Պետերբուրգյան համաձայնագիրը), 1724թ. հունիսի 24-ին՝ Թուրքիայի հետ¹: Սակայն դրա հետ մեկտեղ նա չի մատնանշում, որ ագրեսիան կատարվել էր աֆղանների և թուրքերի կողմից, իսկ Անդրկովկասը Պյոտր 1-ինի ժամանակ դեռ նվաճված չէր ցարիզմի կողմից:

Ի.Պ.Պետրուշևսկին «Պարսկաստանի պատմության» մեջ նշում էր, որ ըստ Պետերբուրգյան համաձայնագրի Ռուսաստանը պարտավորվում էր օգնել Թահմազ 2-րդին աֆղանների դեմ նրա պայքարում, որի համար ստանալու էր Դաղստանի և Շիրվանի մերձկասպյան տարածքը Դերբենտով և Բաքվով, ինչպես նաև Գիլանով, Մազանդարանով և Գորգանով (Աստրաբադ)², սակայն ռուսական զորքերը գրավեցին միայն Գիլանի մի մասը: Անկախ այն բանից, որ Ի.Պ.Պետրուշևսկու այս հայտարարությունը լրացուցիչ ուսումնասիրման և ճշգրտման կարիք է զգում, շատ կարևոր է հիշատակել, որ կայսրուհի Աննան համաձայնվեց (1723թ. Ռեշտի և 1735թ. Գանձակի պայմանագրերով - Ա.Բ.) հանել ամբողջ ռուսական զորքերը նախկին սեֆյանական նահանգներից³: Այս պայմանագրերով կայսրուհի Աննան փորձում էր վերջ դնել 1724թ. ռուս-թուրքական պայմանագրի հետ կապված «թյուրիմացությանը»:

Ս.Էտկինը գտնում է, որ «Ասիայի այդ շրջանում ցարական էքսպանսիան իր բոլոր լուրջ հետևանքներով հանդերձ ավելի շուտ պատահական էր, քան մանրագին մտածված և ծրագրված: Կովկասը որպես ռազմական գործողությունների ասպարեզ (ներառյալ և կասպյան ծովափը), ինչպես նաև Ասիայի հետ Ռուսաստանի առևտուրն ընդլայնելու համար որպես առևտրական բազա օգտագործելու Եկատերինա 2-րդի ոչ միշտ հաջող փորձերը վերածվում էին խաչակրաց արշավանքի՝ Պարսկաստանի դեմ մղած պայքարում և ռուսաստանյան պատիվը բարձր պահելու գործում: Սակայն նրա այս առաջին փորձերը լավ չէին ի կատար ածվում համապատասխան պատրաստվածության բացա-

¹ Atkin M.A., Russia and Iran, 1780-1828. The University of Texas at San Antonio, Minneapolis, 1980, p.4.

² Петрушевский И.П., Иран в конце XVIII- первой половине XIXв. В кн. История Ирана, изд. МГУ, М., 1977, с. 201.

³ Նաղիր շահի և իշխան Գոլիցինի միջև 1735թ. մարտի 10-ին կնքված պայմանագրի առաջին հոդվածում նշվում էր, որ «Ռուսաստանի շատ երախտիքների և բարեկամության համար» Պարսկական պետությունը ...խոստանում է Ռուսաստանյան կայսրության հետ լինել փոխադարձ բարեկամական հարաբերությունների մեջ, Ռուսաստանի բարեկամներին ընդունելով որպես Պարսկաստանի բարեկամներ, իսկ Ռուսաստանի թշնամիներին՝ որպես իր թշնամիներ: Երրորդ հոդվածը առաջարկում էր առանց Ռուսաստանի մասնակցության չկնքել սեպարատ համաձայնագիր Թուրքիայի հետ: Սակայն Ռուսաստանը չէր մասնակցում Ղուրդանում 1746թ. սեպտեմբերին թուրք-պարսկական պայմանագրի կնքմանը:

կայության և տարածաշրջանի անբավարար իմացության պատճառով¹: Դա հանգեցրեց Վրաստանի կործանմանը և Կաջարների այն հակագիտական տեսակետի ստեղծմանը, ըստ որի իրենք են իբր ամբողջ Անդրկովկասի օրինական տիրակալները: Դա մարտահրավեր էր՝ ուղղված Ռուսաստանի քաղաքականությանը: Էտկինը գտնում էր, որ այդ բոլորը «ոչ մի ընդհանուր բան չունեն դեպի տաք ծովեր ռուսական արշավանքների մասին առասպելների կամ ասիական երկրները նվաճելու Ռուսաստանի ձգտումների հետ»: Ընդհակառակը,- նշում էր Էտկինը,- Ռուսաստանը հարյուրամյա եվրոպականացումից հետո կատարելագործում էր իր գաղութային ակնկալիքները և հեռանկարները և գիտակցորեն կրկնում էր արևմտյան երկրների զավթողական քաղաքականությունը: Այս բոլորը պետք է ապացուցեր, որ Ռուսաստանը քաղաքակիրթ և մեծ տերություն էր, ինչպիսին մյուս տերություններն էին Արևմտյան Եվրոպայում, որտեղ գերիշխում էր գաղութատիրական քաղաքականության առավելության համոզմունքը, իսկ պասսիվությունն այդ հարցում դիտվում էր որպես ամոթալի թուլություն²: Այդ պատկերացումները փոխվեցին,- նշում է Էտկինը,- հավանորեն 1796թ. միայն (Վ. Ջուբովի Կասպյան կորպուսի արշավանքի ժամանակ - Ա.Բ.), բայց ոչ ավելի ուշ, քան 1801թ. (երբ Վրաստանը միացվեց Ռուսաստանին - Ա.Բ.):

Ս.Էտկինը գտնում է, որ ռուս-պարսկական պատերազմների պատճառները շատ բանում Անդրկովկասի քաղաքացիական և ռազմական հաստատությունների կողմից պետերբուրգյան արքունիքին ոչ հավաստի տեղեկություններ տալու հետևանք էին՝ «Չունենալով տեղեկություններ Պարսկաստանի և սահմանամերձ շրջանների մասին, տեղական իշխանությունները իրենց կոպիտ սխալները ներկայացնում էին որպես հակառակորդների կողմից փաստերի թշնամական նենգափոխում կամ անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում սխալ լրատվությանը, որին իրենք հավատում էին: Այդ խաբեության հետևանքով Պետերբուրգում Պարսկաստանի մասին սխալ կարծիք էր ձևավորվում³:

Ուշագրավ է նաև Էտկինի մեկ այլ տեսակետն այն մասին, որ «ցարական Ռուսաստանն իր գաղութատիրական քաղաքականությունն սկսեց այն ժամանակ, երբ վերամիավորված պարսկական պետությունը նույնպես սկսեց իր սեփական գաղութարարական քաղաքականությունը: Ավելի ճիշտ, պարսից իշխանությունները կարծում էին, որ իրենց ուժերից վեր չի լինի իրենց իշխանությունը վերահաստատել հյուսիսարևելյան այն սահմանների վրա, որտեղ Սեֆյանների նախկին ծաղկող գաղութներն էին: Եվ, չնայած Սեֆյանների պարտությանը, պարսիկներն

ըստ սովորության Սեֆյանների հեղինակության ազդեցության տակ շարունակում էին իրենց գործողությունները, որպեսզի վերականգնեն Պարսկաստանը Սեֆյանական սահմաններով»¹, իսկ դա պայմաններ էր ստեղծում Ռուսաստանի հետ Պարսկաստանի բախման համար:

Նպատակներին հասնելու համար Ռուսաստանի օգտագործած մեթոդները,- նշում է Էտկինը,- ուժեղացնում էին պարսկական ընդդիմությունը և սպառնում էին Կաջարների անկախությանը, հատկապես այն բանից հետո, երբ, թվում էր, թե կողմերից ոչ մեկն ընդունակ չէ հաղթանակ տանելու»²: «Սակայն հետագայում պատերազմ վարելու պարսկական մեթոդների և ռազմական բարենորոգումների թուլությունը հանգեցրեց Ռուսաստանի հաղթանակին: Իսկ երբ Պարսկաստանը փորձում էր երկրորդ ռուս-պարսկական պատերազմի մեջ իր կրած վնասների հատուցումն ստանալ, Ռուսաստանը 1828թ. հերթական, առավել վճռական հաղթանակ տարավ: Պարսկական կառավարությունը պարտված էր, ստորացված և ավելի պակաս, քան երբևէ, ընդունակ՝ հաղթահարելու արագ փոփոխվող աշխարհի պրոբլեմները: Դրանից հետո սկսվեց դեպրեսիայի և անկումայնության երկարատև պրոցեսը»³:

Ս.Էտկինի կարծիքով, այսպես կոչված «վիճելի գոտու» բնակիչները դիտում էին «կայսերական այդ կոնֆլիկտները» «զգուշավոր լավատեսությամբ»: Այնպիսիք, ինչպիսիք էին վերջին երկու վրաց թագավորները և Գանձակի Ջավադ խանը, ուրախ կլինեին, եթե Անգլիան կամ Ֆրանսիան, կամ որևէ այլ մեծ տերություն դաշնակից լիներ Ռուսաստանի նման ավանդական հակառակորդի դեմ, որովհետև նրանք, ովքեր դիմակայում էին Ռուսաստանին, դուրս էին մղված, իսկ նրանք, ովքեր ընդունել էին Ռուսաստանի պայմանները, միևնույն է, ենթարկված էին անձբսիայի⁴: Ինչ վերաբերում է սահմանամերձ շրջանների բնակչությանը, ապա նա շահագրգռված չէր մեծ տերությունների միջև գոյություն ունեցող մրցակցությամբ տարածաշրջանում և չէր ուզում ներքաշված լինել որևէ պատերազմի մեջ: Բնակչությունը զգույշ էր ռուսների հետ, երկյուղ կրելով նրանց կողմից հակախլամական միջոցառումներ կիրառելու հնարավորությունից, բայց այդ բանը նրանց անգիտակցաբար չէր վերածում Պարսկաստանի կողմնակիցների⁵: Կովկասցիների մեծ մասը ցանկանում էր, որ իրենց հնարավորություն տրվեր զբաղվելու նորմալ գործունեությամբ, իրենց գոյությունը պահպանելու համար: Ոմանք փորձում էին լուծել իրենց պրոբլեմները փախուստով, իսկ

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 164:

⁵ Նույն տեղում:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 163:

ոմանք (մուսուլմանները - Ա.Ք.) այնպես էին հիասթափվել ցարական կառավարությունից, որ Պարսկաստանին նայում էին որպես իրենց հովանավորողի և ռուսներից ազատագրողի: Էտկինը նշում է, ընդ որում, որ «...այդ բոլորը տեղի էր ունենում նաև երկրորդ ռուս-պարսկական պատերազմի տարիներին, երբ Պարսկաստանի ռազմական թուլությունը երկիրը պարտության մատնեց և այդ անգամ, և՛ այն բանից հետո, երբ Ռուսաստանը սթափվեց անակնկալի գալով և նորից հաղթանակ տարավ»¹:

Մ.Էտկինն ընդգծում է, որ նապոլեոնյան պատերազմների և առաջին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Անգլիան և Ֆրանսիան պաշտպանում էին այդ պատերազմն այն դեպքում, երբ եվրոպական մեծ տերություններից որևէ մեկը գտնվում էր Ռուսաստանի հետ պատերազմական գործողությունների մեջ: Երկու արևմտյան տերություններն էլ կնքեցին Պարսկաստանի հետ պայմանագրեր, որոնք անհարիր էին Ռուսաստանի դեմ պայքարող Պարսկաստանի շահերին: Դրանից անկախ, երկու կողմերը խրախուսում էին շահին շարունակելու պատերազմը և ռազմական օգնություն էին ցույց տալիս այնքան, քանի դեռ այդ գործողությունները համապատասխանում էին իրենց շահերին: Իսկ երբ սկզբում Ֆրանսիան, այնուհետև նաև Անգլիան հաշտություն կնքեցին Ռուսաստանի հետ, նրանց օգնությունը Պարսկաստանին դարձավ ոչ ցանկալի եվրոպական այդ պետությունների համար, և Պարսկաստանը դադարեց այդ օգնությունը ստանալուց²: Այդ պատճառով, երբ Ֆրանսիական դեսպանությունը 1809թ. հեռացավ Պարսկաստանից, Ֆրանսիական ազդեցությունը Պարսկաստանում չափազանց թուլացավ, իսկ Անգլիան պահպանում էր Ռուսաստանի հետ առնչությունները՝ Ֆրանսիայի հետ իր բարեկամական հարաբերությունները վերականգնելուց հետո ևս³:

Մ.Էտկինը ամերիկյան պատմաբանների մեջ առաջիններից մեկն էր, որն ուշադրություն դարձրեց այն փաստի վրա, որ Պավել 1-ինի՝ Յնդկաստանը գրավելու փորձը ժամանակավոր մոլորության հետևանք էր, որը բխում էր ոչ թե Յնդկաստանի նկատմամբ նրա ունեցած հավակնություններից, այլ Եվրոպայում առաջացած յուրահատուկ ճգնաժամից՝ կապված Ռուսաստանի շահերի դեմ Բալթիկայում ստեղծված բրիտանական սպառնալիքի հանդեպ հակակշիռ ունենալու նրա ցանկության հետ⁴: Սակայն վիճելի էր մնում դեպի Յնդկաստան ռուսների առաջխաղացման հարցը, որը բրիտանական ղեկավար շրջաններին ահա-

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում, էջ 165:

բեկեց «մեծ խաղի» ընթացքում, որի բովանդակությունն Էտկինը այդպես է մեկնաբանում, չնայած նրան, որ անգլո-ֆրանսիական զորքալ պատերազմը ամենից քիչ էր նմանվում «մեծ խաղի»: Իսկ երբ ֆրանսիական վտանգն անցավ, Ռուսաստանը խզեց դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Անգլիան կորցրեց իր ունեցած հետաքրքրությունը պարսկական գործերի հանդեպ և այն երկրորդ պլան զցեց, իսկ պարսկական կառավարությունը 1828թ. համարյա թե սպառնեց երկիրը ղեկավարելու իր ընդունակությունները¹:

Կարելի է համարել, որ Մ.Էտկինի գիրքը ամբողջությամբ վերցրած արտացոլում է ոչ միայն ժամանակակից, այլև ամբողջ արևմտաեվրոպական պատմագիտության հիմնական տեսակետները, իսկ այդ երկար տարիների ընթացքում առաջին անգամ հնարավորություն է ընձեռում անկեղծ երկխոսություն վարել ռուս-պարսկական պատերազմների ընթացքում այդ երկու երկրների հարաբերությունների շատ հարցերի և այդ պատերազմների հիմնական պատճառները մեկնաբանելու շուրջ:

Այդ ամենով հանդերձ, պետք է վերապահություն անել, որ այսօր, երբ վերջ է տրված «սառը պատերազմին», մեր դիրքերն ավելի գերադասելի են Մ.Էտկինի 1980թ. դիրքերի համեմատությամբ, մենք գտնվում ենք ոչ միանման պայմաններում: Համեմայն դեպս, այսօր մեզ համար առավել հեշտ է քննադատել այդ հայացքները, քանի որ այն ժամանակ նա դեռ «սառը պատերազմի» ազդեցության տակ էր գտնվում: Եվ այսօր մենք չպետք է թաքնվենք այն քննադատությունից, որն ուղղված էր խորհրդային պատմաբաններին 1980թ., առավել ևս, որ, ինչպես ցույց տվեցին փաստերը, Էտկինի աշխատության մեջ շատ կան պատահական, միտումնավոր և ոչ օբյեկտիվ հայտարարություններ, որոնք պահանջում են գիտական և ոչ թշնամական «հակահարձակում»: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրա գրքի 6-րդ գլխի վրա՝ նվիրված ռուս-պարսկական պատերազմների պատճառներին: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Էտկինը հավաքել և կազմել է այդտեղ իր հակախորհրդային հայացքներից մի կույտ, ապա միայն գրել է այն, ինչ իսկապես մտածում է:

«Ռուսաստանյան պաշտոնական անձինք,- գրում է Էտկինը, չասելով ում մասին է խոսքը,- աչքի էին ընկնում իրենց բնորոշ հատկությամբ՝ չհասկանալ, որ մարդիկ կարող են ըմբռնել իրենց սեփական շահերը, որոնք տարբերվում են Ռուսաստանի շահերից»²:

Չի կարելի չնկատել, որ Մ.Էտկինը դատապարտում է ոչ միայն ցարական Ռուսաստանը, առավել ևս, երբ այնուհետև նա հարձակվում է

¹Նույն տեղում, էջ 166:

²Նույն տեղում, էջ 90:

խորհրդահայ պատմաբանի վրա: Ետկինը ջանում է, իբր անաչառ կերպով, արդարացնել Անդրկովկասում արևմտյան մեծ տերությունների քաղաքականությունը, ելնելով վերջիններիս ազգային շահերից և ի նկատի չունենալով այն ժամանակվա Ռուսաստանի շահերը:

Այնուհետև Մ. Ետկինը ոչ պատշաճ անբարեգուսա ձևով խրատում է խորհրդային պատմաբաններին.- «Պատերազմը Կովկասից Ռուսաստանին հեռացնելու նպատակով բրիտանական խաղերի հետևանք չէր», - անառարկելիորեն հայտարարում է Ետկինը իր գրքի 90-րդ էջում, իսկ տառացիորեն հաջորդ էջում նա արդեն ընդունում է, որ «Ֆրանսիան և Անգլիան ձգտում էին խաղեր խաղալ Պարսկաստանի հետ, որպեսզի Ռուսաստանին հեռու պահեն Կովկասի պրոբլեմներից»¹: Ոչ պակաս ակնբախտրեն Ետկինը հերքում է իրեն՝ իր մեկ այլ եզրակացությամբ,- «Որքան վատթարանում էին Ռուսաստանի և Պարսկաստանի հարաբերությունները,- խոստովանում է Ետկինը,- այնքան Ֆաթի-Ալի-շահն ավելի էր զգում բրիտանական օժանդակության կարիքը, լինելու ռազմական, թե՛ դիվանագիտական, որը կօգներ նրան Անգլիայի օժանդակությամբ ռուսներին վտարել Անդրկովկասից»²:

Այսպիսով, պարզվում է, որ արևմտյան մեծ տերությունների կողմից Պարսկաստանի հետ խաղացված «խաղերը», այնուամենայնիվ, Անդրկովկասից Ռուսաստանին վտարելու նպատակով էին արվում:

Մ. Ետկինը հայտարարում է. «Ռուս-պարսկական պատերազմների պատճառները կապված չէին պարսկական ֆեոդալական վերնախավի կողմից Անդրկովկասի վրա հաստատված հսկողությունը կանխելու հետ, որը Ռուսաստանի համար վերածվել էր անհրաժեշտության,- ինչպես պնդում էին խորհրդային որոշ հեղինակներ»³, նկատի ունենալով ադրբեջանական պատմաբան Ի. Ա. Յուսեփնովի հոդվածը «Ադրբեջանի պատմության» երրորդ հատորում (Բաքու, 1958-1963, III, 5), այլ բխում էին նրանից, որ ինքնակալությունը ձգտում էր Անդրկովկասում գերիշխանություն ձեռք բերել, անկախ Պարսկաստանի հետ իր վարած քաղաքականությունից:

Մ. Ետկինը մեկ այլ, առնվազն տարօրինակ հայտարարություն է անում: Նա գրում է. «Ֆրանսիացիները և անգլիացիները Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կոնֆլիկտի մեջ ներքաշված չէին ընդհուպ մինչև ճակատամարտեր սկսվելը»⁴: Այս արտահայտությունից պարզորոշ երևում է, որ Մ. Ետկինը նկատի ուներ անիրազեկ ընթերցողին և ցանկանում էր նրա վզին փաթաթել այն անհեթեթ միտքը, որ Անգլիայի և Ռու-

¹Նույն տեղում, էջ 91:

²Նույն տեղում, էջ 122:

³Նույն տեղում, էջ 90:

⁴Նույն տեղում:

սաստանի միջամտությունը առաջին ռուս-պարսկական պատերազմին իբր կարելի է միջամտություն համարել այն դեպքում միայն, եթե այն տեղի ունենար մինչ պատերազմի և «ճակատամարտերի» սկսվելը, իսկ պատերազմի և «ճակատամարտերի» ընթացքում արդեն, ըստ Ետկինի, դա ո՛չ թե միջամտություն էր, այլ օրինաչափ երևույթ: Բացառված չէ, որ Ետկինի այդ պարզունակ խորամանկությունը փաստերի հարկադրված խեղաթյուրում լինելը, քանի որ ռուս-պարսկական պատերազմների բոլոր այդ տարիները լի էին այդ պատերազմներին Ֆրանսիայի և Անգլիայի միջամտություններով, իսկ Ետկինը Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքականությանը Պարսկաստանում ստիպված էր հատկացնել մի ամբողջ գլուխ (8-րդ) «Ֆրանսիան և Բրիտանիան Պարսկաստանում»¹ վերնագրով: Այդ թեթևացնում է մեր խնդիրը, քանի որ միջամտության հարցում Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքականության մերկացման համար մենք արդեն նյութեր ենք քաղել Ետկինի հենց այդ գրքից: Գրքի ութերորդ գլխում, օրինակ, Ետկինը գրում է. «Ֆրանս-պարսկական դաշինքի սկզբնական փուլում Նապոլեոնը գտնում էր, որ կովկասյան վիճելի տարածքների համար մարտերը շարունակելու նպատակով Պարսկաստանին արված խրախուսանքը գայթակղություն կհանդիսանար Ռուսաստանի ռազմական ուժերի համար Եվրոպայում: Այդ պատճառով Նապոլեոնը խորհուրդ էր տալիս շահին. «Եռանդուն կերպով գրոհեցե՛ք ռուսների դեմ, թող իմ հաղթանակները սնեն ձեր թուլությունն ու բարոյալքումը: Նրանց ձեռքից առե՛ք Վրաստանը և բոլոր այն նահանգները, որոնք ձեր կայսրության մասն են կազմում և որոնք գտնվում են կասպյան նավահանգիստների շրջապատում»²:

Նույն գլխում Ետկինը պատմում է հանգամանորեն, թե ինչպես Մալկոլմը Աբաս-Միրզային նվիրեց 16 հազար հրացան, 20 հրանոթ և հազար սուսեր³: Իսկ մեկ ուրիշ անգամ անգլիացիները շահին նվիրեցին 20 հազար հրացան⁴: Խոսելով այն մասին, թե ինչպես էր Անգլիան միջամտում ռուս-պարսկական կոնֆլիկտներին մինչև ռուս-պարսկական պատերազմը և պատերազմից հետո, Ետկինը հիշեցնում է, որ «...մայր դ'Արսին և լեյտենանտ Յենրի Լինդսեյը պատասխանատու էին պարսկական հրետանու, Չարլզ Քրիստին՝ պարսկական հետևազորի ռազմական պատրաստակալության, իսկ ինժեներ Վիլյամ Մոնտեյտը՝ ամրացուցիչ կառուցումների համար⁵ և այդ իսկ հիշեցումով հերքում է ինքն իրեն:

¹Նույն տեղում, էջ 122-143:

²Նույն տեղում, էջ 128:

³Նույն տեղում, էջ 134:

⁴Նույն տեղում:

⁵Նույն տեղում, էջ 133:

Էտկինը չի թաքցնում այն բանը, որ անգլիական սպաները պարսկական բանակի խորհրդատուներն էին, նպաստում էին պարսկական զորքերի եվրոպականացմանը և հենց իրենք իսկ մասնակցում էին ռուսական զորքերի դեմ մարտերին: Էտկինը մասնավորապես խոստովանում է, որ պարսկական տաղանդավոր զորավարներից մեկը՝ Սադրկ-խան Կաջարը եվրոպական տիպի հետևակային արտոնյալ կորպուսի գեներալ էր ձեռնադրված միայն այն բանից հետո, երբ թալիշը գրավված էր 1812թ. երկու անգլիական հրետանավորի օգնությամբ¹: Այն բանից հետո, երբ անգլիական սպաները հեռացվեցին Աբաս-Միրզայի բանակից Նապոլեոնի դեմ անգլո-ռուսական դաշինք կնքելու կապակցությամբ, Սադրկ-խանը հիմա արդեն ցույց տվեց, որ նա առանց անգլիացիների էլ ի վիճակի է պայքարը շարունակելու: 1813թ. հունվարին Սադրկ-խանը պարսկական տասը գեներալների և 2500 զինվորների հետ միասին պաշտպանում էր Լենքորանը Կոտլյարևսկու գրոհներից: Ռուսական հրետանու կրակների ներքո պարսիկները շարունակում էին մարտնչել, մինչև Սադրկ-խանը և նրա սպաների ու զինվորների կեսը սպանվեցին Լենքորանի բերդի գրոհի ժամանակ²: Անհաջողություն կրեց և շահագաղեն:

Մինչև Աբաս-Միրզան 5 հազար պարսիկ սարքազների գլուխն անցած մոտեցավ Ասլանդուզյան գետանցին Ղարաբաղ մտնելու և Կոտլյարևսկու ջախջախելու նպատակով, որը երկու հազարանոց զորքով Արաքսից հյուսիս էր գտնվում, Կոտլյարևսկին առաջինը գտավ նրան, և ինքը նախահարձակ եղավ:

Մ.Էտկինի կարծիքով Արաքսը ծանծաղուտով անցնելու բարդությունները, այնուհանդերձ, խանգարեցին Կոտլյարևսկուն գիշերով հասնել պարսկական ռազմական ճամբարը: Ռուսները մոտեցան ճամբարին վաղ առավոտյան և հայտնաբերվեցին ճամբարից 300 մետր հեռավորության վրա³:

Ողբալի ավարտվեցին նաև Երևանի սարդար Յուսեփ-Կուլի-խանի երեք մյուս փորձերը՝ ներխուժել Շորագյալի և Փամբակի մարզերը վրաց արքայազն Ալեքսանդրին օգնության հասնելու համար, որն ընդդիմության մեջ էր գտնվում Յերակլ 2-րդի և ռուսների նկատմամբ⁴:

Մ.Էտկինը գտնում է, որ ռուս-պարսկական պատերազմը «...անդրկովկասյան տարածաշրջանում բրիտանական կամ ֆրանսիական իմպերիալիստական էքսպանսիան արգելակելու Ռուսաստանի անհրաժեշտության արդյունքը չէր հանդիսանում»⁵:

¹ Նույն տեղում, էջ 111-112:

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում, էջ 111-112:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

Նախ նշենք, որ ուղղելով խորհրդային պատմաբաններին, Էտկինն օգտագործում է «իմպերիալիստական էքսպանսիա», «պարսկական ֆեոդալական էլիտա» տերմինները: Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասում բրիտանական կամ ֆրանսիական էքսպանսիային, ապա Էտկինը փորձում է ժխտել այն առանց որևէ հիմք ունենալու և բավական խորամանկ ձևով, ավելի ճիշտ, ժխտում է այն, որ ռուսներն իբրև թե չէին կասկածում անգլիացիներին և ֆրանսիացիներին Անդրկովկասի էքսպանսիայի մեջ և չէին փորձում նրանց այդ բանում խոչընդոտել կամ «շրջափակել»:

Փաստերն ապացուցում են, որ Ռուսաստանի դեմ ուղղված արևմտյան մեծ տերությունների քաղաքականությունը նպատակ ուներ Անդրկովկասում պահպանել պարսկական ատելի տիրապետությունը, որը, սակայն, բերեց Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը:

Քաջալերելով Կաջարների ռևանշիստական ձգտումները, Անգլիան Պարսկաստանին ռազմական օգնություն էր ցույց տալիս Ռուսաստանի հետ պատերազմելու համար և ահաբեկում էր Ռուսաստանին երկու ճակատով պատերազմի հեռանկարով (Պարսկաստանի և Թուրքիայի դեմ), որպեսզի թույլ չտար մի կողմից Թուրքիայի պարտությունը և Օսմանյան կայսրության անկումը, և որպեսզի Ռուսաստանին շեղեր Յնդկաստանից ի նպաստ տխրահռչակ «Յնդկական անվտանգության», չնայած նրան, որ 1812թ. Յայրենական պատերազմը փրկեց Յնդկաստանի ժողովուրդներին ֆրանսիական ներխուժումից:

Մ.Էտկինն իր աշխատության տարբեր տեղերում կրկնում է, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմը առաջինի լուկ շարունակությունն էր, չէր բարձրացնում նոր հիմնահարցեր և սկսվել էր ոչ թե նոր հակասությունների հետևանքով, այլ վերադարձ էր հին կոնֆլիկտներին¹: Երբեմն Էտկինը, ելնելով այդ դատողություններից, պնդում է, որ «...երկրորդ ռուս-պարսկական պատերազմի բուն պատճառը Կաջարների ահն էր ռուսական ռազմական սպառնալիքի հանդեպ»²:

Մ.Էտկինը փաստորեն ընդունում է, որ «Ռուսաստանը, լինելով անծայրածիր երկիր հսկայական ռեսուրսներով և հզոր բանակով, փառաբանված Սուլտանովի անմար փառքով, որը շլացրել էր եվրոպան ալպիական արշավանքով, մշտապես կարող էր համոզված լինել Պարսկաստանի նկատմամբ իր արագ հաղթանակի մեջ»³:

Էտկինը համոզված է, որ Ֆաթի-Ալի-շահը չէր կասկածում Ռուսաս-

¹ Նույն տեղում, էջ 98:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

տանի հզորությանը, բայց նա համոզված չէր, որ Ռուսաստանը կսահմանափակվեր սահմանները հասցնելով մինչև Քուռ և Արաքս և չէր անցնի գետերից այն կողմ, առավել ևս, որ ռուսաստանյան փառասիրական զգացումը ռուսներին ժամանակին արդեն դուրս էր բերել այդ գետերից այն կողմ պարսկական Գիլան նահանգի ուղղությամբ (Պյոտր 1-ինի և Վալերիան Ջուբովի ժամանակ), բայց, եթե նույնիսկ ենթադրենք,- շարունակում է Ետկինը,- որ ռուսները հրաժարվեին նման գործողությունների կրկնությունից, Ֆաթի-Ալի-շահը լուրջ հիմքեր ուներ հետագայում ևս կասկածելու Ռուսաստանին այդ մտադրությունների մեջ¹:

Մ.Ետկինն ամեն կերպ քողարկում էր Անգլիայի փորձերը մոտենալ Կասպից ծովին պարսկական Գիլան, Մազանդարան և Գորգան (Աստրաբադ) մարզերի կողմից, մանավանդ Գիլանի կողմից, որը պարսկական շերամապահության կենտրոնն էր: Չարմանալի չէ, ուրեմն, որ Ետկինը փորձում էր թաքցնել Մալկոլմի ինիցիալները, որն անգլո-պարսկական 1801թ. պայմանագիրը կնքողն էր, այն պայմանագիրը, որ կապված էր հարավկասպյան նավահանգիստներում անգլիական նավաշինարարական ծրագրերի հետ:

Ետկինը կրքոտ վիճաբանում է այս հարցի շուրջ նշանավոր հայ պատմաբան ակադեմիկոս Ա.Ռ.Յովհաննիսյանի հետ, ասելով, որ վերջինս «...այնքան հեռու գնաց, որ ի պաշտպանություն իր ամբաստանության, վկայություն հորինեց բրիտանական տնտեսական իմպերիալիզմի դեմ, որը ձգտում էր սադրել Ռուսաստանին Պարսկաստանի դեմ պաշտպանողական պատերազմի»²:

Վկայակոչելով Ա.Ռ.Յովհաննիսյանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին», հիմնարար աշխատությունը՝ հրատարակված 1958թ. Երևանում, Մ.Ետկինը գրում է, որ այդ գրքում հիշատակված ռուսական հյուպատոս Սկիբինսկին նախազգուշացնում էր վերադաս անձանց այն մասին, որ Մալկոլմի կողմից ստորագրված 1801թ. անգլո-պարսկական պայմանագիրը թույլ տվեց Բրիտանիային «նավեր կառուցել Լենքորանում և մենաշնորհ ձեռք բերել Գիլանի մետաքսի գնումների համար»³: Ետկինը գտնում է, որ այդ պայմանագրի առևտրական և քաղաքական հոգվածները չէին ընդգրկում նման պայմաններ, իսկ Սկիբինսկին զեկուցագիր չէր ուղարկել անգլո-պարսկական հարաբերությունների մասին, որի մեջ նշված լինեի «նման, գոյություն չունեցող մանրամասնություն»⁴: Չնա-

¹Նույն տեղում, էջ 94:

²Նույն տեղում, էջ 90:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում:

յած նրան, որ Ետկինը փորձում է հաստատել այդ տեսակետը անգլիական և այլ աղբյուրներով¹, Սկիբինսկու զեկուցագրում այդ մանրամասնությունը, անշուշտ, տեղ էր գտել, և ակադեմիկոս Ա.Ռ.Յովհաննիսյանն ըստ ամենայնի պացուցում է այդ արխիվային փաստաթղթերի հիման վրա, որոնք հայտնաբերել էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: Սկիբինսկու այդ փաստաթղթում ասվում է. «Բաբա-խանը (Ֆաթի-Ալի-շահը -Ա.Ք.) փետրվարին, թողնելով անգլիական դեսպանորդին (Մալկոլմին -Ա.Ք.), Բաղդադով նրա հետ ուղարկեց նաև իր ներկայացուցչին՝ Ղազվիհի վաճառական Յաջի Խալիլին, որին հանձնարարեց այդ կարևոր գործը. որպեսզի նա տանի 300 արհեստավոր, հմուտ ոչ միայն մանուֆակտուրային գործում, այլև նավաշինարարության և նավերի զինման համար անհրաժեշտ մթերք հայթայթելու մեջ»²:

Այնուհետև Սկիբինսկին նշում է, որ Մալկոլմը 1801թ. անգլո-պարսկական պայմանագրի կնքման ժամանակ խնդրեց, որպեսզի «Բաբա-խանը թույլատրեր անգլիացիներին Գիլանի ոստանին (մարզին) հարևան Լենգուրդի (Լենքորանի) մարզում նավեր կառուցել և դրանց միջոցով առևտուր անել Բաքվի հետ: Եվ երկրորդ, որպեսզի Գիլանի մետաքսը վաճառվեր միմիայն անգլիացիներին»³:

Մեր կարծիքով Ա.Ռ. Յովհաննիսյանի և Մ. Ետկինի տեսակետների տարակարծությունը ստեղծվել էր հյուպատոս Սկիբինսկու հաղորդագրության այն մասի հիման վրա, որտեղ խոսվում է «ծովային նավաշինության և նավերի զինման համար անհրաժեշտ մթերքի նախապատրաստման»⁴ մասին:

Կարելի է չկասկածել, որ ակադեմիկոս Յովհաննիսյանը «զինում» բառը ճիշտ է ընկալել նրա միակ, ռազմական իմաստով, իսկ «պաշար» բառը «զինում» բառի կողքին համատեքստում կարող է ունենալ միայն իր բուն, այսինքն՝ «ռազմամթերք, ռազմապաշար» իմաստը, չնայած նրան, որ Սկիբինսկու հաղորդագրության ամբողջ տեքստը վերաբերում էր առևտրական գործառնություններին: Ըստ երևույթին, Մ. Ետկինը չգիտեր նաև այն մասին, որ Կասպից ծովում ռուսաստանյան ապրանքների ու վաճառականների պաշտպանության համար ռուսական որոշ առևտրական նավերի վրա տեղադրվում էին հրանոթներ կամ նույն այդ նպատակով առանձնացվում էին նույնիսկ ռազմական նավախըն-

¹Political and commercial treaties between Iran and Great Britain January 1801, C.U. Aitchison, ed., A Collection of Treaties, Engagements and Sunnuds Relating to India and Neighbouring Countries, 2nd ed. (14 vols., Calcutta, 1929-1933), XII, 41-45; Skibinevski to Knorring, May 1, 1801-Akty (Akak), I, 683-684.

²АВІР, Спб., Главный архив, 1-13, 1801-1814, д.5, л.8.

³Նույն տեղում, էջ 4-5:

⁴Նույն տեղում:

բեր¹: Պարզվում է, այսպիսով, որ Մ. Էտկինը զուր է հարձակվել խորհրդահայ պատմաբանի վրա և ակնհայտ կերպով ճիշտ չի ըմբռնել Սկիբինևսկու հաղորդագրությունը:

Սխեմատիկ և ոչ ճշգրիտ կերպով է Մ. Էտկինը փորձում նկարագրել ընդհանուր գծերով ռուս-պարսկական պատերազմները: «Առաջին իննամյա պատերազմը, - նրա մեկնաբանությամբ, - սկսվեց Երևանի խանությունում կատարված ռուսական անհաջող կամպանիայով և ավարտվեց 1812-1813թթ. Պարսկաստանի համար Լենքորանի և Ասլանդուզի կորուստով», թեև գտնում է նաև, որ «ռուսները հաղթանակ տարան ոչ այնպես, ինչպես ցանկանում էին» և անհաջող կերպով բացատրում է այդ նրանով, որ «Ռուսաստանի համար պատերազմի անդրկովկասյան թատերաբեմը երկրորդական էր եվրոպականի համեմատությամբ, իսկ Պարսկաստանի համար պատերազմն Անդրկովկասում առաջնակարգ նշանակություն ուներ, քանի որ դա Պարսկաստանի պատմության մեջ առաջին պատերազմն էր եվրոպական քրիստոնյա պետության հետ»²:

Մ. Էտկինն առաջինն էր 1826-1828թթ. երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատմագիրներից, որը բազմալեզու գրականության ուսումնասիրության հիման վրա եկավ այն եզրակացության, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի սկզբում ռուսական զորքերի հիմնական հակառակորդը ոչ թե պարսիկներն էին, այլ Ռուսաստանի դեմ ապստամբած ադրբեջանցիները: Ելիզավետպոլի, Շիրվանի, Շեքիի, Թալիշի և Վրաստանին սահմանամերձ ադրբեջանական շրջանների մուսուլմանները կատաղաբար մարտնչում էին ռուսների դեմ: Որոշ ռուսական կայազորներ ամբողջապես ոչնչացվեցին, Ելիզավետպոլում եղան բազմաթիվ զոհեր³:

Պարսկաստանի ներխուժումն Անդրկովկաս, - շարունակում է այնուհետև Էտկինը, - սկսվեց 1826թ. հուլիսին լայն ճակատով հարձակումներով Վրաստանից մինչև Թալիշ ու Բաքու:

¹ Ռուսական այդ նավախմբերից մեկը, կազմված չորս նավից, երկրորդ կարգի կապիտան Վոյնովիչի հրամանատարությամբ դեռ 1781թ. մտավ Գորգանի ծովածոցը (Կասպից ծովի հարավարևելյան անկյունում): Կասպիտան Վոյնովիչը էշրեֆի քաղաքագլխին դիմեց խնդրանքով՝ հատկացնել հողամաս «ռուսական գյուղ» կառուցելու համար որպես ռուսաստանյան վաճառականության առևտրական կենտրոն: Համաձայնությունն ստացված էր, բայց երբ նավաստիներն ասի փոխադրեցին 18 հրանոթ՝ «ռուսական վաճառականների անվտանգությունն ապահովելու համար», սպաները և նավաստիներն սկզբում ձերբակալվեցին: 1782թ. հուլիսին մոտ «ռուսական գյուղն» այնուամենայնիվ կառուցված էր նրանց կողմից, որից հետո նավախումբը վերադարձավ Աստրախան:

² Atkin M.A., 4 *Russia and Iran, 1780-1828*, p. 96, 99.

³ Նույն տեղում, էջ 157:

Պարսիկները հաղթանակ տարան մի քանի մարտերում և շրջապատեցին Շուշվա և Բաքվի բերդերի կայազորները: Սակայն սեպտեմբերի սկզբին պարսկական հարձակումը կասեցվեց⁴: Ռուսները գրավեցին Աբաս-Աբադը, Երևանը, Նախիջևանը և ճանապարհ բացեցին դեպի Թավրիզ, այնուհետև պահանջեցին դրանք պայմանագրով և բոլոր ցանկացողներին հնարավորություն տվեցին ներգաղթելու Ռուսաստան⁵:

Ռուս-պարսկական պատերազմների այս կարճ և սխեմատիկ շարադրումն Էտկինին անհրաժեշտ էր այլ հարցեր լուսաբանելու համար, այդ թվում նաև ռուս-պարսկական հարաբերությունների պատմության առավել վաղ փուլերում՝ ինքնակալության նվաճողական քաղաքականության մեջ պատմական զուգահեռ անցկացնելու համար, չշոշափելով, միևնույն ժամանակ, պարսից շահերի նվաճողական քաղաքականությունը, ինչպես նաև 1555թ. իրադարձությունները, երբ Թուրքիայի հետ կնքած Ամասիայի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանը ապօրինաբար զավթեց Անդրկովկասը:

Հատկանշական է, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատճառներն Էտկինը կապում է այդ պատերազմի հետևանքների հետ: Նա գտնում է, որ Թուրքմենչայի պայմանագրի առանձին հոդվածներ, այդ թվում և շահի արտոնություններին վերաբերող հոդվածները, Ռուսաստանի համար մեծ նշանակություն ունեին. ճանաչելով շահի իրավունքները, Ռուսաստանը ուժեղացնում էր իր ազդեցությունը Աբաս-Միրզայի վրա, չնայած այն բանին, որ Գյուլիստանի դաշնագրում համանման հոդվածի գոյությունը չկարողացավ կանխել ռուս-պարսկական պատերազմը⁶:

Մ. Էտկինը գտնում է նաև, որ ռուս-պարսկական առևտրական պայմանագիրը Ռուսաստանին հնարավորություն ընձեռեց ստեղծելու Պարսկաստանի ցանկացած շրջանում իր առևտրական գործակալությունները, որը Ռուսաստանը չուներ նախկինում: Շահը թույլ չէր տվել նույնիսկ ենզելիում ռուսական հյուպատոսություն ունենալ:

Դեհկարիանի բանակցություններում վեճեր տեղի ունեցան առավելապես ռազմատուգանքի պորբեմի շուրջը: Էտկինը գտնում է, որ 20 միլիոն ռուբլի (3 միլիոն ֆունտ ստեռլինգ) ռազմատուգանքը Պարսկաստանին առավել կախյալ դարձրեց Ռուսաստանից⁷:

Էտկինը ցավով նշում է, որ «Աբաս-Միրզայի փորձը 1828թ. վերսկսել պատերազմը լիակատար ծախսողման ենթարկվեց և հանգեցրեց ռուսական զորքերի կողմից Ադրբեջանի էլ ավելի մեծ մասի նվաճմանը⁸»:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 158:

⁶ Նույն տեղում, էջ 157:

⁷ Նույն տեղում, էջ 158:

⁸ Նույն տեղում:

Ամերիկյան պատմաբանը չի բացահայտում միևնույն ժամանակ Աբաս-Միրզայի այդ փորձի բովանդակությունը և չի մատնանշում այդ «լիակատար ծախողման» պատճառները:

Փաստերը ցույց են տալիս, որ Կաջարներին Ռուսաստանի դեմ նոր պատերազմի հրահրողը նաև թուրքիան էր: Դեռ 1827թ. դեկտեմբերի 8-ին (20-ին) սուլթան Մահմուդ 2-րդը «ուղղահավատներին» ռուսների դեմ «ջիհադի»՝ սրբազան պատերազմի կոչ էր անում և դրդում էր Ֆաթի-Ալի-շահին Ռուսաստանի հետ պատերազմելու¹: Պարսկաստանի վրա թուրքիայի այդ ճնշումն ուժեղացավ Նավարինի ծովային ճակատամարտից հետո, որի ժամանակ դաշնակիցները ջրասույզ արեցին թուրքական նավատորմը: Ըստ անգլիացի պատմաբան Ռ. Վաթսոնի տեղեկության Ֆաթի-Ալի-շահն Անգլիա ուղարկեց արտաքին գործերի նախարար Միրզա Աբուլ-Ղասսան-խանին, որը «ձգտում էր հասնել բրիտանական կառավարության միջամտությանը՝ Պարսկաստանի համար պատվավոր հաշտություն ապահովելու Ռուսաստանի հետ»²: Նույն այդ ժամանակ, դեկտեմբերին, Միրզա-Աբուլ-Ղասսան-խանը դիմեց այդ հարցով Լոնդոնում ռուսական դեսպանորդ Քրիստոփոր Լիվենին՝ Նեսսելրոդեին ուղղված նամակներով³: Մեծ ակտիվություն ցուցաբերեց այդ ժամանակ շահական կառավարությունը ևս: Նախապես մշակված սցենարով Թեհրան ժամանեց խորասանի փոխարքա շահզադե Ղասսան-Ալի-միրզան, որը հայտարարեց, որ թույլ չի տա ռազմատուգանք վճարել, իսկ Ֆաթի-Ալի-շահը հրապարակայնորեն նրան գահաժառանգ հայտարարեց, թեպետ ի կատար չածեց այդ որոշումը:

Երբ 1828թ. հունվարի 7-ին Դեհլարիանի խաղաղ բանակցություններն ընդհատվեցին, իսկ ռուսական զորքերը դաժան ձմեռվա պայմաններում գրավում էին Չարավային Ադրբեջանի քաղաքները, որպեսզի տարբեր կողմերով մոտենան Թեհրանին⁴, թուրքերը չցուցաբերեցին ոչ մի ակտիվություն: Պարզվեց նաև, որ ռուսական զորքերի հարձակման նախորդ օրը հարեմի գլխավոր ներքինի և շահի գանձապետ Մանուչեհր-խանը ռազմատուգանքի առաջին հինգ կուրուրներով արդեն գտնվում էր պարսկական Ձենջան քաղաքի մոտակայքում և ռուս զենեռալ Ռոզենին հայտարարեց, որ եթե ռուսներն անցնեն Ղափլանքուղը (որն Ադրբեջանը բաժանում է կենտրոնական Պարսկաստանից - Ա.Ք.), նա դրամն իր հետ վերցրած՝ կվերադառնա Թեհրան⁵: «Այդ դրամն անար-

¹ Соловьев С. М., *Восточный вопрос в 1827г.*, соч., СПб., 1882, с. 325-327.

² Watson R. C., *History of Persia*, London, 1866, p. 236.

³ АВПР, ф. Канцелярия 4 д. 6974, лл. 21-35 (Ливен-Нессельроде, 19(31) декабря 1827).

⁴ Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում ռուսական զորքերը հասան խոյ և գրավեցին Ուրմիա քաղաքը (նույնանուն լճի մոտ), հյուսիս-արևելքում գրավեցին Արդեբիլ քաղաքը, իսկ կենտրոնում մոտեցան Միանե քաղաքին:

⁵ ЦГВИА, ф. ВУА, д. 4329, л. 171 об.

դար է, - անտարբեր ձևով հայտարարեց շահն իր պալատականներին, - Ալլահին ցանկալի է, որ ես այդ ձևով զրկվեմ դրանից: Այսուհետև գանձեր չեմ կուտակի և թույլ չեմ տա, որ իմ ժողովուրդը տառապի: Իսկ այժմ ռուսներին եմ տալիս դրամը ոչ թե իմ հանգստության համար, այլ Պարսկաստանը մեծ աղետներից փրկելու համար»¹:

Երբ 1828թ. փետրվարի 6-ին ռուսական և պարսկական պատվիրակությունները ժամանեցին թուրքմենչայ պայմանագիր կնքելու նպատակով, Պասկևիչը և Աբաս-Միրզան պայմանավորվեցին, որ Ձենջանում կենտրոնացված պարսկական զորքերը (ռուսներին դիմադրություն ցույց տալու համար) կցրեն, իսկ ռուսական զորքերը Միանեից կտեղափոխվեն Արդեբիլ, որտեղ ժամանակավորապես կհաստատվի Աբաս-Միրզայի նստավայրը: Համաձայնվեցին նաև, որ Ռուսաստանը մոտ ժամանակում կստանա ռազմատուգանքի վեցերորդ և յոթերորդ կուրուրները: Փետրվարի 14-ին անգլիական դեսպանորդը հայտարարեց Պասկևիչին, որ վեցերորդ կուրուրն արդեն գտնվում է Ձենջանում², իսկ Անգլիան համաձայն է Պարսկաստանին վճարել կես կուրուր՝ պայմանով, որ ռուսները դուրս գան Ադրբեջանից, իսկ այդ 250 հազար թումանին որպես փոխհատուցում Անգլիան չեղյալ կհամարի 1814թ. Թեհրանի պայմանագրի այն հոդվածները, որոնց համաձայն Անգլիան պարտավորվում էր Պարսկաստանին վճարելու տարեկան 200 հազար թուման՝ Պարսկաստանի վրա որևէ եվրոպական մեծ տերության հարձակման դեպքում³:

1828թ. մարտի 12-ին Մակդոնալդը հաղորդեց Արևելա-հնդկական ընկերության գաղտնի կոմիտեի անդամներին. «Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ այսօր Ձեր անունով դուրս գրեցի 200 հազար թուման գումարով եռակի մուրհակ հօգուտ Աբաս-Միրզայի... Արևելա-հնդկական ընկերության հաշվին»⁴:

Անգլիացի պատմաբան Քեյը գտնում է, որ Անգլիան վաղուց սպասում էր հարմար առիթի, որպեսզի խուսափեր Պարսկաստանի հետ 1814թ. պայմանագրի 4 և 6 հոդվածներից, և այժմ հասավ այդ պատեհ ժամը: Երբ շահը մնաց անօգնական, Անգլիան նայում էր նրան, ինչպես կնայի ազախ և անմարդկային վաշխառուն իր պարտապանին⁵:

Ճշգրտման կարիք ունի Էտկինի հայտարարության նաև այն մասը, որտեղ նա խոսում է այն մասին, որ անգլիական դեսպան Մակդոնալդը իբր «քաջալերում էր Աբաս-Միրզային չզիջել ռուսական պահանջներ»

¹ Նույն տեղում, էջ 147:

² Նույն տեղում, էջ 225:

³ Նույն տեղում, էջ 202:

⁴ ЦГИАЛ, ф. 1018, д. 295, л. 2.

⁵ Kaye J. W., *A. History of the War in Afghanistan*, vol. 1, L., 1878, p. 152.

րին, առաջարկելով նրան 250 հազար թումանի չափով օգնություն՝ ռազմատուգանքը վճարելու համար, եթե Աբաս-Միրզան համաձայնվի ըստ Թեհրանի 1814թ. պայմանագրի չեղյալ համարել դոտացիոն դրույթները: Շահզադեն ընդունեց այդ առաջարկությունները, թեև ստացավ անգլիացիներից միայն 200 հազար թուման»¹: Խոսքն, անշուշտ, ոչ թե գահաժառանգ շահզադեի «անզիջողականությունը քաջալերելու» մասին է, այլ այն մասին, որ ռուսական զորքերը երեք ուղղությամբ սլանում էին դեպի Թեհրան, և դա չէր կարող չահաբեկել Մակդոնալդին, որը ռուսական զորքերի այդ գործողությունը դիտում էր որպես Յնդկաստանի անվտանգությանը սպառնացող վտանգ: «Թեհրանի պայմանագրի զույգ հոդվածների չեղյալ համարումը, - նշում էր Ա. Սայթսը, - որոնք անհամատեղելի էին նոր իրադրությանը, լավ ծառայություն մատուցեց Անգլիային, քանի որ ռազմատուգանքի վճարումը կապված էր մեծ դժվարությունների հետ նրա պարսիկ դաշնակցի համար»²:

Անգլիացի այլ պատմաբաններ 200 հազար թուման գումարով այդ հոդվածների չեղյալ հայտարարելը կապում էին նաև Անգլիայի դժվար կացության հետ, որը ստիպված էր օգնել Ֆաթի-Ալի-շահին Ռուսաստանի դեմ պատերազմում, որի հետ Անգլիան գտնվում էր բարեկամական հարաբերությունների մեջ»: Մեծ Բրիտանիայի այդ վիճակը Ռ. Վաթսոնը համարում էր «նուրբ վիճակ»³, մեկ այլ անգլիացի պատմաբան՝ Դ. Քեյը այն անվանեց «անբարենպաստ»⁴, իսկ դեսպան Մակդոնալդը՝ «տհաճ վիճակ»⁵: Ամբողջությամբ վերցրած պահը հարմար էր, որպեսզի վերացվեին Թեհրանի պայմանագրի այն հոդվածները, որոնք Լիվեյնը Կաննինգհի հետ բանակցությունների ժամանակ համարեց այն «գլխավոր պատճառը, որը դրդեց Պարսկաստանին հարձակվել Ռուսաստանի վրա»: «Ռազմատուգանքի մեծ մասը, - նշում է Էտկինը, - Աբաս-Միրզան պետք է վճարեր մեկ տարվա ընթացքում և այդ նպատակով ստիպված եղավ դատարկել իր գանձարանը և հրաժարվել բազմաթիվ քանակաբաժնե գարդերից այն դեպքում, երբ Ֆաթի-Ալի-շահը չէր աջակցում այդ վճարումներին»⁶:

Թուրքմենջայի պայմանագիրը ազդեցություն էր գործում ռուս-պարսկական հարաբերությունների վրա ընդհուպ մինչև ռուսաստանյան միապետության անկումը⁷:

¹Atkin M.A., *Russia and Iran 1780-1828*, p.158.

²Sykes A., *History of Persia*, vol. 2, London, 1951, p. 321.

³Watson J.W., *4 A. History of Persia*, London, 1866, p. 244.

⁴Kaye J.W., *A. History of the War in Afghanistan*, vol. 1, London, 1878, p. 152.

⁵AKAK, m. VII, N: 528, c.572.

⁶Atkin M.A., *Russia and Iran 1780-1828*, p.158.

⁷Նույն տեղում:

«Անդրկովկասի համար մղվող պայքարի հետևանքները» վերնագրով գրքի 9-րդ գլխում Էտկինը եզրահանգում է, որ Անդրկովկասում ռուսների և պարսիկների հակամարտության հետևանքը եղավ այն, որ Ռուսաստանը նվաճեց «վիճելի տարածքի» մեծ մասը, որը վերափոխեց այդ տարածքի սոցիալական, տնտեսական և քաղաքական կառուցվածքը: Չնայած դրան, բազմաթիվ մուսուլմաններ չհաշտվեցին այն բանի հետ, որ դարձան Ռուսաստանյան կայսրության մի մասը¹:

20-ական թվականների վերջերին երկրորդ ռուս-պարսկական կարճատև պատերազմը շատ հարցերում ամփոփեց առաջին պատերազմը լույս այն տարբերությամբ, որ երկրորդի ժամանակ ռուսների հաղթանակն ավելի վճռական էր, քան 1813 թվականին: Այդ հաղթանակը վերջ դրեց պարսիկների հույսերին ետ խլել սահմանագծից հյուսիս գտնվող որևէ հողակտոր, որը Ռուսաստանը ձեռք էր բերել սերունդների պայքարի ընթացքում և ուժեղացրեց իր ազդեցությունը պարսկական ներքին գործերի վրա²:

Մ. Էտկինը չի դիտում ռուս-պարսկական պատերազմները հայ ժողովրդի շահերի, հայ ազատագրական շարժման տեսանկյունից: Այնինչ, Գյուլիստանի 1813թ. պայմանագրի կնքումից հետո, թեև տիրեց կարճատև դադար, հայ ժողովրդի վիճակը շարունակում էր մնալ ծանր: Հարկերի չափազանց ծանր բեռը, ազգային ճնշումը և կրոնական հալածանքը ժողովրդական զանգվածների վիճակը դարձնում էին անտանելի: Նրանք անհամբեր սպասում էին այն պահին, երբ վրա կհասնի ազատությունը: Նրանց համակրանքը Ռուսաստանի կողմն էր, և դա պարսկական կառավարական շրջանների կողմից անդադար բռնաճնշումների պատճառ դարձավ և հանգեցրեց հայ ժողովրդի ելույթների ճնշմանը³:

Ըստ Վ.Ա. Դիլոյանի հայեցակետի, որն արժարժված է «Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակում և հայ-ռուսական հարաբերությունները» նրա մենագրության մեջ, հայ ազատագրական միտքը մինչև XIX դարի 20-ական թվականները աչքի էր ընկնում նպա-

¹ Մ. Էտկինը գտնում է, որ միացված մարզերի մուսուլմանական խաները, փաստորեն, Ռուսաստանյան կառավարության ֆունկցիոներներն էին ռուսական տիրողոսներով և համեստ ռոժիկով: Նրանցից շատերը փախան Պարսկաստան. Շիրվանի Մուստաֆան՝ 1820թ., Ղարաբաղի խան՝ գեներալ-մայոր Մահլի-Կուլին (Իրրահիմ-Խալիլ-խանի եղբայրը)՝ 1829թ.: Մյուս խանություններն իրենց խաների փախուստից կամ մահվանից հետո կառավարվում էին ամմիջակաճորեն Ռուսաստանի կողմից: (Մ. Էտկին, էջ 145):

² Նույն տեղում, էջ 145:

³ Агаян Ц.П., Дилоян В.А., Предисловие к сборнику документов Присоединение Восточной Армении к России, т. 2 (1814-1830), изд. Института истории АН Армении, Ереван, 1978, с.5.

տակային անորոշությամբ: «Հայաստանի վաղեմի փառքն» ընկալվում էր սոսկ վերացական ձևով: Տպավորություն էր ստեղծվում, որ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչները պարզ չէին պատկերացնում իրենց ապագան: 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին ցարիզմի նենգ մտադրությունների կապակցությամբ անհրաժեշտություն դարձավ քաղաքական ձգտումների հստակ գիտակցումը: Անդրկովկասի այդ ժամանակվա քաղաքական իրադարձությունների հնոցում գտնվող Ներսես Աշտարակեցին և Խաչատուր Լազարյանը տոգորված էին իրենց ժողովրդի ազգային ազատագրության գաղափարով և որոշեցին կանխորոշել հայ ժողովրդի քաղաքական ապագան: Հայկական պետականության վերականգնման հարցը նրանց կողմից դիտվում էր չարտահայտված միտումով ստանալ Նիկոլայ 1-ինի համաձայնությունը Հայաստանի թագավորի տիտղոսը ընդունելու մասին: Պատերազմի ընթացքում նրանք գտնում էին, որ հայ ժողովուրդը պարտավոր է զենքը ձեռքին պայքարել իր թշնամիների դեմ, որպեսզի «վրեժխնդիր լինի իր նախնիների և նրանց սերունդների ոտնահարված իրավունքների համար»: Հայկական թագավորությունը նրանք պատկերացնում էին Ռուսաստանյան կայսրության կազմում, ներքին ինքնակառավարումով, ամբողջ հայկական հողերի միավորումով, հայկական եկեղեցու ինքնավարության պահպանումով և առանց ճորտատիրական իրավունքի ճանաչման:

1828թ. մարտի 21-ի ցարական շնորհագիրը, Հայկական մարզի կազմավորումը ցարիզմի ժամանակավոր զիջումն էր հայ ժողովրդի սպասումներին¹: Մինչեղևփոխական հայ պատմաբանների դիրքորոշումն այդ հարցերում լուսաբանել է նաև Ն.Բ. Սարուխանյանը իր «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչեղևփոխական հայ պատմագրության մեջ»² մենագրությունում:

2. Անգլիայի և Պարսկաստանի միջև կնքված Թեհրանի 1814թ. պայմանագրի դերը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սանձապերժման գործում

Դեռ 1813թ. օգոստոսին Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Նեսեյրոդեն Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար գեներալ Ռտիշևսկին առաջարկեց սահմանափակել Լոնդոն ետ կանչված բրիտանական դեսպանորդ Հ.Աուզլիի ազդեցությունը ռուս-պարսկական

¹ Դիլոյան Վ. Ա., *Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, ԵՊՀ հրատ., Երևան, 1989, էջ 340-41:

² Սարուխանյան Ն. Բ., *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչեղևփոխական հայ պատմագրության մեջ*, Երևան, 1971:

հարաբերությունների վրա և հաղորդեց, որ դեսպանորդը ձգտում է Պետերբուրգում հանդիպում ունենալ ցարի հետ՝ համոզելու համար նրան Ղարաբաղի և Թալիշի խանությունները Պարսկաստանին վերադարձնելու անհրաժեշտության մասին, որպեսզի այդ ծառայության դիմաց կարողանա Պարսկաստանի վզին փաթաթել Անգլիայի հետ նոր պայմանագիր¹: Այդ նպատակով Աուզլին և Պարսկաստանի արտաքին գործոց նախարար Միրզա-Աբու-Հասան-խանը Պետերբուրգում սպասում էին ռուսական ցարի վերադարձին Փարիզից: Նրանց օգնում էր Պետերբուրգում բրիտանական դեսպանի տեղակալ լորդ Ուալպոլը, որն Ալեքսանդր 1-ին հղած իր նամակում խնդրում էր թույլատրել, որպեսզի պարսկական դեսպանությունը գնա իր մոտ Ֆրանսիա: Ուալպոլն այնուհետև հորդորում էր ցարին ընդառաջել պարսիկների սպասումներին՝ ետ ստանալու մի քանի մարզ նույն իրավունքով, ինչ իրավունքով Ռուսաստանը համաձայնվեց Թուրքիային զիջել, ըստ Բուխարեստի պայմանագրի, ռուսական զորքերի կողմից գրավված Ախալբալաքը և Փոթին:

Մինչ Պետերբուրգի և Փարիզի միջև գնում էին այս բանակցությունները, Թեհրանում պարսիկները և անգլիացիները իրենց հետագա համատեղ գործողությունների ծրագրերն էին մշակում Գյուլիստանի 1813թ. պայմանագրի վերանայման կապակցությամբ: 1814թ. Լոնդոնից Պարսկաստանի մայրաքաղաք ժամանեց Էլլիս Յենրին անգլո-պարսկական պայմանագրի նոր նախագծով, որը հետագայում կոչվեց Թեհրանի պայմանագիր:

1814թ. նոյեմբերի 13-ին (25-ին) այդ պայմանագիրը կնքվեց Թեհրանում Անգլիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Դ. Մորյերի և Գ. Էլլիսի, իսկ պարսկական կողմից՝ շահի առաջին նախարար Սադր-Ազամ-Միրզա-Սոհամմեդ-Բոզորգի և Պարսկաստանի պետական նախարար Մուհեթա-Սոմալեկ Միրզա—Աբդուլ Վահաբ Սոհամմեդ-Էդ-Դովլեի միջև:

Այդ պայմանագիրը՝ վավերացված անգլիական թագավորի կողմից 1815թ. և նույն տարում Պարսկաստան հասցված գործերի հավատարմատարի աստիճանով բրիտանական միսիայի պետ Յենրի Վիլոկի միջոցով, չէր քննարկվել բրիտանական պառլամենտում, չնայած այն բանին, որ 4-րդ և 6-րդ հոդվածները վերաբերում էին Պարսկաստանին դրամական օգնություն ցույց տալուն և լրիվ տեսքով հրապարակվեցին առաջին անգամ միայն 1839թ.:

Թեհրանի պայմանագիրը պատկանում էր 1801, 1809 և 1812թթ. անիրավահավասար պայմանագրերի շարքին, որոնք հիմնված էին Մեծ Բրիտանիայի պայմանագրային համակարգի առանձնահատկությունների վրա: Նրանցից յուրաքանչյուրը արտացոլում է փոփոխված քա-

ղաքական իրավիճակը Պարսկաստանում: Այդ պատճառով սկզբնապես այն կոչվում էր «Պայմանագիր՝ կնքված Պարսկաստանի շահի հետ 1812թ. վերջնական պայմանագրի պայմանները որոշելու մասին», և այդ պատճառով քիչ էր տարբերվում 1812թ. անգլո-պարսկական պայմանագրից: Ա.Ռ. Յովհաննիսյանի գնահատմամբ թեհրանի պայմանագիրը «... վերարտադրում էր 1812թ. պայմանագրի հիմնական դրույթները, միայն այլ ձևակերպումներով, որոնք հարմարեցված էին նոր իրավիճակին»¹, չնայած Լ.Ս. Սեմյոնովի համոզմունքին այն մասին, որ «... թեհրանի 1814թ. պայմանագրի 11 հոդվածներից երեքը նոր էին, իսկ չորսը (1812թ. պայմանագրից) հանված էին»², սրանում էլ, ըստ էության, կայանում էր 1812թ. պայմանագրի համապատասխանեցումը նոր պայմաններին:

Եվրոպայում հեղափոխության վերելքի, հունական և թուրքական պրոբլեմների սրման և «Սրբազան դաշինքին» Ռուսաստանի և Անգլիայի մասնակից լինելու պայմաններում այդ տերությունները խուսափում էին պարսկական հարցում փոխադարձ թշնամական ելույթներից: Սրանով, մասնավորապես, կարելի է բացատրել թեհրանի պայմանագրի հենց սկզբից գաղտնի լինելու պատճառները: Ուղղված լինելով Ռուսաստանի և Գյուլիստանի հաշտության դեմ, թեհրանի 1814թ. պայմանագիրը ռուս-պարսկական նոր պատերազմ հրահրելու յուրահատուկ մեխանիզմ էր: Գաղտնի այդ պայմանագրի բովանդակության մասին ռուս դիվանագետներն իմացան Սրբազան դաշինքի Ասխենի կոնգրեսի ժամանակ (1818թ. հոկտեմբեր-նոյեմբերին) Ռ. Կեստլրիից: Ռուս պատգամավորներին հանձնելով գաղտնի այդ պայմանագրի պատճենը, նա մասնավորապես ասաց, որ Անգլիան այն կնքել է «տվյալ ժամանակներին պատշաճ նկատառումներով»³:

Այս կապակցությամբ վիճելի է Սեմյոնովի տեսակետն այն մասին, որ Ս. Կեստլրին ռուսներին իրազեկ դարձրեց թեհրանի գաղտնի պայմանագրին միայն այն մտադրությամբ, որպեսզի «բարդության առաջ չկանգնեն Պարսկաստանում ռուսական միսիայի առաջին քայլերը, նկատի ունենալով Ա.Պ. Երմոլովի դիրքորոշումը, որին ենթարկվում էր ռուսական միսիան»⁴: Յազիվ թե դա թավրիզում ռուսական միսիայի նկատմամբ լրորդ Կեստլրիի սրտառուչ հոգատարության պատճառով էր: Ինչ վերաբերում է Երմոլովին, ապա Կեստլրին հիմք ուներ մտածելու, որ 1817թ. նրան արդեն հայտնի էր 1814թ. գաղտնի պայմանագրի

¹ Иоаннисян А.Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. 432-433.

² Семенов Л.С., Указ. соч., с.24.

³ ЦГИА, ф. 1018, оп.2, д.157, л.2.

⁴ Семенов Л.С., Указ. соч., с.68.

մասին Ալի Մուհամեդ Միրզայից, որի հետ Երմոլովը գաղտնի կապեր¹ էր ստեղծել Աբաս-Միրզային իշխանությունից հեռացնելու նպատակով²: Կեստլրին վախենում էր, ընդ որում, որ Երմոլովը կարող էր կանխել նրան այդ գաղտնիքը հրապարակելու մեջ և այդ պատճառով առաջինը հրապարակեց այն, որպեսզի խուսափի անգլո-ռուսական հարաբերությունների հետագա սրումից: Երբ 1820թ. հունվարին գեմ. Երմոլովը Պետերբուրգից ստացավ արդեն բացահայտ դարձած թեհրանի պայմանագրի տեքստի պատճենը, ուղարկեց այն թավրիզ, իսկ գործերի հավատարմատար Ս.Ի. Մազարովիչին և Ա.Ս. Գրիբոյեդովին նախագուշացրեց այլևս գաղտնի չպահել, որ այդ պայմանագիրը Ռուսաստանին հայտնի է և պարսկական իշխանություններին ներշնչեց միտք, որ Անգլիան Պարսկաստանի պատճառով չի ցանկանա պատերազմել Ռուսաստանի դեմ, քանի որ գտնվում է նրա հետ դաշնակցային հարաբերությունների մեջ³:

Թեհրանի գաղտնի պայմանագիրը բացահայտ դարձնելու համար կային և այլ պատճառներ, ինչպես, օրինակ, պարսկա-աֆղանական պատերազմը, որը 1818թ. Պարսկաստանն օգտագործեց Անգլիայի վրա ճնշում գործադրելու և նրանից՝ համաձայն թեհրանի պայմանագրի, ֆինանսական օգնություն ստանալու համար:

Պարսկաստանի համար այդ պայմանագիրը նվաստացուցիչ էր: Յենց առաջին հոդվածով Անգլիան Պարսկաստանի վզին փաթաթեց մի պարտավորություն, ըստ որի նա պետք է անվավեր հայտարարեր իր բոլոր այն պայմանագրերը կամ դաշնագրերը, որոնք կնքված էին Սեծ Բրիտանիայի հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող եվրոպական պետությունների հետ: Պարսկաստանը, ըստ այդ հոդվածի բովանդակության, հետագայում ևս պարտավոր էր նույն ձևով վարվել բոլոր այն պայմանագրերի հետ, որոնք անցանկալի կլինեին Անգլիային: Դիվանագիտության ամբողջ պատմության մեջ նման նենգություն հազիվ թե հնարավոր լինի գտնել:

Ոչ պակաս անհեթեթ էր նաև առաջին հոդվածի մյուս մասը: Անգլիացիները թեհրանի պայմանագրով Կաջարներին ստիպեցին հայտարարել, որ շահը չի թույլատրի ոչ միայն դեպի Յնդկաստան շարժվել, այլև այն առանձին եվրոպացիների մուտքը Պարսկաստան, որոնք ծրագրեր ունեին Յնդկաստան ներխուժում կազմակերպելու մասին: Ընդ որում, չի ասվում, թե ինչ⁴ և ի՞նչ բանի համար պարսկական զորքերը պետք է զոհեր տային հնդկական հեռավոր սահմաններում:

Իրավահավասար չէր նաև երրորդ հոդվածը, որը լիովին ներժում

¹ ЦГИА, ф. 108, оп.2, д.89, л. 30-30 об.

² ЦГА ВМФ, ф. 19, оп.4, д.442, л.2 об.

³ АКАК, т. УІ, ч.2, с. 221-223 (Ермолов-Мазаровичу, 27 января 1820 г.).

էր Պարսկաստանի անկախությունը: «Երկու պետությունների՝ Ռուսաստանի և Պարսկաստանի տարածքային սահմանները, - նշվում էր այդ հոդվածում, կորոշվեն երեք մեծ պետությունների՝ Անգլիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի համաձայնությամբ»: Այդ նշանակում էր, որ Պարսկաստանի և Ռուսաստանի կայսրության միջև սահմանները պետք է որոշվեին Անգլիայի համաձայնությամբ և մասնակցությամբ: Դա խտրականություն էր ոչ միայն պայմանագիրը կնքող Պարսկաստանի նկատմամբ, այլև Ռուսաստանի հեղինակությամբ համար:

Պատերազմում պարտություն կրած Պարսկաստանի փորձը Անգլիայի հետ մեկտեղ և Ռուսաստանի թիկունքում վերանայել Գյուլիստանի պայմանագրով որոշված սահմանները մերկացվեց Լոնդոնում ռուսական դեսպան Ք.Ա. Լիվենի կողմից: 1820թ. մարտի սկզբին նա Ռ. Կեստրիի ուղարկությունը դարձրեց Թեհրանի 1814թ. պայմանագրի բովանդակության վրա, որը, Լիվենի բառերով ասած, «Առանց Ռուսաստանի տեղեկության և համաձայնության Անգլիային «իրավունք» վերապահեց վերանայել Գյուլիստանի պայմանագրի սահմանները Պարսկաստանին Ռուսաստանի դեմ նոր պատերազմ հրահրելու նպատակով»¹:

Ա.Ռ. Յովհաննիսյանի կարծիքով, ռուս-պարսկական սահմանի որոշման մեջ Անգլիայի մասնակցությունը կարելի էր մեկնաբանել երկակի. և որպես Անգլիայի մասնակցությունը սահմանների որոշմանը Գյուլիստանի պայմանագրի հիման վրա, և որպես նրա մասնակցությունը նոր սահմանները որոշելու հարցում այդ պայմանագրի տարածքային որոշումները վերանայելու դեպքում: Իսկ դրանից հետևում էր, որ Անգլիան մեկընդմիջտ կարող էր ռուս-պարսկական սահմանների հետ համաձայն չլինելու պատրվակի տակ հայտարարել ռուսական տարածքի վրա պարսիկների հարձակումը ոչ թե ագրեսիվ, այլ պաշտպանություն և այդ հիմունքով ռազմական օգնություն ցույց տալ Պարսկաստանին²:

Անգլիայի սադրիչ քաղաքականությունն ի հայտ է գալիս հատկապես 4-րդ և 6-րդ հոդվածներում, որտեղ խոսվում է Անգլիայի կողմից Պարսկաստանին ռազմական ու ֆինանսական օգնություն ցուցաբերելու պայմանների մասին: Պարսկաստանի սահմանները եվրոպական որևէ պետության ներխուժման և պարսկական կառավարության կողմից անգլիացիներից օգնություն հայցելու դեպքում, - ասվում է 4-րդ հոդվածում, - Յնդկաստանի գեներալ - նահանգապետը Մեծ Բրիտանիայի անունից կբավարարի պարսկական կառավարության խնդիրը և կցուցաբերի ռազմական օգնություն (հրամանատարական կազմով,

ռազմամթերքով և այլն) կամ դրա փոխարեն կվճարի Պարսկաստանին տարեկան 200 հազար թուման ռազմական նպատակների համար¹:

Այնուհետև դիտավորյալ վերապահություն է արվում, որ այդ գումարը Պարսկաստանին չի հատկացվի, «եթե Պարսկաստանն ինքն ագրեսիա կատարի որևէ եվրոպական երկրի նկատմամբ»:

4-րդ հոդվածին բավականին նման 6-րդ հոդվածը ուղարկությունը չի կենտրոնացնում եվրոպական բանակի ներխուժմանը Պարսկաստան, այլ հաստատում է, որ «եթե եվրոպական որևէ մեծ տերություն պատերազմական գործողություններ սկսի Պարսկաստանի դեմ (իսկ Անգլիայի հետ ունենա խաղաղ հարաբերություններ), ապա Անգլիայի թագավորը ամեն հնարավոր բան կանի Պարսկաստանի և այդ պետության միջև բարեկամական հարաբերություններ վերահաստատելու նպատակով, իսկ եթե այդ չհաջողվի, ապա Անգլիան, հարկադրված և համաձայն նախորդ հոդվածների պայմաններին, կպարտավորվի Յնդկաստանից զորքեր ուղարկել կամ դրա փոխարեն վճարել տարեկան 200 հազար թուման գումար պատերազմի ամբողջ ընթացքում պարսկական բանակին օգնելու նպատակով, մինչև Պարսկաստանի հաշտություն կնքելը»:

6-րդ հոդվածի նշանակությունը կայանում է հիմնականում նրանում, որ անգլիական վետոն տարեկան 200 հազար թումանի վճարման վերաբերյալ, թեև սքոդված, բայց և այնպես մնում էր ուժի մեջ (համաձայն նախորդ հոդվածների պայմանների): Այդ նշանակում է, որ նախ Պարսկաստանին այդ դրամը հատկացնելու մեջ «հարկադրված» լինելու հարցը Անգլիան պատրաստվում էր որոշել ինքնուրույն և երկրորդ՝ վերապահությամբ ասված «համաձայն նախորդ հոդվածների պայմանների» արտահայտության մեջ չի նշվում, որ խոսքը գնում է նախորդ հոդվածների բոլոր պայմանների մասին առանց բացառության: Այդ դեպքում Անգլիան միշտ կարող էր «օրինականացնել» ըստ 6-րդ հոդվածի Պարսկաստանին ֆինանսական օգնություն ցույց տալը: Հետագայում միայն այդ հոդվածների հակասությունները Անգլիայի կողմից օգտագործվեցին և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, երբ անգլիական դիվանագիտությունը մշակել և Պարսկաստանի վզին էր փաթաթել պատերազմ վարելու իր ռազմավարական ծրագիրը՝ կապված պարսկական զորքերի՝ Անդրկովկաս ներխուժման և կեղծ բրիտանական «երաշխիքի» հետ՝ պահպանել Գյուլիստանի պայմանագրով որոշված պարսկական սահմանները զորքերի պարտության դեպքում:

Բրիտանական այդ ռազմավարական ծրագրի տապալումը ստիպեց Անգլիային իրեն պարտված ճանաչել, իսկ 1828թ. փետրվարին

¹ АВПФ, ф. Каниелария, д.6892, лл. 98-107 (Ливен-Нессельроде, 6(18) марта 1820г.).

² Иоаннисян А.Р., Цит. соч., с.433.

¹ ЦГВИА, ф. ВУА, д. 4329, л. 202.

Պարսկաստանին վճարել 200 հազար թուման որպես փոխհատուցում թեհրանի պայմանագրի 4-րդ և 6-րդ հոդվածների չեղյալ հայտարարման¹:

1828թ. մարտի 6-ին անգլիական դեսպանորդ Մակդոնալդը գեներալ Պասկևիչին հայտարարեց, որ Պարսկաստանի փոխարեն 200 հազար թուման կվճարի անգլիական կառավարությունը թուրքմենչայի պայմանագրով սահմանված ռազմատուգանքի վճարմանը մասնակից լինելու և թեհրանի 1814թ. ուժը կորցրած պայմանագրից ազատվելու համար², իսկ մեկ շաբաթ անց Մակդոնալդը տեղեկացրեց այդ մասին Արևելա-հնդկական ընկերության գաղտնի կոմիտեի անդամներին³: Բացառված չէ, ուստի, որ ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի թեհրան հիմնավորապես ահաբեկեց անգլիական դիվանագետներին: Ամբողջությամբ վերցրած, թեհրանի 1814թ. պայմանագիրը 12 տարի շարունակ չէր դադարում Անգլիայի գլխավոր մեխանիզմը լինելուց Կաջարների վրեժխնդրության տեմդի բորբոքման և Պարսկաստանի կողմից Ռուսաստանի դեմ նոր պատերազմ հրահրելու գործում: Նույն այդ 12 տարիների ընթացքում (1814-1826) թեհրանի պայմանագիրը Անգլիային հնարավորություն ընձեռեց Պարսկաստանի կողմից Ռուսաստանի դեմ պատերազմ սանձազերծել Անգլիայի համար նպաստավոր միջազգային իրադրության պայմաններում:

Թեհրանի 1814թ. պայմանագրի հետևանքով Պարսկաստանը կորցրեց իր անկախությունը և դարձավ խաղալիք բրիտանական դիվանագետների ձեռքում:

Պարսկաստանի 1826թ. հարձակումը Ռուսաստանի վրա եվրոպական երկրներում տարակուսանք առաջացրեց, տեսնելով Ռուսաստանյան կայսրության զինված ուժերի գերակշռությունը հետամնաց Պարսկաստանի համեմատությամբ: Պատվում էին ոչ հավաստի լուրեր, իբր Ռուսաստանն ինքն էր դրդել Պարսկաստանին այդ պատերազմն սկսելու, որպեսզի կարողանա մեղադրել ագրեսիայի մեջ թույլ հակառակորդին և հաղթանակ տանել:

Այդ պատերազմի պատճառներն աղավաղված ձևով տարածվում էին նաև գերմանական պատմագիտության մեջ:

Լայն տարածում ստացավ մասնավորապես այն վերսիան, ըստ որի իբր Ռուսաստանն էր սադրել Պարսկաստանին այդ պատերազմն սկսելու: Ահավասիկ, Վ.Ի. Լենինի լակոնիկ գրառումը «Պարսկաստանի մասին նյութերի տեսություն», որ նա արել էր Յամբուրգի պրոֆեսոր Տ. Եգերի «Պարսկաստանը և պարսկական հարցը» գրքի կապակցությամբ.

¹ ЦГВИА, ф. ВУА, д. 4329, л. 202.

² Նույն տեղում, էջ 270:

³ ЦГВИА, ф. 1018, д. 295, л. 2,3.

«Պարսկաստանի պատերազմը Ռուսաստանի դեմ (որը իբր ինքն է Պարսկաստանին ներքաշել պատերազմի մեջ, ինչպես Անգլիան բուրերին 1899թ.)»¹ ծաղր է պրոֆեսոր Տ. Եգերի հասցեին, երբ վերջինս փորձում էր ապացուցել իբր Պարսկաստանին Ռուսաստանն է ներքաշել պատերազմի մեջ Ռուսաստանի դեմ: Այն ժամանակ ցարական կառավարությունը, սպասելով թուրքիայի հետ պատերազմին, խուսափում էր Արևելքում երկրորդ ճակատից և ծայր աստիճան կարիք ուներ Պարսկաստանի չեզոք դիրքին, իսկ Անգլիան սկզբում սադրեց շահին Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնելու, իսկ այնուհետև հրաժարվեց Պարսկաստանին օգնություն հատկացնելուց, որը նախատեսված էր, ըստ թեհրանի 1814թ. պայմանագրի, պատճառաբանելով այն, որ Պարսկաստանն էր 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի հրահրողը: Սակայն Անգլիայի օգնությունը Պարսկաստանին այդ պատերազմի ժամանակ արտահայտվեց դիվանագիտական բնագավառում, թեև այս անգամ ևս այն ձախողվեց բրիտանական արտաքին գործերի նախարար Ջորջ Կաննինգհի և Լոնդոնում ռուսաստանյան դեսպան Քրիստափոր Լիվենի միջև տեղի ունեցած դիվանագիտական մեծամարտում:

3. Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի անգլո-իրանական պլանի և Ջ. Կաննինգհի ու ռուսական դեսպան Ք. Լիվենի լոնդոնյան բանակցությունների չախտողումը

Անդրկովկասի տարածքում պարսկական զորքերի հարձակողական գործողությունների ընթացքում Անգլիան ռուս-պարսկական պատերազմի մեջ միջամտության ոչ մի նշան չէր ցուցաբերում: Նույնիսկ անգլիական հրահանգիչ սպաների մասնակցությունն այդ պատերազմում, առաջին ռուս-պարսկական պատերազմի համեմատությամբ, զգալիորեն ավելի աննշան էր, որն արդյունք էր նրանց նոր, մտածված քաղաքականության և դիվանագիտական մարտավարության:

Ռուս-պարսկական պատերազմին միջամտելու անվան տակ անգլիական կառավարությունը կաջարական ռևանշիստներին սադրեց պատերազմի՝ բոլորովին նոր ձևով, որը նախկինում չուներ իր նմանը:

Մեր կարծիքով, անգլիացիները պարսիկներից առաջ ըմբռնեցին գեներալ Վալտեր Կրաստանում կենտրոնացնելու մեջ և երկրորդ ռուս-պարսկական պատերազմում իրենց գործողությունները

¹ Ленин В.И., Тетради материалов о Персии. - Полн. собр. соч., т. 28, с. 704-705.

բաժանեցին երկու ետապի: Առաջին ետապը նրանք կապում էին Արևելյան Հայաստանի և Ադրբեջանի վրա պարսկական զորքերի հարձակման հետ, քանի որ այդտեղ գտնվող ռուսական զորքերը շատ փոքրաթիվ էին: Այդ շրջանում Անգլիան և «Արևելա-հնդկական» ընկերությունը լռություն էին պահպանում: Դրա համար քիչ հիմքեր չկային՝ Օսմանյան կայսրության մեջ քաղաքական իրավիճակի վրա պարսկական հարձակման ազդեցության տեսանկյունից: Առաջին հերթին այդ անդրադառնում էր Ալկերմանում ռուս-թուրքական բանակցությունների վրա, որտեղ թուրքական պատվիրակությունը բացահայտորեն նենգադուլի էր ենթարկում բանակցությունները և ամեն կերպ ձգտում էր ծախողել դրանք: Նիկոլայ 1-ին կայսրի դիվանագիտական հարձակումը թուրքիայի վրա, որ մինչ պարսկական պատերազմի սկիզբը այնքան հաջող իրականացվում էր, այժմ դադարեցված էր: Այդ անմիջապես իրեն զգացնել տվեց Բալկաններում: Պարսկաստանի և թուրքիայի դեմ միաժամանակ երկու ճակատով պատերազմի սպառնալիքը ստիպեց ցարիզմին վերանայելու իր քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և հրաժարվել թուրքիայի դեմ պատերազմից:

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի միջոցով Անգլիան ձգտում էր ժամանակ շահել, հնարավորություն տալով սուլթան Մահմուդ 2-րդին թուրքական բանակը վերակազմելու և Ռուսաստանի դեմ պատերազմը նախապատրաստելու համար: Բացի այդ, Նապոլեոնյան կայսրության կործանումից հետո Անգլիան ձգտում էր այդ պատերազմի օգնությամբ թուլացնել Ռուսաստանի հզորությունը Արևելքում:

Անգլիայի այդ լռելյայն քաղաքականությունը պարսկական զորքերի առժամանակյա հաջողությունների հավանության արտահայտություն էր: Սակայն 1826թ. սեպտեմբերի 3-ին ռուսական զորքերի և անդրկովկասյան աշխարհագրայինների կողմից տարած Շամխորի հաղթանակը հայ ժողովրդի քաջորդի՝ գեներալ Մադաթովի հրամանատարությամբ, սկիզբ դրեց Կովկասյան հատուկ կորպուսի հակահարձակումներին և վերացրեց պարսկական զորքերի հարձակումների ընթացքում բրիտանական արտաքին գործոց նախարար Ջ. Կաննինգի կողմից կազմակերպված լռության դավը:

Շամխորի ճակատամարտից հետո անգլիական կառավարությունը անընթաց կատ ձևով և էլ ավելի համառորեն ձգտում էր Ռուսաստանի վզին փաթաթել իր միջնորդությունը Պարսկաստանի հետ նրա բանակցությունների ընթացքում, որպեսզի կարողանա վերականգնել Գյուլիստանի 1813թ. պայմանագրի պայմանները և թույլ չտա ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Պարսկաստանի խորքերը, հատկապես գեներալ Մադաթովի թավրիգյան սրընթաց մարտարշավից հետո: Դրա հետ մեկտեղ անգլիական դիվանագիտությունը առերևույթ տպա-

վորություն էր ստեղծում, որ իբր Ռուսաստանի հետ երկխոսության նախաձեռնությունը Պարսկաստանին էր: 1826թ. դեկտեմբերի 14(26)-ին Լոնդոնում ռուսական դեսպան Ք.Ա.Լիվենը հաղորդեց Պետերբուրգ պարսկական ներկայացուցչի Անգլիա ժամանելու մասին, որը շահի խնդրանքի մասին տեղեկություն էր բերել «Ռուսաստանի հետ բանակցությունների ժամանակ Անգլիայի միջնորդությամբ»¹ դիմելու մասին: Լոնդոնում բանակցությունների հետ միաժամանակ, ռուսական հակահարձակումների հինգերորդ օրը, Պարսկաստանում անգլիական դեսպան Մակդոնալդը առաջարկում է հրամանատար գեներալ Ի.Ֆ. Պասկևիչին իր որպես միջնորդի ծառայությունները Աբաս-Միրզայի հետ բանակցությունների ընթացքում և այդ նպատակով Ռուսաստան ուղարկեց իր երկու դիվանագետներին՝ ազգությամբ հայ Դավուդ-խանին (Դավիթ Ծատուրի Շահնազարյանին) և Միրզա-Մոհամեդ Ալիին, իսկ պարսկական երրորդ դիվանագետին ուղարկեց Լոնդոն, որպեսզի անգլիական կառավարությանը տեղեկացնի ռուս-պարսկական ճակատում տիրող իրադարձության և Անգլիայի միջնորդությամբ հաշտություն կնքելու Պարսկաստանի պատրաստակամության մասին:

Ռուսաստանի արխիվներում պահվում են կոմս Նեսելրոդեի 1827թ. ապրիլի 2-ի թվակիր կարգադրությունների բնագրերը գեներալից: Դիբիչին: «Պայմաններ, որոնց համաձայն կարելի է հաշտություն կնքել» փաստաթղթի մեջ մասնավորապես նշվում էր, որ «Պատերազմի շարունակությունն անմիջապես կառաջացնի Ռուսաստանի հետ մրցակցող մեծ տերության (Անգլիայի - Ա.Ք.) խանդը և առիթ կտա նրանց կողմից քիչ թե շատ ուղղակի դիմադրության»²: Այնուհետև նշվում էր. «Եթե որևէ մի պատրվակի տակ Պարսկաստանում անգլիական միսիան նամակագրություն սկսի Ձեզ հետ տրակտատի կնքման մասին, ապա թույլ չտալ այդ միսիայի միջնորդությունը»³: Նման կարգադրություն տրվել էր նաև Լոնդոնում ռուսական դեսպան Ք.Ա.Լիվենին:

Կաննինգը իր մոտ հրավիրեց Լիվենին և, «չամելով միջնորդության մասին ձևական առաջարկություն», փորձեց ծանոթանալ ռուսական դեսպանի կարծիքին այն մասին, թե «ինչպե՞ս կարող էր ընդունվել Ռուսաստանում նման առաջարկությունը»⁴: Լիվենը պատասխանեց, որ «անգլիական առաջարկությունները կարող էին ուշադիր լսվել, սակայն այն պարագաներում, երբ էապես կշռափվեին Ռուսաստանի բացա-

¹ АВПР МИД, Канцелярия, д. 6963, 1827г. Донесение Ливена из Лондона от 14(26) декабря 1826г., N:189, л.356.

² ЦГИАЛ, Ф.1018, оп.2., д.158, л.1.

³ АКАК, т.УП, N:503, с.540. Нессельроде-Паскевичу от 23.1У. 1827г.

⁴ Архивные документы АВПР о переговорах Д.Каннинга с Х.А.Ливеном опубликованы в ук. соч. Б.П.Балаева.

ռիկ շահերը նրա արևելյան սահմաններում, Ռուսաստանի կայսրը չէր կարող թույլ տալ երրորդ մեծ տերության միջնորդությունը, առավել ևս, որ Պարսկաստանի ագրեսիվ վարքագիծը պահանջում է ըստ արժանվույն պատիժ¹:

Սինչև 1826թ. վերջը Կաննինգը այս հարցով Լիվենին չէր դիմել: Անգլիական նախարարը որոշեց այս անգամ շրջանցել Լիվենին, որպեսզի Պետերբուրգում անգլիական դեսպանի օգնությամբ տեղեկանա ցարի անձնական կարծիքի մասին:

1827թ. հունվարին Կաննինգն ու Լիվենը վերստին հանդիպեցին: Արևելա-հնդկական ընկերության գործադրած ճնշումը Կաննինգի վրա գնալով ուժեղանում էր և նրան ավելի վճռական էր դարձնում: Այդ նույն ժամանակ նա ստացավ Պետերբուրգում անգլիական դեսպանից հաղորդագրություն այն մասին, որ ռուսները Անգլիայի միջնորդության հնարավորությունը ամբողջությամբ չեն մերժում²: Սակայն, զգալով Լիվենի համառ անդրդվելիությունը համաձայնության գալու հարցում, Կաննինգը ցուցում ուղարկեց Պետերբուրգ անգլիական դեսպանին՝ դիմելու Ռուսաստանի կառավարությանը պաշտոնական առաջարկությամբ³:

Այնինչ, Պետերբուրգում բացասաբար վերաբերվեցին Անգլիայի միջնորդության մասին առաջարկությանը, սակայն այդ ետ չպահեց Կաննինգին հետագա քայլերից: Մեկ ամիս անց նա Լիվենին նամակ է ուղարկում նոր անգլիական առաջարկությունների նախագծով, ուր հորդորանքը միախառնվում էր սպառնալիքներին:

Կաննինգի անհանգստությունը զգացվում էր նրա ներկայացրած նախագծի այն մասից, որտեղ խոսք էր գնում Արևելքում Ռուսաստանի հզորացման մասին. «Եվրոպական ոչ մի պետություն, և հատկապես Մեծ Բրիտանիան, չէր կարող առանց անհանգստության նայել տարածքի այդ հսկայական աճմանը և Ռուսաստանի հզորության ուժեղացմանը այն ուղղությամբ, որն ընդունակ է բարդացնելու եվրոպական քաղաքականությունը՝ Ասիայում վարած նրա քաղաքականության պատճառով»⁴:

Կաննինգի փորձերը Ռուսաստանին ստիպել համաձայնվելու Անգլիայի միջնորդությանը պատերազմը դադարեցնելու համար, դիմակազերծ է անում նրան, երբ նա խոսում է Պարսկաստանի նկատմամբ՝ Անգլիայի ունեցած պարտավորությունների մասին Թեհրանի 1814թ. պայմանագրի համաձայն: Առաջարկելով միջնորդություն, Անգլիան ոչ թե Պարսկաստանի նկատմամբ էր ցուցաբերում հոգատարություն, այլ

¹ АВПР, Ф.МИД, Канц., д.6953, л.350, 350об.

² АВПР, Ф.МИД, Канц., д. 6963, 1827, л.3.

³ Նույն տեղում, էջ 3:

⁴ Նույն տեղում, էջ 22:

Արևելքում անգլիական շահերի նկատմամբ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին Պարսկաստանի շահերի հետ:

Կաննինգն իր նախագծին կցել էր Պարսկաստանի արտաքին գործոց նախարար Միրզա-Աբուլ-Յասան-խանի նամակը ուղղված Արևելա-հնդկական ընկերության բյուրոյի նախագահին: Վկայակոչելով այդ նամակը, Կաննինգը մեղադրում էր Ռուսաստանին սադրանքների մեջ, որոնք իբր Պարսկաստանի հարձակման պատճառն էին հանդիսացել: «Պարսկաստանի կողմից կատարված ագրեսիան,- նշում էր նա,- թեև սադրված չէր որևէ գործողությամբ այնքան ժամանակ, մինչև չէին գործադրվել համաձայնության գալու բոլոր միջոցները, ամբողջապես զուրկ չէր, սակայն, տարբեր տեսակի սադրանքներից... Ռուսական կայսրը չի կարող չիմանալ, որ Վրաստանի կառավարչի կառավարումը աչքի էր ընկնում կոպտությամբ և անարդարացիությամբ... Հանրահայտ է նաև, որ պարսիկ գործակալները, մնալով Թիֆլիսում երկուսական ամիս, հնարավորություն չէին ունենում ընդունվելու ռուսական կառավարական շրջանների կողմից, որ բանակցությունները հենց սկզբից կանխամտածված կերպով արգելակվում, ձգձգվում էին ռուսական կառավարական շրջանների կողմից՝ ռուսական և պարսկական կառավարությունների միջև կապ հաստատելու մեջ ընդմիջումներ և հետաձգումներ ստեղծելու միջոցով»¹:

Պաշտպանելով Պարսկաստանին, Կաննինգը համոզումը էր հայտնում, որ «Ռուսաստանի կայսրը անուշադրության չի մատնի նրա դատողություններն այն նպատակով, որպեսզի ընդունի այն առաջարկությունները, որոնք Պարսկաստանը կցանկանար այսօր անել Գյուլիստանի պայմանագրի հիման վրա, հաշտություն կնքելով ռազմական գործողությունները դադարեցնելու համար»²:

Միանգամայն ակնհայտ էր, որ անգլիական կառավարությունը փորձում էր վերջ տալ ռուսական բանակի հաջողություններին և ցանկանում էր պատերազմող կողմերի համար վերականգնել Գյուլիստանի պայմանագրով ընդունված սահմանները, որպեսզի Պարսկաստանը ոչինչ չկորցնի, չնայած իր պարտությանը:

Կաննինգը նշում էր նաև, որ ինքը լիազորված է թագավորի կողմից առաջարկելու Անգլիայի միջնորդությունը և ենթադրում է օգտագործել այդ նպատակով Յնդկաստանի գեներալ-նահանգապետին, որն այդ ժամանակ գտնվում էր Թեհրանում: Կաննինգը խնդրեց Լիվենին անհապաղ հանձնել այդ նախագիծը ռուսական արքունիքին³:

Լիվենին ուղղված նամակում Կաննինգը խնդրում էր նրան ծանո-

¹ АВПР, Ф.МИД, Канц., д.6963, л.23-23об.

² Նույն տեղում, էջ 24:

³ АВПР, Ф.МИД, Канц., д.6963, л.24об.

թանալ իր նախագծին և հաղորդել իր դիտողությունները: Այդ բերեց նոր հանդիպման: «Այն փաստարկները, որոնք ինձ ստիպեցին մերժել Ձեր առաջին պաշտոնական առաջարկությունները,- հայտարարեց Լիվենը գրույցի ընթացքում,- չեն դադարել գոյություն ունենալուց: Առաջին փաստարկը, ըստ որի ես պարտք եմ համարում միջնորդության մասին անգլիական առաջարկությունը մերժել, հիմնվում է ռուսական արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղության վրա: Ռուսաստանը,- շարունակում է Լիվենը,- չի կարող թույլ տալ եվրոպական որևէ մեծ տերության միջամտությունը ասիական երկրների հետ նրա հարաբերությունների մեջ: Դա՝ ռուսական արտաքին քաղաքականության ընդհանուր սկզբունքն է, և եթե Ալեքսանդր կայսրը միշտ չէ, որ հետևել է դրան, ապա այդ եղել է միայն այն դեպքերում, երբ ասիական երկրների հետ հարաբերությունները վերաբերել են ամբողջ Եվրոպային»¹:

Լիվենը հիշեցրեց Կաննինգհին, որ Պարսկաստանը սկսեց ռազմական գործողությունները «դրա համար հիմքեր չունենալով նույնիսկ»², և որ Անգլիան իրավունք չունի սպասելու, որպեսզի Ռուսաստանը դա համարի անգլո-պարսկական պայմանագրով նախատեսված այն դեպքը, որը վկայակոչելով, Կաննինգը Ռուսաստանին միջնորդություն առաջարկի: «Սակայն,- նկատեց ռուսական դեսպանը,- հենց այդ հողվածը հանդիսացավ պատերազմի առաջին պատճառը, քանի որ այն խրախուսում էր Թեհրանի արքունիքին պատերազմի մեջ մտնել, որից հույս ուներ, շատ չանցած դուրս գալու առանց որևէ կորստի»³:

Անգլիական նախարարին մեղադրելը Պարսկաստանին հրահրելու Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու մեջ համարձակ հայտարարություն էր Պարսկաստանի կողմից պատերազմ սանձազերծելու հարցում Անգլիայի պատասխանատվության վերաբերյալ:

Այնուհետև Լիվենը նույնքան բացարձակ խոսում է այն պատճառների մասին, որոնց հետևանքով Ռուսաստանը չէր կարող հույս ունենալ Անգլիայի միջնորդության վրա հօգուտ իրեն: «Ռուս-պարսկական հարաբերությունների մեջ յուրաքանչյուր միջնորդություն, հայտարարեց Լիվենը,- սպառնում է վատթարացնել այդ հարաբերությունները, համենայն դեպս, երկար ժամանակով: Եթե նույնիսկ մեկ անգամ մենք ընդունենք նման միջնորդության իրավասությունը, ապա ո՛չ մի հավատ, ո՛չ մի կայունություն չի լինի այլևս Պարսկաստանի հետ մեր հարաբերություններում»⁴:

¹Նույն տեղում, էջ 6:

²Նույն տեղում, էջ 7:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում:

Լիվենը չընդունեց պարսկական արտաքին գործոց նախարարի մեղադրանքները, համարելով դրանք անհիմն և հայտարարեց, որ «դրանք Պարսկաստանի կողմից առաջ էին քաշված Անգլիայի միջամտությունն արդարացնելու նպատակով: Պարսկաստանն ինքն է սկսել պատերազմը Ռուսաստանի դեմ,- մշեց Լիվենը,- և գաղտնի նախապատրաստվում էր այդ պատերազմին, որը, ինչպես ցույց տվեցին փաստերը, չէր անում Ռուսաստանը: Իսկ եթե անհրաժեշտ են ապացույցներ, ապա դրանք կարող է ներկայացնել Անգլիայի գործերի հավատարմատար Վիլյուք»¹:

Լիվենի դիտողություններն, ըստ էության, ոչնչացրին անգլիական նախագիծը: Չփորձելով պատասխանել Լիվենի դատողություններին, Կաննինգն իր դժգոհությունն արտահայտեց Ռուսաստանին պաշտոնական առաջարկով դիմելու իր պարտավորությամբ²: «Արևելահնդկական ընկերության գործակալները,- դժգոհում էր Կաննինգը,- ծանծրացնում են մեզ իրենց համառ խնդիրքներով և նրանց բարեխոսության շնորհիվ միայն նա պետք է ռուսական կառավարությանն աներ միջնորդության մասին այս հայտարարությունը»³: Կաննինգը հայտարարեց նաև, որ երեք կամ չորս ամիս հետո Լոնդոնում սպասվում է պարսկական դեսպանության ժամանումը, որը խնդրելու է անգլիական կառավարության միջամտությունը ռուս-պարսկական հարաբերությունների մեջ⁴:

Կաննինգը փորձում էր ապացուցել, որ իբր նախկինում Անգլիան չէր միջամտում ռուս-պարսկական հարաբերություններին, և որ ապագայում Անգլիան կվերանայի այդ քաղաքականությունը: Այնինչ, XIX դարի առաջին քառորդում անգլո-պարսկական պայմանագրային ամբողջ համակարգը, ինչպես նաև Պարսկաստանում բրիտանական դիվանագետների և սպաների վարքագիծը անհերքելիորեն ապացուցում են, որ Անգլիան Պարսկաստանին օգտագործել է Ռուսաստանի դեմ իր պայքարում:

Ռուսական զորքերի հաղթանակը ռազմաճակատում տագնապ էր առաջացնում անգլիական կառավարական շրջաններում և ոչ պակաս անհանգստացնում էր հենց իրեն՝ Կաննինգին:

Միջնորդության մասին անգլիական նոր առաջարկությունները կանխելու համար 1827թ. փետրվարի 14(26)-ին Լոնդոնում ռուսական դեսպանը հանձնեց Մեծ Բրիտանիայի պետական քարտուղարի հավատարմագիր, որով պաշտոնապես հաստատվում էր Ռուսաստանի տեսակետը

¹Նույն տեղում, էջ 9:

²Նույն տեղում, էջ 10:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում:

այդ հարցում:

«Վստահելով իր շահերը որևէ արտասահմանյան կառավարության հովանավորությանը,- նշվում էր նոտայում,- Ռուսաստանը ենթարկվում է իր շահերը ոտնահարված, կամ իր մտադրությունները չհասկացված տեսնելու վտանգին: Բացի այդ, պետք է զգուշանալ, որպեսզի ասիական պետությունները երրորդ տերության միջնորդությունը չընկալեն որպես Ռուսաստանի թուլություն և չկազմեն թյուր պատկերացում ամեն տեսակ միջնորդության բնույթի վերաբերյալ և չտեսնեն դրա մեջ ո՛չ այնքան որևէ եվրոպական պետության կողմից ծառայություն մատուցելու, որքան՝ հարկադրաբար միջամտելու հոգուտ իրենց, որով նրանք կպարծենային առանց հապաղելու»¹:

Նոտայի հաջորդ մասում Անգլիան մեղադրվում էր Պարսկաստանին պատերազմի հրահրելու մեջ: «Անգլիական կաբինետին չափազանց բնորոշ է արդարության զգացմունքը, որպեսզի նա տեսնի այդքան անարդար ագրեսիայի մեջ այն դեպքը, որը նախատեսված էր Պարսկաստանի հետ պայմանագրի տվյալ հոդվածով, որով նա հիմնավորում է միջնորդության իր առաջարկը: Գուցե դժվար չէր լինի ապացուցել, որ հենց այդ հոդվածն էր պատերազմի պատճառ հանդիսանում, քանի որ այն խրախուսում էր թեհրանի արքունիքին մասնակցելու պատերազմին, ունենալով նրանից անվտանգ դուրս գալու մոտալուտ հեռանկար: Քանի դեռ կշարունակվի գոյություն ունենալ նման հոդվածը,- նշվում էր նոտայում,- միանգամայն ակնհայտ է, որ Պարսկաստանն ամեն պատեհ դեպքում կշտապի հարձակվել Կասրության վրա, համոզված լինելով, որ իր գանձարանը կհամալրվի անգլիական դրամական նպաստներով, և որ անխուսափելի վտանգի դեպքում նա կպատսպարվի Անգլիայի թիկունքում»²:

Նոտայի այդ մասի ազդեցությունը Լոնդոնի արքունիքի վրա կասկած չի հարուցում: Չանցած մեկ տարի անգլիական կառավարությունը ստիպված էր չեղյալ հայտարարել թեհրանի 1814թ. պայմանագրի 4-րդ և 6-րդ հոդվածները: Որպեսզի կարողանա Պարսկաստանին ստիպել հրաժարվելու այդ հոդվածներից, որոնք հանդիսանում էին նաև բրիտանական կառավարության նախարարների անհանգստության աղբյուրը, Անգլիան ստիպված եղավ վճարել շահին 800 հազար ռուբլի:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի Լիվենի նոտայի մեջ բերված պարսկական արտաքին գործոց նախարարի կողմից Ռուսաստանին ուղղված մեղադրանքների հերքումը. «Եթե հավատանք Պարսկաստանին,- նշվում է նոտայում,- ապա կարող է թվալ, որ Ռուսաստանը

կարծես լոկ այդ էր ցանկանում, որպեսզի իրեն վերագրված սադրանքների միջոցով պատերազմ սանձազերծեր, որն ինքը կկարողանար օգտագործել ի նպաստ իր շահերի, բայց այդ ենթադրության դեպքում ռուսական կառավարությունն ի վիճակի կլիներ առնվազն առաջին գրոհը ետ մղելու, մինչդեռ, ընդհակառակը, հանրահայտ է, որ նա չէր սպասում որևէ հանկարծակի հարձակման: Եվ եթե այդ հանկարծակի հարձակումն առաջ չբերեր առավել լուրջ հետևանքներ, ապա Կասրական կառավարությունը այդ բանի համար ավելի քիչ պարտական է իր պաշտպանության միջոցներին, քան զինվորների քաջությանը և գեներալների հմտությանը»¹:

Այնուհետև նոտայում նշվում էր, որ միջնորդության մասին Անգլիայի առաջարկը, որ ձեռնարկվում էր Ռուսաստանի վրա անարդարացի հարձակում գործած Պարսկաստանի շահերը պաշտպանելու միտումով, կարող է առաջացնել Ռուսաստանում ամենատհաճ տպավորությունը: «Անարգված ամենաանհիմն կերպով, հարկադրված լինելով իր ցանկության հակառակ սուր մերկացնել, կարող է արդյոք Ռուսաստանը համաձայնվել սուրը պատյանը դնել սոսկ անհրաժեշտության ուժից բխած զղջման առաջին իսկ արտահայտության դեպքում»²:

Նոտայի վերջին մասը արտահայտում է փոխադարձ կասկածալիություն, որը բնորոշ էր անգլո-ռուսական հարաբերություններին:

«Անօգուտ է համոզել լոնդոնյան կաբինետին,- ասվում է նոտայում, որ Ռուսաստանը հեռու է Պարսկաստանի նկատմամբ իր վրեժխնդրության ցանկության մեջ գնալ այնքան հեռու, ինչքան Պարսկաստանը դրան, գուցեև, արժանի է»³:

Անգլո-ռուսական բանակցությունները Լոնդոնում մի քանի ամսով ջլատեցին անգլիական դիվանագիտության ակտիվությունը պարսկական հարցում:

* * *

1827թ. սեպտեմբերի սկզբին Լոնդոնում հայտնի դարձավ, որ Օչականի ճակատամարտից հետո (օգոստոսի 17-20) Աբաս-Միրզայի բանակը հետ քաշվեց դեպի Երևան, իսկ ռուսական զորքերի մոտենալուց հետո նահանջեց Արաքսից այն կողմ, դեպի Սարա-Բաբա գյուղը: Պարսկաստանի համար այդ անբարենպաստ պայմաններում լոնդոնյան արքունիքը վերադարձավ անգլիական միջնորդության ծրագրին:

1827թ. սեպտեմբերին բրիտանական արտաքին գործոց նոր նախա-

¹ АВПР, Ф.МИД, Канц., д.6964, 1827, л.140 (Նոտան կցված է Լիվենի 1827թ. մայիսի 8(20)-ի ճեպագրին Լոնդոնից):

² АВПР, Ф.МИД, Канц., д. 6964, л.142.

¹ Նույն տեղում, էջ 144:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 145:

րար Գողերիչը¹ հայտարարեց Լոնդոնում ռուսական դեսպանին, որ անգլիական կառավարությունը Պարսկաստան է ուղարկում Վիլոկին և շատ կցանկանային, որ նա ուղևորվի Պարսկաստան Պետերբուրգով²:

Վիլոկը պետք է համոզեր ցարական արքունիքին Պարսկաստանի համար շահավետ հաշտություն կնքելու:

Լիվենի հետագա հաղորդագրություններում Վիլոկի միսիան հիշատակվում է միայն 1827թ. սեպտեմբերի վերջին: Ռուսական դեսպանը հաղորդեց, որ անգլիական դեսպանի երթուղին փոփոխված է, և որ Վիլոկը կմեկնի Պարսկաստան ոչ թե Պետերբուրգով, ինչպես ենթադրվում էր նախապես, այլ Օդեսայով և Վրաստանի վրայով: Այդ որոշումը պատասխան էր միջնորդության վերաբերյալ առաջարկին, որի մասին Լիվենը գրում էր, և որի մասին ցարին դիմել էր լոնդոնյան կաբինետը³: Ակնհայտ է, որ Սարդարապատի և Երևանի բերդի անկումից ու Աբասիիրզայի Արաքսից այն կողմ նահանջից հետո, անգլիական կառավարությունը վախենում էր, որ Վիլոկի երկարատև ուղևորությունը Պետերբուրգով կարող էր ավարտվել նրանով, որ ուշանալով ճանապարհին, կարող էր իրադարձություններից մի կողմ մնալ, քանի որ ռուսական զորքերի հարձակողական գործողությունները իրականանում էին արագ թափով: Դրանից հետո Լոնդոնում կարող էին մտածել, որ Վիլոկը հնարավորին չափ շուտ պետք է լիներ Պարսկաստանում, որտեղ նա կհասցներ միջամտել բանակցություններին, որպեսզի ազդեր Պետերբուրգի իրադարձությունների ընթացքի վրա, ուր նրան կարող էին պահել կամ բանակցությունները ձգձգել մինչև պատերազմի ավարտը: Ինչևէ, Վիլոկի մեկնումը Պարսկաստան հետաձգվում էր և այս անգամ: Վերջնական ժամկետը նշանակված էր հոկտեմբերի 9-ին, բայց ուղևորության երթուղին վերստին փոխվեց: Ինչպես երևում է, Լոնդոնում չկարողացան սպասել մինչև ռուս-պարսկական ճակատում իրադրությունը գոնե ժամանակավորապես կանոնավորվի: Երևանի և Թավրիզի գրավումից հետո պատերազմը, փաստորեն, ավարտված էր, և Անգլիան կանգնած էր կատարված փաստի առջև դեռ մինչև Վիլոկի ժամանումը Պարսկաստան:

Հոկտեմբերի 7-ին Լիվենը նամակ ստացավ բրիտանական արտաքին գործոց նախարարությունից՝ Գողերիչից, որը հաղորդում էր, որ Վիլոկն այնուհանդերձ ենթադրում է գալ Պետերբուրգ, ուր նա կդիմեր դեմարշով, եթե բրիտանական կաբինետը իրեն տար ինֆորմացիա և լիա-

¹ Գաղութների նախկին պետական քարտուղար վիկոնտ Գողերիչը, նույն ինքը Ֆրեդերիկ Ջոն Ռոբինսոնը, այնուհետև կոմս Ռիպոնը, փոխարինեց 1827թ. օգոստոսի 8-ին վախճանված Ջ. Կաննինգհեմը:

² АВПР, Ф. МИД, Канц., 6964, л. 458.

³ АВПР, Ф. МИД, Канц., 6968, л. 127.

զորություններ հաշտության բանակցություններին մասնակցելու համար: «Մենք չենք ցանկանում, - ասվում էր նամակում, - որպեսզի այդ ընդունել պաշտոնական հայտարարության բնույթ կամ միջնորդության փորձի կրկնում, որն արդեն մերժված էր»¹: Ամբողջ այս միջնորդության մասին պատմության մեջ Անգլիան ելնում էր, նախ և առաջ, Պարսկաստանում իր սեփական շահերից: Բացի այդ, դրան համընկնում էին շահի համառ խնդրանքները Անգլիայի միջամտության մասին, որպեսզի Պարսկաստանը Ռուսաստանի հետ կարողանա կնքել շահավետ հաշտություն: Հաշվի էին առնվում նաև Արևելա-հնդկական ընկերության շահերը: «Արևելա-հնդկական ընկերության բաժնետերերի մի ժողովում, - տեղեկացնում էր Լիվենը Լոնդոնից, - անգլիական զնդապետ Ստենհոկը առաջարկում էր անգլիական կառավարությանը կոչ անել միջոցներ ձեռնարկելու ռուսների հաջողությունները Պարսկաստանում կասեցնելու համար»²: Սակայն կասեցնել այդ հաջողություններն անհնարին էր, քանի որ պարսկական բանակն արդեն ջլատված էր: Դրության անհուսալիությունն ընդունում էր նաև Ֆաթի-Ալի-շահը: Նա հայտարարեց Աբաս-Միրզային, որ «չի կարող տալ ո՛չ զորքեր, ո՛չ դրամ և պատասխանատու չէ Պարսկաստանում խաղաղության համար, քանի որ իր մոտ գտնվող զորքերը ցրվում են և չեն ենթարկվում»³: Պարսկաստանի պարտության մեղքը շահը գցում էր անգլիացիների և թագաժառանգ շահազդե Աբաս-Միրզայի վրա, որոնց անվանում էր «պատերազմի սադրիչներ»⁴, որպեսզի հեռացնի իրենից Պարսկաստանի ժողովուրդների զայրույթը և ազատի իրեն պատասխանատվությունից պատերազմը տանուլ տալու համար, չնայած այն բանին, որ ինքը հանդիսանում էր այդ պատերազմի զլխավոր կազմակերպիչներից մեկը:

Լոնդոնում ռուսական դեսպանը Բ. Ա. Լիվենի հետ բանակցությունների ժամանակ բրիտանական արտաքին գործոց նախարար Ջ. Կաննինգհեմի նախաձեռնությունները ձախողվեցին:

4. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին Անգլիայի միջամտության հարցը հետհոկտեմբերյան շրջանի հայ և ռուս պատմագրության գնահատմամբ

Հայ, ռուս և այլ խորհրդային պատմաբաններ ժանրակչիռ ներդրում ունեցան XIX դարի սկզբի անգլո-պարսկական և ռուս-պարսկական

¹ АВПР, Ф. МИД, Канц., 6963, л. 150-150об.

² АВПР, Ф. МИД, Канц., 6964, л. 138об.

³ ЦГВИА, Ф. ВУА, 6. 4337, л. 7.

⁴ Նույն տեղում, էջ 8:

հարաբերությունների ուսումնասիրության մեջ, պարզաբանեցին Անգլիայի դերը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սանձազերծման գործում:

Ռուս պատմաբան Ս.Վ. Շոստակովիչը պնդում է, որ անգլիական քաղաքագետները, որոնք բորբոքում էին երկրորդ ռուս-պարսկական պատերազմը, հույս ունեին լուծել միաժամանակ մի շարք բարդ հարցեր: Նախ, նրանք մերձավորարևելյան իրադարձություններին պետք է տալին Անգլիային ցանկալի մեկնաբանում, որպեսզի հնարավոր չլիներ Ռուսաստանի միանձնյա ելույթը Պարսկաստանի դեմ ի պաշտպանություն հույների: Երկրորդ,- նշում է այնուհետև Ս.Վ. Շոստակովիչը,- ի նկատի էր առնվում, որ այդ պատերազմը ոչ միայն կարգելակի ռուսական ներթափանցմանը Միջին Արևելքի երկրներ, այլև կկրճատի ռուսական տիրապետություններն Անդրկովկասում: Վերջապես, ռուս-պարսկական պատերազմը կարող էր ուժեղացնել անգլիական ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքում և Պարսկաստանին դնել Անգլիայի հսկողության տակ¹:

Անգլիական դիվանագիտության ընտրությունն ակնհայտ էր, որովհետև Պարսկաստանում գոյություն ուներ ռևանշիստորեն տրամադրված հակառուսական խմբավորում, որ վարձատրվում և օժանդակություն էր ստանում անգլիացիների կողմից: Բացի այդ, անգլիական խորհրդականների ղեկավարությամբ մոդերնիզացվում էր պարսկական բանակը, իսկ Պարսկաստանը կապված էր Անգլիայի հետ Թեհրանի պայմանագրով, որն ուներ հակառուսական ուղղվածություն:

Ս.Վ. Շոստակովիչն այնուհետև նշում է, որ Անգլիայի համար ոչինչ չարժեք Պարսկաստանին գրգռել Ռուսաստանի դեմ, քանի որ Կաջարները չէին ցանկանում հաշտվել անդրկովկասյան իրենց տիրույթների կորստի հետ և ցանկացած ժամանակ պատրաստ էին պատերազմը վերսկսել Ռուսաստանի դեմ:

Ս.Վ. Շոստակովիչն ուշադրություն դարձրեց ինչպես 1821-1823թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո ռևանշիստորեն տրամադրված պարսկական վերնախավի, այնպես էլ շահի արքունիքի, շիխական բարձր հոգևորականության և անգլիական ռեզիդենտների կողմից պատերազմի պրոպագանդայի ուժեղացմանը²: Չնայած այն բանին, որ այդ բոլորը տեղի էր ունենում հիմնականում ոչ թե 20-ական թվականների Արևելյան ճգնաժամի ոլորտի ընդլայնման շրջանում, ինչպես նշում է Շոստակովիչը, էլնելով Ա.Վ. Ֆադեևի տեսակետից, այլ այդ ընդլայնման նախօրյակին, քանի որ Ռուսաստանի դեմ պատերազմի պրոպագան-

դան Պարսկաստանում տարվում էր նախքան ռուս-պարսկական պատերազմի սկսվելը, մինչև 1826թ. հուլիսի 16-ը, ուստի և այդ պատերազմը, նմանապես և Եգիպտոսի 1824-1825թթ. ագրեսիան Յունաստանի դեմ կանխորոշեցին Արևելյան ճգնաժամի ոլորտի ընդլայնման երկրորդ փուլը (1824-1827թթ.):

Լ.Ս.Սենյոնովի կարծիքով, «1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը ինչպես Պարսկաստանի և Ռուսաստանի, այնպես էլ մի կողմից՝ Անգլիայի և Թուրքիայի և մյուս կողմից՝ Ռուսաստանի միջև հակասությունների սրման արդյունքը հանդիսացավ»¹:

Մեր կարծիքով, հարցի այսպիսի դրվածքը շրջանցում է պատերազմող կողմերի հիմնական նպատակները և որոշակի չափով դնում է Անգլիային ու Թուրքիային այդ երկրների հետ նույն շարքում: Վերջինները, ըստ էության, արտաքին գործոններն էին և կարող էին միջամտել կամ ազդեցություն գործել կողքից, կարող էին նաև արագացնել կամ արգելակել այս կամ այն պրոցեսները, սակայն չէին կարող փոխարինել պատերազմող կողմերին:

Լ.Ս.Սենյոնովն ուշադրություն դարձրեց, որ Անգլիան գտնվում էր պատերազմող զույգ կողմերի հետ էլ դաշնակցային հարաբերությունների մեջ, սակայն վերաբերվում էր նրանց բոլորովին ոչ միանման: Այդ ապացուցվեց, մասնավորապես, 1826թ. ռուս դեսպան Ա.Ս.Սենշիկովի Պարսկաստանում լինելու ժամանակ: Չնայած այն բանին, որ Ռուսաստանի դեմ պատերազմի հարցը գործնականապես արդեն որոշված էր Կաջարների կողմից, իսկ պարսկական գորքերին հարձակման հրաման էր տրված, Անգլիայի գործերի հավատարմատար Գ.Վիլոկը պատերազմն սկսվելուց մեկ շաբաթ առաջ՝ հուլիսի 9-ին հայտարարեց Ա.Ս.Սենշիկովին, որ իբր իրեն հաջողվեց համոզել Ֆաթի-Ալի-շահին «հետաձգել արշավանքը և բանակցություններն սկսել սահմանային քաղաքում», ինչպես առաջարկում էր Սենշիկովը Ալլահ-Յար-խանին հուլիսի 5-ին հղած նոտայում²: Սակայն ռուսական միսիան ձերբակալվեց Երևանում, որպես երաշխիք՝ պարսկական հարձակումը ձախողվելու դեպքում: Սենշիկովին ձերբակալել էին այն բանի համար, որպեսզի օգտագործեին ռուսական դեսպանի Պարսկաստանում գտնվելը պարսկական հարձակման անսպասելիությունն ապահովելու համար:

Չնայած այն բանին, որ Գ.Վիլոկը փորձում էր թյուրիմացության մեջ գցել Սենշիկովին, բրիտանական լրատվական միջոցները ստեղծում էին թյուր տպավորություն, որ իբր Անգլիան չեզոքություն է պահպանում ռուս-պարսկական կոնֆլիկտում, որն արժանացավ ցարական կառավարության հրապարակային հավանությանը: Այդ կապակցությամբ չի կարե-

¹С.В.Шостакович. Дипломатическая деятельность А.С. Грибоедова, М., 1960, с.87.

²Նույն տեղում:

¹Семенов Л.С., Указ. соч., с. 104.

²Նույն տեղում:

լի համաձայնվել Ա. Վ. Ֆադեևի հետ այն հարցում, որ ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին ցարը, փաստորեն, հեռացրել էր Երմոլովին «դիվանագիտական մասից», որպես դեսպան Թեհրան ուղարկելով Ա. Ս. Մենշիկովին¹:

Մենք գտնում ենք, որ Ա. Ս. Մենշիկովի միսիան չի կարելի դիտել որպես «դիվանագիտական մասից» գեներ. Երմոլովին հեռացնելու արդյունք: Երմոլովը հանդիսանում էր Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր հրամանատարը և երկրորդ անգամ ուղարկել նրան Պարսկաստան որպես արտակարգ և լիազոր դեսպան 1817թ. նրա առաջին անհաջող միսիայից հետո բոլորովին կարիք չկար, մանավանդ, որ Թիֆլիսում նա ուներ դիվանագիտական գրասենյակ, իսկ Թավրիզում՝ դիվանագիտական միսիա: Իսկ եթե ի նկատի ունենանք Երևանի խանի ձեռքում Մենշիկովի պատանդ դառնալու պատմությունը, ինչպես նաև ռուսական դեսպանի փախուստը գերությունից, ապա դժվար է պատկերացնել Երմոլովին Մենշիկովի տեղը, առավել ևս, որ Ա. Վ. Ֆադեևը նկատի չուներ այն, որ Երմոլովին կարող էր նույնը սպասվել:

Աշխատության մեջ քննարկված բրիտանական արտաքին գործոց նախարար Ջ. Կանինգհի և Լոնդոնում ռուսական դեսպան Ք. Ա. Լիվենի միջև բանակցությունների արդյունքները ռուսական գործերի հակահարձակման անցնելուց հետո երկրորդ ռուս-պարսկական պատերազմի երկրորդ փուլում հաստատեցին, որ, նախ, Անգլիան ձգտում էր թույլ չտալ ռուս-թուրքական պատերազմը, երկրորդ կրելով Օսմանյան կայսրության փլուզումից, և փորձում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել Թուրքիայից ռուս-պարսկական պատերազմի օգնությամբ: Անգլիան ակնկալում և հույս էր տածում, որ նրան կհաջողվի ահաբեկել Ռուսաստանին երկու ճակատով՝ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակ պատերազմի հեռանկարով: Երկրորդ, Անգլիան կարողացավ հանդգել Կաջարներին, որ Ռուսաստանի դեմ պատերազմը իբր իրենց ոչնչով չի սպառնում, քանի որ պարսկական գործերի պարտության դեպքում Անգլիան կկարողանա վերականգնել Գյուլիստանի պայմանագրի մինչպատերազմյան սահմանները Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության հետ դիվանագիտական բանակցությունների միջոցով: Կաջարական ռևանշիստներին դժվար չէր համոզել պատերազմ սկսել, առավել ևս, որ Անգլիայի դրամական օգնությունը կարող էր կատարվել նաև զադտնի, ստացված նպաստներից բացի, Անգլիայի 1826թ. փետրվարի հաղթանակը Բիրմայի նկատմամբ լրացուցիչ հնարավորություններ էր բացում Պարսկաստանին հավելյալ միջոցներ հատկացնելու համար: Ելնելով այս հիմնական տեսակետից, ինչպես նաև «սառը պատերազմի» դադարեցումից, մենք գտնում ենք, որ անգլո-ռուսական հա-

րաբերությունների հնացած բնորոշումները կարիք են զգում ճշգրտման կամ վերանայման: Այսպես, Մ. Մ. Բլիևը «Կովկասը և Միջին Ասիան Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» գրքում, որը հրատարակվել է «վերականգնումից» մեկ տարի առաջ, գրում է. «Ղեկավարվելով անգլիական կապիտալի շահերով, որը ձգտում էր ներթափանցել Ասիայի լայնարձակ շուկաները, բրիտանական դիվանագիտությունն իր գլխավոր խնդիրն էր համարում պահպանել Կովկասում լարված իրավիճակը»¹:

Հագիվ թե Անգլիան իր գլխավոր խնդիրը համարեր Կովկասում լարված դրության պահպանումը «Ասիայի լայնարձակ շուկաները անգլիական կապիտալի ներթափանցման» կապակցությամբ: Բանը նրանում է, որ այն ժամանակ Կովկասում անգլիացիներ չկային, և հեղինակը չի նշում, ինչպե՞ս անգլիացիներին հաջողվեց Կովկասում պահպանել «լարված իրավիճակ» և ինչի՞ հետևանք էր այդ իրավիճակը:

Ճշգրտման կարիք ունի նաև Մ. Մ. Բլիևի մեկ այլ տեսակետ այն մասին, որ «Պարսկաստանի ղեկավար շրջանները, համարելով Գյուլիստանի պայմանագիրը լուրջ առժամանակյա զիջում, Ռուսաստանի հետ հաշտություն կնքելուց անմիջապես հետո սկսեցին նոր պատերազմի նախապատրաստում: Պարսկաստանն սպասում էր հարմար առիթի, որպեսզի Անդրկովկասը ենթարկեր իր իշխանությանը»²:

Հայտնի է, որ Գյուլիստանի հաշտությունը Պարսկաստանի զիջումը չէր Ռուսաստանին: Հաշտությունն այդ կնքված էր իննամյա պատերազմից հետո, որի եզրափակիչ փուլում գեներ. Կոտլյարսկին ջախջախեց և Արաքսից այն կողմ շարժեց Աբաս-Միրզայի զորքերը և ավարտեց պատերազմը: Ուրիշ բան, եթե Ռուսաստանից անկախ, Գյուլիստանի հաշտության մեջ շահագրգռված էր Անգլիան, որպեսզի Ռուսաստանը կարողանա շարունակել Նապոլեոնի դեմ պատերազմը Եվրոպայում 1812թ. Հայրենական պատերազմից և 1813թ. Գյուլիստանի պայմանագիրը կնքելուց հետո: Մենք գտնում ենք նաև, որ երկու ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Պարսկաստանի և Ռուսաստանի միջև սահմանային վեճերը ավելի շուտ նախապայմաններ էին, քան պատերազմի պատճառներ, անկախ 1826թ. սեպտեմբերի 16-ի այդ նույն հարցով կառավարական հռչակագրի բովանդակության: Կարծում ենք, որ Ռուսաստանի դեմ պատերազմի լարված նախապատրաստումը կատարվում էր երգրումի 1823թ. հաշտության կնքումից հետո և, ինչպես միանգամայն ճիշտ նշում է Մ. Մ. Բլիևը, նրանից հետո, երբ «բրիտանական

¹ Бллев М. М., *Завершение русско-турецких и русско-иранских войн первой трети XIX в.* (в кн. *Кавказ и Средняя Азия во внешней политике России, М., 1984, с. 125.*)

² *Նույն տեղում:*

¹ Фадеев А. В., *Россия и Восточный кризис XIX века, М., 1958, с. 142.*

կառավարությունը խոստացավ պատերազմի դեպքում շահին հատկացնել դրամական սուբսիդիա և կարգավորել պարսկա-թուրքական կոնֆլիկտը»¹, որից հետո պատերազմի նախապատրաստումը մտավ իր վճռական փուլի մեջ:

Պրոֆ. Ն.Ա.Թավաքալյանը գտնում է, որ Անգլիան Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում իր նվաճողական ծրագրերով շատ էր առաջ անցել ցարական Ռուսաստանից: «Անգլիայի ներթափանցումը Պարսկաստան և Անդրկովկաս,- նշում է նա,- բացատրվում է ոչ միայն Անդրկովկասում ռուսական ազդեցությունը թուլացնելու իր ձգտումով, այլև հաստատելու համար այնտեղ իր գաղութային գերիշխանությունը»²: Պարսկաստանը և Թուրքիան «Ռուսաստանից պաշտպանելու» պատրվակի տակ անգլիացիները ձգտում էին հաստատվել նաև սևծովյան նեղուցների գոտում: Պարսկաստանի «հովանավորությունը» կամ «պաշտպանությունը» «ռուսական վտանգից» Անգլիայի համար միայն դիմակ էր Մերձավոր և Միջին Արևելքում նրա էքսպանսիայի համար³:

Հայ պատմագրության մեջ տեղ են գտել նաև այլ միանգամայն հակադիր տեսակետներ: Վ.Պարսամյանը «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» իր գրքում փորձում է ռուս-պարսկական պատերազմի պատճառները կապել Արևելյան հարցի հետ և այդ կապակցությամբ նշում է. «...եթե նկատի ունենանք, որ հարավարևմուտքից, Բալկանների վրայով նեղուցները գրավելու ցարիզմի բոլոր փորձերը» ուժեղ դիմադրության էին հանդիպել թշնամի և նույնիսկ Ռուսաստանին բարեկամ եվրոպական պետությունների կողմից, ապա պարզ կլինի, ինչու Եկատերինա 2-րդը և հատկապես նրա հետնորդները առաջ քաշեցին Անդրկովկասը նվաճելու հարցը առաջին պլան՝ որպես աշխարհագրական դիրքով ամենահարմար և համեմատաբար ավելի մատչելի ճանապարհի»⁴: Վ.Պարսամյանը նշում է, որ Անդրկովկասը նվաճելու անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև Անդրկովկասի ռազմավարական դիրքով, նրա ջրային (Սև և Կասպից ծովեր) և ցամաքային ճանապարհներով դեպի Թուրքիա, Պարսկաստան և Հնդկաստան, ինչպես նաև անդրկովկասյան շուկայով և նրա հարուստ հումքային բազայով⁴:

Զնայած այն բանին, որ հայ քրիստոնեական եկեղեցու կողմնորոշումը մուսուլմանական երկրները չէին, իսկ Արևելյան Հայաստանի հայ ժողովուրդը արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու առաջնորդությամբ

¹Նույն տեղում:

² Тавакалян Н.А., Русско-армянские отношения в период русско-персидской войны 1826-1828гг. (рукопись канд. диссертации), М., 1950, с.101.

³Նույն տեղում:

⁴Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, մաս 1-ին, Արմֆան, Երևան, 1940, էջ 23:

դաշնակից ռուսական զորքերի հետ միասին անձնվիրաբար պայքարում էին պարսկական զորքերի դեմ, հայ պատմաբան Ս.Մարկոսյանը սխալ կերպով պնդում է, որ չնայած Անդրկովկասի բնակչության մեծ մասն իբր ուներ պարսկական կողմնորոշում և նույնիսկ սխալ կերպով բացատրում է դա նրանով, որ չնայած Անդրկովկասի մեծագույն մասում ռուսական սվիցներն էին իշխում, այնուամենայնիվ, բնակչության մեծագույն մասն իր կապերը չէր խզել Պարսկաստանի հետ: Ռուսաստանի կողմնորոշում ունեին,- իր բառերով ասած,- «...տեղական ազնվականությունն ու վաճառականությունը», որն «...այս կամ այն կերպ ռուսական օրինետացիա էր պաշտպանում»¹:

Ս.Մարկոսյանի կողմից Անդրկովկասի հայ և մյուս բոլոր ժողովուրդների ճնշող մեծամասնության ռուսական կողմնորոշման ժխտումը հանդիսանում է պատմական ճշմարտության կոպիտ խեղաթյուրում: Բազմաթիվ, նամանավանդ, մինչհեղափոխական պատմաբաններ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի պատճառները փնտրում են Երմոլովի քաղաքականության և դիվանագիտության մեջ: Գեն. Պասկևիչի չափից ավելի միտումնավոր կողմնակից, մինչհեղափոխական շրջանի պատմաբան Շչերբատովը կշտամբում է Ա.Պ.Երմոլովին այն բանի համար, որ նա չէր ճանաչում Աբաս-Միրզային որպես գահաժառանգ, և դրա հետևանքով «վիրավորված Աբաս-Միրզան սկսեց կողմնորոշվել դեպի Անգլիան և Ռուսաստանի դեմ պատերազմ սկսեց»²: Վկայակոչելով ոմն հնաբնակ Վ.Անդրեևին, ռուս պատմաբան Օ.Ի.Պոպովան առանց որևէ հիմքի գտնում է, որ Ա.Պ.Երմոլովը մեծ դեր խաղաց ռուս-պարսկական պատերազմի սանձազերծման մեջ և սխալ կերպով բացատրում էր դա նրանով, որ նա «անընթաց կատ էր վերաբերվում պարսկական արքունիքին և ամեն կերպ աշխատում էր խանգարել Պարսկաստանում անգլիական ազդեցությանը»³: Մեջբերում կատարելով Ե.Պ.Կովալևսկուց, Օ.Ի.Պոպովան պնդում է նաև, որ գեն. Երմոլովն իբր «պատասխանատվություն է կրում ոչ միայն 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի, այլև Թեհրանում 1829թ. հունվարի 30-ին պարսիկների կողմից ռուսական միսիան կոտորելու համար, չնայած այն բանին, որ այդ ժամանակ գեն. Երմոլովը պաշտոնազրկված էր: Օ.Ի.Պոպովան զրպարտում է նաև ռուս մեծ գրող ու դիվանագետ Ա.Ս.Գրիբոյեդովին: Ժխտելով նրա սպանության քաղաքական շարժառիթները, Օ.Ի.Պոպովան, ինչպես նաև

¹Մարկոսյան Ս., Ռուս-ֆրանսիական և ռուս-անգլիական հարաբերությունը Պարսկաստանում Անդրկովկասի նվաճման կապակցությամբ: Պետհրատ, Երևան, 1936, էջ 37-38:

²Щербатов. Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, СПб., 1890, т.2, с.8-9.

³Попова О.Н., Грибоедов - дипломат, М., 1964, с. 74-75.

Գ.Ս.Կոմիսարովը, առանց որևէ հիմք ունենալու, դատապարտում են «ոչ բարեկիրթ», իրենց բառերով ասած, Ա.Ս.Գրիբոյեդովի վարքագիծը, որը շահի հետ խոսակցության ընթացքում «հոգնեցնում էր նրան», իսկ շահը յուրաքանչյուր ունկնդրությունից հետո «դուրս էր գալիս Գրիբոյեդովի մոտից ծայր աստիճան գրգռված»¹:

Մի շարք պատմաբաններ քննադատության են ենթարկում Ի.Ֆ.Պասկևիչի գործունեությունը: Ն.Ա.Թավաքալյանը, օրինակ, կշտամբում է Շչերբատովին Ի.Ֆ.Պասկևիչի բացահայտ գաղութարարական գործունեությունն անտեսելու համար:

Ի.Ֆ.Պասկևիչի գործունեության անաչառ քննադատությունն արվել է Բ.Պ.Բալայանի կողմից: Նա նշում է, մասնավորապես, որ Դեհկարհանի և Թուրքմենչայի բանակցություններին ռուսական պատվիրակությունը ղեկավարող Պասկևիչի գործունեությունը աչքի էր ընկնում ծայրագույն անհետևողականությամբ: «Պասկևիչը, - գրում է Բ.Պ.Բալայանը, - Անդրկովկասի տնտեսական զարգացման գրիբոյեդովյան ծրագրի վրա վետո էր դրել»²: Պարսկաստանի հետ նոր սահմանը որոշելու ժամանակ Պասկևիչը մերժեց հայերի խնդիրքը՝ պարսկական զորքերի կողմից գրավված պատմական հայկական Մակուի Մահալի տարածքը Ռուսաստանին միացնելու մասին: Շատ խառնաշփոթ է ստեղծել Պասկևիչը ռազմատուգանքի հետ կապված հարցերի մեջ: Պասկևիչը ազատեց գերությունից և բերեց Թուրքմենչայ բանակցությունների երկու ռուս-պարսկական պատերազմների «սադրիչներից մեկին», շահի նախկին վարչապետ Ալլահ-Յար-խանին և ստիպեց նրան իր թելադրությամբ նամակ գրել շահին և վերցրեց իր հովանու տակ Աբաս-Միրզային, որին պատրաստվում էին սպանել նրա հպատակները: Պասկևիչը թերի էր հասկանում անգլիական քաղաքականությունը և, չնայած Ա.Ս.Գրիբոյեդովի հակաճառումներին, հավատում էր անգլիական դիվանագիտության շահագրգռվածությանը հաշտության շուտափույթ կնքման մեջ: Պասկևիչի այդ մոլորությունները չեղյալ համարեցին Զ.Ա.Լիվենի կարևոր դիվանագիտական հաղթանակը Ջ.Կաննինգհի նմատմամբ Լոնդոնում, որտեղ ձայնողվել էին Անգլիայի միջամտության փորձերը: 1827թ. նոյեմբերին Պասկևիչն արդեն, փաստորեն, թույլ տվեց բանակցությունների ժամանակ անգլիական դիվանագետների միջամտությունը (միջնորդության անվան տակ): Ի վերջո, Մակդոնալդը Թավրիզում, իսկ Մակնիլը՝ Թեհրանում ճնշում էին գործադրում Կաշարների վրա:

¹ Балаян Б.П., *Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России*, с. 230-231.

² Նույն տեղում:

ՊԼՈՒՏ ԵՐՐՈՐԴ

ԹՈՒՐԵԿԱՅԻ ԴԵՐՈՆ ԵՐԿՐՈՐԴ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՆՁԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Թուրք-իրանական պատերազմը և Էրզրումի 1823թ.

հաշտությունը հակառուսական դաշինք ստեղծելու անգլո-թուրք-իրանական պլաններում

Ռուսական դիվանագիտական միսիան Թեհրանում ներկայացնում էին գործերի հավատարմատար Սեմյոն Մազարովիչը և միսիայի քարտուղար Ալեքսանդր Մազարովիչը, սակայն իրականում գործերի հավատարմատարն էր Ա.Ս. Գրիբոյեդովը՝ միսիայի՝ ցարի և Նեսելրոդեի հետ համաձայնեցրած կարևորագույն դիվանագիտական նախաձեռնությունների հեղինակը և Թուրքմենչայի հաշտությունը կնքելուց հետո՝ արտակարգ և լիազոր դեսպանը:

Ա.Ս.Գրիբոյեդովին ճնշում էին հակասությունները՝ կապված նրա վիճակի երկվության հետ: Մի կողմից նա պաշտոնապես հանդիսանում էր ցարական դիվանագետ և պարտավոր էր կենսագործել ցարիզմի քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ ի դեմս Չացկու, նա մերկացնում էր ինքնակալության քաղաքականությունը «խելքից պատուհաս» պիեսում: Եվ երբ նրա մոտ միտք ծագեց օգտվել ռուս-թուրքական դիվանագիտական հարաբերությունների խզումից և Կոստանդնուպոլսից ռուսական դեսպան Ստրոգանովի մեկնումից, Ալեքսանդր Սերգեևիչը գործեց վճռական և համարձակորեն: Աբաս-Միրզայի մոտ ունկնդրության ժամանակ Ա.Ս. Գրիբոյեդովը հայտնեց նրան իր նկատառումներն այն մասին, թե ի՞նչ առավելություններ կունենար Պարսկաստանը, եթե պատերազմը Թուրքիայի դեմ այն ժամանակ, երբ թուրքական զորքերի մեծ մասը գտնվում էր Յունաստանում՝ հույն ժողովրդի ապստամբությունը ճնշելու համար: Այդ պայմաններում Պարսկաստանը կարող էր հավասարակշռել Թուրքիայի հաշվին իր տարածքային կորուստները, նաև կարող էր մերժեցնում տեղի ունենալ Ռուսաստանի հետ երկարատև հակամարտությունից հետո: Բացի այդ, Պարսկաստանի համար Թուրքիայի դեմ պատերազմը կարող էր ժողովրդականություն վայելել, քանի որ թուրքական զորքերի հարկադրված հեռացումը պարսկական սահման կարող էր օգնություն ծառայել հույն հեղափոխականների համար և կարող էր նաև պատիժ ծառայել անգլիացիների համար, որոնք մինչև այդ գրավել էին Պարսից ծոցի պարսկական հարզ կղզին, իսկ Աբաս-

Միրզան կարող էր օգտվել Յնդկաստանից Միջագետքով դեպի թուրքիա և Եվրոպա տանող առևտրական ուղիների փակվելուց պատերազմի ընթացքում: Առավել դժվար հարց էր մուսուլման Շահզադեի օգնությունը քրիստոնյա ապստամբ հույներին և Արևելյան Յայաստանի քրիստոնյա հայերին:

Գահաժառանգ Շահզադեն տպավորություն էր ստեղծում, որ թուրքիայի դեմ պատերազմի նախաձեռնությունը գալիս էր իրենից: Գեմ. Երմոլովին հղած նամակում նա, ոչ առանց կեղծավորության, գրում էր, որ հույն քրիստոնյաների նկատմամբ թուրքական կառավարության ցուցաբերած դաժանության հանդեպ զայրույթի զգացմունքն է նրան ստիպում պատերազմ սկսել: Եվ այդ հաստատելու համար Աբաս-Միրզան մեկնում է Եջմիածին և օծում է իր սուրը վանքի քրիստոնեական գոհասեղանին¹: Միանգամայն ակնհայտ է, որ Աբաս-Միրզան փորձում էր իր նպատակների համար օգտագործել հայ ժողովրդի դարավոր ատելությունը թուրքիայի նկատմամբ:

Սկզբում թուրք-իրանական պատերազմը խիստ սրեց անգլո-պարսկական հարաբերությունները: Անգլիացիները գենք էին հասցնում Պարսկաստան Ռուսաստանի դեմ պատերազմի համար, իսկ այդ գենքը Պարսկաստանն օգտագործում էր Անգլիայի դաշնակից թուրքիայի դեմ պատերազմում: Չիրականացվեց նաև Ռուսաստանի դեմ պատերազմելու համար Անգլիայի ծրագրերում նախատեսված թուրք-իրանական դաշինքը: Ավելին, զգալի չափով կրճատվեց անգլո-պարսկական առևտրի ծավալը, իսկ Յունաստանից թուրքական զորքերի հեռանալը Անգլիայի համար ստեղծում էր Միջերկրականի կղզիների վրա հեղափոխական հրդեհ տարածելու հեռանկար:

Բրիտանական գործերի հավատարմատար Դ.Վիլոկը շահից պահանջեց դադարեցնել թուրք-իրանական պատերազմը և, չհասնելով նպատակին, գործադրեց միջազգային պատժամիջոցներ: Պարսկաստանից ետ կանչվեցին անգլիական սպաները, իսկ շահը, իր հերթին, պահանջեց անգլիացիներից նպաստ հատկացնել իրեն 200 հազար թուման գումարով՝ համաձայն Թեհրանի 1814թ. պայմանագրի, սակայն Անգլիան մերժեց նրան, քանի որ պայմանագրում խոսքը գնում էր եվրոպական մեծ տերության դեմ Պարսկաստանի պատերազմի մասին (նկատի էր առնվում Ռուսաստանը), և ոչ թե ասիական որևէ երկրի հետ, ինչպիսին հանդիսանում էր Օսմանյան կայսրությունը: Այնուհետև շահը մեղադրեց քրիստոնեական դեսպանորդին դավաճանության մեջ և փակեց անգլիական հյուպատոսությունը Թավրիզում: Դրան ի պատասխան Կաննինգը Լոնդոնում ռուսական դեսպանին նոտա փոխանցեց,

որը դատապարտում էր թուրք-իրանական պատերազմի հետ կապված ռուսական միսիայի գործունեությունը Թավրիզում¹:

Պետերբուրգում ռուսական միսիայի չվավերացված նախաձեռնությունները քննարկվեցին ցարի և արտաքին գործոց նրա երկու նախարարների (Նեսելրոդեի և Կապոդիստրիայի) և Գլխավոր շտաբի պետ գեմ. Դիբիչի հետ խորհրդակցության ժամանակ: Կապոդիստրիան և Դիբիչը համառորեն պնդում էին թավրիզյան միսիայի առաջարկություններն ընդունելու անհրաժեշտության մասին և հրաժարվեցին Պարսկաստանի հետ ռազմական դաշինքից: Ցարիզմը չէր ցանկանում սրել իր հարաբերություններն Անգլիայի հետ, խուսափում էր սպառնալիքներից, երկյուղ էր կրում «Սրբազան դաշինքի» կազմալուծումից և չէր ցանկանում պատերազմել «հույն խռովարարներին» պաշտպանելու համար, երբ Ռուսաստանը դեռ ուշքի չէր եկել սովից, Դոնի, մերձագոլվյան շրջանների գյուղացիության և Կովկասի լեռնցիների ելույթներից: Նեսելրոդեն գեմ. Երմոլովի միջոցով Ա.Ս. Գրիբոյեդովին և Ս.Մազարովիչին հրամայեց հայտարարել Աբաս-Միրզային, որ Ռուսաստանը չի համաձայնվի մասնակցել թուրքիայի դեմ միասնական արշավանքին²: Ավելին, Թավրիզում անգլիական հյուպատոսության փակվելուց անմիջապես հետո Նեսելրոդեն կարգադրեց փակել ռուսական միսիան ևս և ետ կանչեց Թիֆլիս Ա.Ս. Գրիբոյեդովին և Ս.Մազարովիչին: Յատկանշական է, որ Նեսելրոդեն հեռացրեց Ա.Ս. Գրիբոյեդովին հետագա դիվանագիտական աշխատանքից, և միայն գեմ. Երմոլովի ջանքերի շնորհիվ 1822թ. փետրվարի 19-ին նա նշանակվեց դիվանագիտական մասի քարտուղարի պաշտոնում՝ Գլխավոր հրամանատարի գրասենյակին կից: Պատմաբաններն ուշադրություն չէին դարձրել այն բանին, որ երբ Մազարովիչն ու Գրիբոյեդովը դիմեցին Աբաս-Միրզային թուրք-իրանական պատերազմի հարցերով, նրանք չէին կասկածում, որ Աբաս-Միրզան դեռ այն ժամանակ գիտակցաբար գնում էր Անգլիայի հետ իր հարաբերությունների սրման հասնելու համար այն բանին, որպեսզի թուրքիայի հետ հաշտություն կնքելու գնով Անգլիայից ստանա ռազմական և ֆինանսական օգնություն՝ Ռուսաստանի դեմ պատերազմելու համար: Յատկանշական է նաև, որ Պարսկաստանը վերադարձրեց թուրքիային պարսկական զորքերի կողմից նվաճված հողերը՝ որպես փոխհատուցում թուրքիայի համաձայնությանը պատերազմելու Ռուսաստանի դեմ Պարսկաստանի հետ դաշնակցած և արտացոլել է թուրքիայի հետ այդ գաղտնի համաձայնությունը Երզրումի 1823թ. պայմանագրի տեքստում: Սակայն, 1826թ., երբ սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, թուրքերը հրաժարվեցին Պարսկաստանի հետ դաշինքից: Պարզվում է, այսպիսով,

¹ *Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т.3, Персидская война 1826-1828гг., вып.1, СПб., 1886, с.9.*

¹ АКАК, т.УІ, ч.ІІ, с. 257, 272.

² ЦГИАЛ, ф.1018, оп.2, д.90, л.11.

որ 1821-1823թթ. թուրք-իրանական պատերազմը և Էրզրումի 1823թ. հաշտությունը Կաջարների կողմից օգտագործվել էին Ռուսաստանի դեմ ռևանշիստական պատերազմի համար, մինչդեռ Թավրիզում ռուսական միսիան ամենից շատ մտածում և երազում էր ապստամբած հույն ժողովրդին օգնություն ցույց տալու մասին: Համեմայն դեպս հույն հեղափոխականներն օգտվեցին թուրքական զորքերի տեղափոխումից Հունաստանից պարսկական ճակատ և թուրքերից ազտագրեցին Ղալաֆաթան, Միսոլունգին, Լիվադիան, Աթենքում ապստամբած հույները ներս քշեցին թուրքական կայազորին Ակրոպոլիս, իսկ Դարդանեղուն հույն նավաստիները զգալի վնաս հասցրին թուրքական նավերին:

Պետության կողմից Գրիբոյեդովի չվավերացված դիվանագիտությունը կարելի էր հասկանալ, քանի որ Ռուսաստանի ամբողջ մտավորականության առաջատար մասը՝ Ա.Ս. Պուշկինից մինչև Վ.Կ. Կյուլտելբեկերը ջերմ համակրանքով էր վերաբերվում հունական հեղափոխությանը և գլուխ էր խոնարհում Բայրոնի սիրագործության առջև: Չնայած այն բանին, որ Ֆ. Էնգելսը «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը» իր աշխատության մեջ բարձր է գնահատել Նեսելրոդի դիվանագիտական արվեստը թուրք-իրանական պատերազմի տարիներին¹, պետք է նշել, որ Նեսելրոդեն ցուցաբերեց իրեն ակնհայտորեն բացասական կողմից:

Ռուսաստանի ուժեղացման հանդեպ ունեցած «կենդանական վախը» ստիպեց Անգլիային և Եվրոպական մյուս մեծ տերություններին օգտվել ցարի և սուլթանի միջև հակասություններից և Ռուսաստանին սպառնալ պատերազմով՝ Թուրքիայի վրա նրա հարձակման դեպքում: Սակայն ռուսաստանյան արտաքին գործոց նախարարին կարելի է դատապարտել այն բանի համար, որ նույնիսկ ցարիզմի քաղաքականության շահերից ելնելով, նա ժամանակին չարձագանքեց Ջ. Կանինգի արտաքին քաղաքականության մեջ տեղ գտած կարևոր փոփոխություններին, որը 1821թ. Հունաստանը հայտարարեց պատերազմող երկիր: Դա Անգլիայի կողմից հույն ժողովրդի ազատագրական պայքարի ճանաչումն էր հնարամիտ կերպով, մինչդեռ Նեսելրոդեն՝ դանդաղ և հակառակ իր հայացքներին համարձակվեց օգնել «հույն խռովարարներին» ռուսական ազդեցությունը Բալկաններում ուժեղացնելու նպատակով միայն 1825թ.²: Նեսելրոդի գործողությունները Թավրիզի ռուսական միսիայի նկատմամբ երկչոտ էին և վատ կշռադատված: Ահաբեկված մեծ տերությունների ճնշումից, նա ռուսական միսիայի գործողությունների համար պատասխանատվությունը բարդեց շահի և

¹Энгельс Ф., *Внешняя политика русского царизма.* - Маркс К.

²Энгельс Ф., *Соч.*, 2-е изд., т.22, с.11-52.

նրա գահաժառանգի վրա նույնիսկ այն ժամանակ, երբ անգլիական դեսպանորդը վտարված էր Պարսկաստանից, իսկ շահը սպառնում էր խզել Անգլիայի հետ դիվանագիտական հարաբերությունները, Նեսելրոդեն պետք է օգտագործեր այդ իրադրությունը անգլիական թուլացած դիրքերի վրա հարձակում կազմակերպելու համար, նկատի ունենալով Անգլիայի անընթաց կատ վերաբերմունքը՝ կապված Թեիրանի 1814թ. պայմանագրի և Գյուլիստանի 1813թ. պայմանագրի չեղյալ հայտարարելու Անգլիայի փորձերի հետ: Սակայն Նեսելրոդեն փակեց Թավրիզում ռուսական դիվանագիտական միսիան անգլիական հյուպատոսության փակման օրինակով ետ կանչեց Թիֆլիսի հավատարմատար Ս.Սազարովիչին և Ա.Ս. Գրիբոյեդովին, պարսից շահի ցանկությանը հակառակ բրիտանական դեսպանորդի վտարումից անմիջապես հետո, որին Կաջարները հայտարարել էին *persona non grata*.

Ինքնին հասկանալի է, որ կոմս Նեսելրոդեն պետք է հաշվի առներ Եվրոպայում և Բալկաններում ռուս-անգլիական հարաբերությունների ընդհանուր ուղղությունը, բայց չմոռանար, որ Պարսկաստանն ուժեղ ճնշում էր գործադրում Անգլիայի վրա նաև Ռուսաստանի օգնությամբ, որի դեմ էին ուղղված ի վերջո Կաջարների ռևանշիստական ծրագրերը: Պարզ է, որ գեներմոլովը, Ա.Ս. Գրիբոյեդովը և Ս.Սազարովիչն ըմբռնում էին Պարսկաստանի փարիսեցիական քաղաքականությունը և, այնուամենայնիվ, ձգտում էին ամեն կերպ հարաբերական մերձեցումը Պարսկաստանի հետ վերածել լիակատարի, թեև այդ հեշտ չէր անել, քանի որ, հակառակ Կաջարների ակնհայտ դժգոհության, գեներմոլովն Անդրկովկասում 20-ական թվականների սկզբին վերացրեց մի շարք խանություններ, այդ թվում և Ղարաբաղի խանությունը, և վերականգնեց Արցախի հայկական մարզը հայ ժողովրդի քաջորդի գեներմոլովի պատրաստվում Պարսկաստանին զիջել Արևելյան Հայաստանի քրիստոնեական նահանգները: Բայց ամբողջությամբ վերցրած Էրզրումի հաշտությունից հետո, որն, ըստ էության, հանդիսանում էր եռակի պայմանագիր Պարսկաստանի, Անգլիայի և Թուրքիայի միջև, Անգլիան վերականգնեց իր դիրքերը Պարսկաստանում և օգնում էր նրան Ռուսաստանի դեմ պատերազմ նախապատրաստելու գործում:

Հայ ժողովրդի դարերով կուտակված ատելությունը թուրքական և պարսկական զավթիչների դեմ ստեղծեց ստերեոտիպ սխեմաներ, որոնք ցարական Ռուսաստանին զերծ էին պահում նրա արտաքին քաղաքականությունը որևէ կերպ քննադատելուց:

Չկողմնորոշվելով միջազգային իրադրության մեջ, Ծ. Պ. Աղայանը դատապարտում էր Անգլիային այն բանի համար, որ Անգլիան ինքը «այնքան էր խճճվել իր սադրիչ քաղաքականության մեջ, որ թուրք-իրանա-

կան պատերազմի օգնությամբ առաջացնում էր կոնֆլիկտներ և բախումներ նույնիսկ իր պարտնյորների միջև և 1821թ. սադրեց թուրք-իրանական պատերազմը»¹: Սակայն իրականում հակասության մեջ է ինքը՝ Ծ.Պ.Աղայանը, քանի որ պատերազմն այդ ուղղված էր նաև Անգլիայի դեմ:

1821-1823թթ. թուրք-իրանական պատերազմը խճճեց անգլիական ծրագրերը Մերձավոր և Միջին Արևելքում: Ամենից առաջ այդ պատերազմը Պարսկաստանին շեղում էր Ռուսաստանի դեմ պատերազմից, ինչպես նաև պատճառ հանդիսացավ թուրքիայի թուլացմանը և դարձրեց նրան առավել խոցելի Ռուսաստանի համար: Բացի այդ, թուրքական զորքերի վերատեղաբաշխումը Հունաստանից Պարսկաստանի դեմ պատերազմի համար հնարավորություն տվեց հույն հեղափոխականների՝ ազատագրելու թուրքերից մի շարք հունական քաղաքներ:

Թուրք-իրանական պատերազմը թանկ նստեց Անգլիային, թեպետև նա չէր մասնակցում այդ պատերազմին: Արգելիչ մաքսատուրքերը Բուշիրում և Բասրայում հանգեցրին Պարսից ծոցում բրիտանական առևտրի թուլացմանը, իսկ Տրապիզոն-Թավրիզ և Բաղդադ-Քերմանշահ ճանապարհների փակումը դադարեցրեց անգլիական ապրանքների արտահանումը Պարսկաստան Միջագետքով և Արևմտյան Հայաստանով: Այս բոլորը ստիպեցին Անգլիային ձգտել դադարեցնելու թուրք-իրանական պատերազմը: Անգլիական դիվանագետներ Յ.Վիլոկի, Դ.Մակնիլի, Հարիոտի, Ջոկսի, Դ.Ֆրեզերի նախաձեռնություններն այդ հարցի կապակցությամբ չընդունվեցին, չնայած այն բանին, որ անգլիացիները որպես փոխհատուցում առաջարկում էին Պարսից ծոցում զավթած Կեշմ կղզին, իսկ երբ այնուհետև շահը պահանջեց Անգլիայից 200 հազար թուման (800 հազար ռուբլի)՝ համաձայն Թեհրանի 1814թ. պայմանագրի, Անգլիան սկզբում մերժեց տալ շահին այդ դրամական նպաստը, այնուհետև վճարեց այն, իսկ դրա փոխարեն 1823թ. հուլիսի 15-ին Պարսկաստանի հետ Լոնդոնում կնքեց «գաղտնի համաձայնություն թուրք-իրանական պատերազմի դադարեցման և Ռուսաստանի դեմ Անդրկովկասում թուրք-իրանական համատեղ հարձակման մասին»²:

Հատկանշական է, որ այդ գաղտնի համաձայնությունը կնքելուց 13 օր անց, 1823թ. հուլիսի 28-ին Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Երզրումի հաշտությունը, որի համաձայն Պարսկաստանը վերադարձրեց Թուրքիային բոլոր ռազմագերիներին և իր կողմից Էրջիշ, Մանազկերտ, Ախլաթ, Բիթլիս, Բայազետ, Սուլեյմանիե, Կիրկուկ և

Մոսուլ քաղաքները: Երզրումի պայմանագրում կար գաղտնի հղված, որը կանխատեսում էր Թուրքիայի պարտավորությունը Պարսկաստանի հետ Ռուսաստանի դեմ պատերազմելու մասին: Թուրքիայի այդ ոչ հանրահայտ համաձայնությունը հարձակման վերաբերյալ ուներ գաղտնի կնիք և, հետևաբար, կրում էր փակ բնույթ, իսկ Անգլիան հանդես էր գալիս անանուն վկայի դերում, թեև հանդիսանում էր այդ գործարքի կազմակերպիչը՝ առևտրական ուղիների բացման և իր առևտրի ներթափանցումը Պարսկաստան վերականգնելու նպատակով:

Հանդես գալով ռուս-թուրքական պատերազմի դեմ, Անգլիան վախենում էր Թուրքիայի պարտությունից, Օսմանյան կայսրության կազմալուծումից և Բալկաններում Ռուսաստանի հովանու տակ սլավոնական պետությունների ստեղծումից: Հետևաբար, Անգլիան կրկնակի անգամ խաբեց պարսից շահին, որպեսզի Կաջարները համոզված լինեին, որ Թուրքիան հանդես կգա Պարսկաստանի կողմից, և մինչև ժամանակ պարսիկները համոզված լինեին, որ սուլթանին իզուր չեն վերադարձրել Պարսկաստանի կողմից նվաճված Օսմանյան կայսրության տարածքները:

Անգլիայի համար երկու այդ պայմանագրերը Անգլիայի կրկնակի ապահովագրերն էին Պարսկաստան վերադառնալու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Թուրքիային մեղադրելու համար սուլթանի կողմից Պարսկաստանի նկատմամբ՝ պայմանագրային պարտականությունները չկատարելու մեջ:

Իսկ երբ սկսվեց երկրորդ ռուս-պարսկական պատերազմը, և Թուրքիան չմիացավ Պարսկաստանին, Անգլիան միջոցներ ձեռնարկեց, որպեսզի ազատի իրեն, և Թուրքիային նույնպես, այդ խաբեության համար պատասխանատվություն կրելուց: Անգլիայի հենց այդ նոր դիրքերից էլ կարելի է դիտել բրիտանական դիվանագիտության վերաբերմունքը Նիկոլայ 1-ինի արտաքին քաղաքական նոր ուղղության նկատմամբ: Նիկոլայ 1-ինը հայտարարեց, որ «Արևելյան հարցում» նա հաշվի չի նստի Եվրոպայի հետ, այլ պատերազմ կսկսի սուլթանի դեմ և վերջ կտա Օտտոմանյան կայսրությանը, եթե Բ.Դուռը չզիջի նրա պահանջներին³:

Կաննինգը «երկաթյա թագավորի» արագ և վճռական գործողություններից զուշանալով, Պետերբուրգ ուղարկեց Նապոլեոնի դեմ դաշնակից զորքերի նախկին գլխավոր հրամանատար՝ դուքս Վելլինգտոնին, որը 1826թ. փետրվարին Նիկոլայ 1-ինին առաջարկեց Անգլիայի միջնորդությունը ռուս-թուրքական կոնֆլիկտում²: Դեռ այն ժամանակ

¹Агаян Ц.П., *Роль России в исторических судьбах армянского народа*, М., 1978, с.203.

²АВПР, Ф.Канцелярия, д.6920, лл.500-503 об. («Ливен-Нессельроде, 2(14)июля 1823»). Ср. Балаян Б.П., *Указ.соч.*, с.89.

³Дебидур А., *Дипломатическая история Европы*, т.1, М., 1947, с.254.

²Княгина Н.С., *Внешняя политика России первой половины XIX века*, М., 1963, с.123.

Անգլիան քայլեր ձեռնարկեց ռուս-թուրքական պատերազմը թույլ չտալու համար: Սակայն Նիկոլայ 1-ինը համաձայնվեց բրիտանական միջնորդությանը սոսկ հույն-թուրքական կոնֆլիկտում և առանց Վելլինգտոնի գիտության մարտի 17-ին (նոր տոմարով) թուրքիային վերջնագիր ներկայացրեց, ըստ որի թուրքիային առաջարկվեց մինչև 1826թ. ապրիլի վերջը վերականգնել Ռուսաստանի և թուրքիայի միջև նախկինում գոյություն ունեցած բոլոր պայմանագրերը և կատարել Բուխարեստի 1812թ. հաշտության պայմանները Բալկանյան պրոբլեմի վերաբերյալ:

Թուրքիային առաջարկվում էր ուղարկել իր պատվիրակությունը Ալկերման, ռուսական սահմանը, ցարի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու, իսկ հակառակ դեպքում, ինչպես նշվում էր, ռուսական զործերի հավատարմատարը կլքի Կոստանդնուպոլիսը: Ռուսական զորքերի կենտրոնացումը Պրուտ գետի վրա արագացրեց իրադարձությունները և Ալկերմանում, ռուս-պարսկական պատերազմից երեք օր առաջ, սկսվեցին բանակցությունները: Անգլիայի համար Ալկերմանի բանակցությունները կարևոր նշանակություն ունեին նաև թուրք-իրանական հարաբերությունների տեսանկյունից: Անգլիան ինչոր կերպ պետք է արդարացներ թուրքիայի չմասնակցելը ռուս-պարսկական պատերազմին այն բանից հետո, երբ Պարսկաստանը սուլթանին վերադարձրեց պարսկական զորքերի կողմից Օտտոմանյան կայսրության նվաճված տարածքները, և այն դեպքում, երբ թուրքիան երկու պայմանագրերով պարտավորվել էր Պարսկաստանի հետ դաշնակցած՝ պատերազմել Ռուսաստանի դեմ: Նշենք նաև, որ թուրքիան ձեռնարկում էր նաև այլ միջոցներ պարսկական զործողությանը իր մասնակից չլինելը արդարացնելու համար: Սուլթան Մահմուդը 1826թ. հունիսին լուծարքի ենթարկեց իր ենիչերական բանակը, չնայած նրան, որ նոր կանոնավոր բանակ չհասցրեց ստեղծել:

Այդ մասին, ինչպես նաև Ալկերմանի կոնֆերանսի և այդ կոնֆերանսին նախորդած ռուսական վերջնագրերի մասին թուրքիան ոչինչ չհաղորդեց Պարսկաստանին, որպեսզի Պարսկաստանը չզոջար և Ռուսաստանի դեմ պատերազմ սկսեր: Թուրքիան այլ ելք չուներ ռուս-թուրքական պատերազմից խուսափելու համար:

Ա.Վ.Ֆադեևը նշում է, որ հենց սուլթանի լիազորվածները տեղեկացան երկրորդ ռուս-իրանական պատերազմի և պարսկական զորքերի հարձակողական զործողությունների մասին, թուրքերն սկսեցին ձգձգել բանակցությունները և ամեն կերպ աշխատում էին նենգորեն ձախողել դրանք: Նրանք հույս ունեին, որ այժմ արդեն ցարը չի կարողանա վճռականորեն հանդես գալ սուլթանի դեմ¹:

¹Фадеев А.В., Указ.соч., с.146, ЦГВИА, Ф.ВУА, д.2591, л.210.

Ալկերմանի կոնֆերանսում թուրքական դիվանագետների վարքագծի փոփոխության մասին հայտնի դարձավ նաև Պետերբուրգում, որտեղ 1826թ. օգոստոսի կեսերին ցավում էին, որ բանակցությունները «դրսևորում էին որոշ սառնություն և դանդաղկոտություն»¹: Այնինչ պատերազմի սկզբից 50օր անց պարսկական զորքերի հարձակումն Անդրկովկաս կասեցվեց: Ռուսական հակահարձակումը նշանակում էր, որ ռուս-իրանական պատերազմի առաջին փուլում պարսկական զորքերը միայն արգելակել էին Նիկոլայ ցարի դիվանագիտական հարձակումը սուլթանի դեմ: Ինչպես և կարելի էր սպասել, Անդրկովկասում ռուսական զորքերի հակահարձակումների հետ միասին Ալկերմանի բանակցությունների մեջ ևս տեղաշարժ զգացվեց: Ռուսաստանյան պատվիրակությունն այժմ ոչ թե խորհրդակցում էր, այլ արդեն թելադրում էր իր պայմանները, իսկ Ալկերմանի պայմանագրի նախապես պատրաստված տեքստն ընդունվեց թուրքերի կողմից առանց որևէ փոփոխության: Դա թուրքիայի պարտությունն էր առանց պատերազմի, բայց թուրքական պարտության նույնիսկ այդպիսի ստորացուցիչ ձևը բավարարում էր Անգլիային, քանի որ թուրքիան խույս տվեց Անգլիայի և թուրքիայի համար այդ պատերազմի չկանխատեսված հետևանքներից:

Կարելի է չկասկածել, ուրեմն, որ 1823թ. հուլիսին, երբ ստորագրված էին Լոնդոնի և Երզրումի պայմանագրերը, սուլթան Մահմուդ 2-րդը չէր պատրաստվում պատերազմել Ռուսաստանի դեմ, քանի որ ավելի էր շահագրգռված ռուս-պարսկական պատերազմի մեջ, որպեսզի ցարի ուշադրությունը շեղեր թուրքիայից և թույլ չտար ռուս-թուրքական պատերազմը: Իսկ ինչ վերաբերվում էր թուրքիային վերադարձված տարածքների համար փոխհատուցմանը, ապա հոգսի այդ մասը Անգլիան վերցրեց իր վրա և Պարսկաստանին վճարեց պատերազմի համար չնչին՝ 200 հազար թուման (800 հազար ռուբլի): Դա միաժամանակ հանդիսանում էր Անգլիայի Պարսկաստան վերադառնալու վարձը:

Ամբողջ այս պատմության մեջ ոչ պակաս ուխտադրուժ է թվում Մահմուդ 2-րդ սուլթանի քաղաքականությունը, որը ոչ միայն խաբեց Ֆաթի-Ալի-շահին, այլև հսկողություն սահմանեց ռուս-իրանական պատերազմի ընթացքի վրա, որպեսզի պարսկական զորքերի հաջող զործողությունների դեպքում կասեցնի Ալկերմանի կոնֆերանսը և այդ ճանապարհով ի նպաստ թուրքիայի օգտագործի ռուս-պարսկական պատերազմը:

Հանրահայտ է, որ պարսկական զորքերի հարձակման ընթացքում Պարսկաստանը չի դիմել թուրքիայի օգնությանը: Ռուս դիվանագետ Նոսկովը, որն ուղեկցում էր Մենշիկովին շահի մոտ կատարած նրա ուղևորության ժամանակ, գտնում էր, որ Պարսկաստանում հանդգլված էին,

¹Նույն տեղում:

որ Ակկերմանի բանակցությունների կասեցումը թուրքիային կստիպի պատերազմել Ռուսաստանի դեմ¹: Սակայն Նոսկովի այդ կանխատեսումը չարդարացավ, քանի որ Ակկերմանի պայմանագիրը թուրքական պատվիրակության կողմից ստորագրված էր ռուսական զորքերի հակահարձակման անցնելուց հետո: Թուրքերը չէին փորձում Ռուսաստանի դեմ պատերազմին մասնակցելու նույնիսկ այն բանից հետո, երբ Ֆաթի-Ալի-շահն ուղարկեց Կոստանդնուպոլիս թուրքական սուլթանի մոտ իր դեսպան Դավոդ-խանին, որը հիշեցրեց Մահմուդ 2-րդին Լոնդոնի և Էրզրումի 1823թ. պայմանագրերով Թուրքիայի ունեցած պարտավորությունները Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու դեպքում:

Ոչ պակաս հատկանշական է, որ Շամխորի և Գանձակի անձնատուր լինելուց հետո միայն Դուռը անհապաղ ստորագրեց Ակկերմանի պայմանագիրը, իսկ Աբաս-Միրզան դեսպանին թիֆլիս ուղարկեց զինադար կնքելու համար, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեր պատերազմին, և որպեսզի լոնդոնյան արքունիքը հասցներ պայմանավորվել Ռուսաստանի հետ Անգլիայի միջնորդության հարցի մասին: Այդ ծրագրի իրականացման համար Պարսկաստանում անգլիական դեսպան Մակդոնալդը Լոնդոն ուղարկեց Յենրի Կիլոկին, իսկ Ջ. Կաննինգը ռուսական դեսպան Բ. Ա. Լիվենին հրավիրեց իր մոտ՝ անգլիական միջնորդության հարցի մասին բանակցությունների համար: Սակայն Բ. Լիվենը, ինչպես նշել ենք, մերժեց այդ առաջարկությունը:

2. Ռուսաստանի պայքարը թուրք-իրանական դաշինք ստեղծելու դեմ ռուս-պարսկական պատերազմի եզրափակիչ փուլի նախօրյակին

Թուրք-իրանական պատերազմը հենց սկզբից հիմնված էր Անգլիայի ֆինանսական օգնության և Ռուսաստանի դեմ պատերազմում թուրք-իրանական դաշինք ստեղծելու վրա: Այդ տեսակետից պարսիկների, անգլիացիների և թուրքերի մանևրները, որ հանգեցրին 1823թ. թուրք-իրանական պատերազմի դադարեցմանը՝ Պարսկաստանի կողմից նվաճված տարածքը վերադարձնելու պայմանով, ինչպես նաև Էրզրումի պայմանագրի մեջ գաղտնի հոդվածի ներառումը՝ Թուրքիայի պարտավորությունները Ռուսաստանի դեմ պատերազմելու դեպքում Պարսկաստանի հետ դաշնակցելու մասին, իսկ այնուհետև պայմանագրային այդ պարտավորությունների չկատարումը մատնանշում են, որ Անգլիան և Թուրքիան խաբեցին Պարսկաստանին և չմասնակցեցին ռուս-պարս-

կական պատերազմին:

Իսկ ինչ վերաբերում է ռուսական սահմանին թուրքական զորքերի կենտրոնացմանը, ապա այդ նախատեսված էր Ռուսաստանին մոլորության մեջ գցելու համար: Դա չփոխեց զործերի վիճակը, թեև զգոնացնում էր ռուսաստանյան արտաքին գործոց նախարարությանը: Յենց այդ պատճառով պետական քարտուղար Կ. Վ. Նեսելրոդի 1826թ. օգոստոսի 16 (28)-ի շրջաբերական ճեպագիրը՝ հղված Կոստանդնուպոլիսում ռուսաստանյան գործերի հավատարմատար Մ. Յա. Մինչակիին, հեռատեսորեն համարված էր Նեսելրոդի հետևյալ տեքստով (թարգմանված ֆրանսերենից). «Մենք ստիպված ենք ավելացնել, որ պարսիկները պնդում են, իբր իրենց ներխուժումը կպաշտպանվեր Օտտոմանյան Դռան կողմից, և հենց այդ նպատակներով թուրքական զորքերը կենտրոնանում են ասիական ծովափի այն մասի սահմաններին, որոնք պատկանում են Ռուսաստանին»: «Կայսրը, - գրում էր Կ. Վ. Նեսելրոդին, - դիտում է այդ հայտարարությունը որպես նողկալի զրպարտանք Կոստանդնուպոլսի Դիվանի մտադրությունների նկատմամբ»: Թուրքական զորքերը 1826թ. հուլիսից իսկապես կենտրոնացված էին ռուսական սահմանի վրա, իսկ Նիկոլայ 1-ինի հայտարարությունը «Կոստանդնուպոլսի Դիվանի մտադրությունների նկատմամբ նողկալի զրպարտանքի» մասին համապատասխանում է իրականությանը, քանի որ Մահմուդ 2-րդ սուլթանը չէր պատրաստվում պատերազմել Ռուսաստանի դեմ և իր հայեցողությամբ էր կատարում Էրզրումի 1823թ. պայմանագրի գաղտնի հոդվածը՝ Թուրքիային իր տարածքները վերադարձնելու դիմաց՝ Պարսկաստանին օգնություն ցույց տալու մասին: Այնինչ, ցարի այդ նախագուշացումը ճիշտ ժամանակին էր և 1827թ. ռուս-պարսկական պատերազմի երրորդ փուլի նախօրյակին Ռուսաստանի համար անհրաժեշտ դիվանագիտական ակտ էր, քանի որ Թուրքիայի հետագա վարքագիծը հեշտ չէր կանխագուշակել:

Այնուհետև ռուսաստանյան հավատարմատար Մ. Յա. Մինչակիին առաջարկվում էր բացեիբաց թուրքերին հայտնել պարսիկների տարածած լուրերի մասին և հայտարարել, որ կայսրը ոչ միայն հավատ չի ընծայում պարսիկներին, այլև հավատացած է, որ Դուռը կիսում է ցարի այդ կարծիքը: Մ. Յա. Մինչակիին պետք է հանձնար Բարձր Դռանը «պայմանագրերը սրբորեն կատարելու» և Ռուսաստանի վրա կատարված հարձակման մեջ թուրքերի ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը շտապ հերքելու անհրաժեշտության մեջ²:

Ուշագրավ է, որ գործերի հավատարմատարին կարգադրված էր ռուսական սահմանի վրա թուրքական զորքերի կենտրոնացման հարցը

¹ЦГВИА, Ф. В. У. А., Коллекция 444, д. 3, л. 4-5.

¹ВІР, Документы російского МИД, т. 6(14), Серия вторая, М., 1985, с. 843.

²Նույն տեղում:

կապել Ակկերմանի բանակցությունների հետ, որի մասին առաջին անգամ մատնանշվում է ռուս պատմագրության մեջ: Մ.Յա.Մինչակիին առաջադրված էր, մասնավորապես, հայտարարություն անել այն մասին, որ Թուրքիայի կողմից ռուսական առաջարկությունների ընդունումը «կտա մեզ Թուրքիայի հաշտության մտադրությունների առաջին ապացույցը նաև ռուսական վերջնագիրն ընդունելու հարցում, ինչպես և լիազորված ներկայացուցիչներին Ակկերման ուղարկելու հարցում կապված նախկին հարաբերությունները վերջնականապես վերականգնելու» և պայմանագրի նախագիծը հաստատելու հետ, որը շուտով ներկայացված կլինի¹: Մ.Յա.Մինչակիին պետք է իր համոզմունքը հայտնեի այն բանի մասին, որ «Օտտոմանյան Դուռը, անշուշտ, կմտաբերի, որ նա էլ է ենթարկված եղել պարսիկների կողմից հարձակման այն ժամանակ, երբ բավականին արդարացի հավակնություններն ստիպել են մեզ խզելու նրա հետ մեր հարաբերությունները», և որ «Ռուսաստանն ամբողջ հոգով ձգտում է պատերազմի ավարտին»: Այդ հայտարարության եզրափակիչ մասը հիշեցնում էր վերջնագիր:

«Դիվանը շատ կբարդացնի իր վիճակը, եթե ընտրի այլ ուղի և առաջացնի փոքրագույն կասկած անգամ մասնակցության մեջ: Բացի այդ, շատ կարևոր է, որպեսզի թուրքերը համոզված լինեն, որ Պարսկաստանի հետ մեր գործերի վիճակը ոչ մի ձևով չի փոխի կայսեր արդեն ընդունած որոշումներն այն դեպքում, եթե ակկերմանյան բանակցությունները հաջողություն չունենան, որի հույսը մենք ունենք, և եթե Թուրքիան ուժի դիմի այդ ավստսանքի արժանի դեպքում²:

Մ.Յա.Մինչակիին իրավունք էր վերապահվում կախված Ռեիս-էֆենդիի պատասխանից, ինքնուրույն լուծել այն հարցը, թե «արժե, արդյոք, այդ վերջին հայտարարությունն անել»³: Արտաքին գործոց նախարարության փաստաթղթերից ակներև դարձավ, որ Կոստանդնուպոլսի գործերի հավատարմատար Մ.Յա.Մինչակիի օգնությամբ Ռուսաստանը ճնշում էր գործադրում Թուրքիայի վրա այն բանի համար, որպեսզի Մահմուդ 2-րդ սուլթանը հրաժարվեր իր զավթողական ծրագրերից Անդրկովկասի նկատմամբ, ետ տաներ զորքերը ռուսական սահմանից, հրաժարվեր Ռուսաստանի դեմ պատերազմին մասնակցելուց՝ Պարսկաստանի հետ դաշնակցած և դրանով ապացուցեր Ակկերմանում ռուսական պատվիրակության հետ բանակցությունների նոր, կոնստրուկտիվ քաղաքականության իր կողմնակից լինելը: Դրա հետ մեկտեղ լրացուցիչ ուսումնասիրություններ է պահանջում 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբում ռուսական սահմանի վրա թուրքական զոր-

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

³Նույն տեղում:

քերի կենտրոնացման իրական պատճառների հարցը: Դա կամ թուրքերի սխալ լրատվության հետևանք էր, կամ Թուրքիան իսկապես պատրաստվում էր Ռուսաստանի դեմ պատերազմ սկսել Պարսկաստանի հետ դաշնակցած, իսկ Կ.Վ. Նեսելրոդեն և Մ.Յա.Մինչակիին ահաբեկեցին Մահմուդ 2-րդ սուլթանին և ստիպեցին նրան հրաժարվել պատերազմ սկսելուց:

Մեր կարծիքով Թուրքիան չէր պատրաստվում պատերազմել Ռուսաստանի հետ այն պատճառով, որ Մահմուդ 2-րդ սուլթանը չէր կարող շրջանցել Ակկերմանի պայմանագիրը: Բացի այդ, Թուրքիայի կողմից պատերազմին մասնակցելը թուրք-իրանական դաշինքի պարտության դեպքում կարող էր բերել Օտտոմանյան կայսրության փլուզմանը:

Թուրքիայի կողմից Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելը Անգլիային բոլորովին ձեռնադուր չէր, որը քիչ ջանք չէր թափել Ռուսաստանի ուշադրությունը Թուրքիայից շեղելու գործում: Բացի դրանից, Անգլիան շահագրգռված էր Դռանը վերադարձնելու Պարսկաստանի նվաճած հողերը, որպեսզի թույլ չտրվեր ռուս-պարսկական պատերազմի շեմին Թուրքիայի թուլացումը: Մենք գտնում ենք նաև, որ, եթե Թուրքիան իսկապես պատրաստվեր պատերազմել Ռուսաստանի դեմ Պարսկաստանի հետ դաշնակցած, ապա դրա համար Մահմուդ 2-րդ սուլթանը պետք է անպայման օգտվեր պարսկական 50-օրյա հաջողություններից (1826թ. հուլիս-օգոստոս), որը նա չարեց: Այնուհետև արդեն Շամխորի ճակատամարտից և 1826թ. սեպտեմբերին ռուսական զորքերի հակահարձակման անցնելուց հետո չէր կարելի սպասել, որ Թուրքիան կարող է Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնել Պարսկաստանի կողմն անցած:

Այսպիսով, «Ռուսաստանյան կառավարության հռչակագիրը Պարսկաստանի դեմ պատերազմի մասին» և Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության այլ փաստաթղթերի հիման վրա, մենք գտնում ենք, որ քանի դեռ ռուսական զորքերը Անդրկովկաս ներխուժած պարսկական զորքերին էին դիմագրավում, իսկ այնուհետև անցան հակահարձակման և վերականգնեցին Գյուլիստանի պայմանագրի սահմանները, Ռուսաստանը մղում էր արդարացի պատերազմ (առանց պատերազմի երրորդ փուլը՝ 1827թ. կամպանիան հաշվի առնելու և անկախ այն բանից, որ Ռուսաստանն ու Պարսկաստանը չէին կարող հավակնություններ ունենալ Անդրկովկասի նկատմամբ, որը դարերով շարունակ այդ երկրամասի բնիկ ժողովուրդների բնօրրանն էր):

Մենք գտնում ենք նաև, որ պատերազմի մասին կառավարական հռչակագիրը ցարիզմի կողմից իր արտաքին քաղաքականության մոլի գաղութարարական բնույթը քողարկելու մի փորձ էր, իսկ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի իրական պատճառները՝ պատերազմի նա-

խաղրյալներ հանդիսացող սահմանային վեճերին հանգեցնելու մի փորձ էր:

Միաժամանակ Ռուսաստանը ձգտում էր հասնել միջազգային ճանաչման և արևմտյան մեծ տերությունների պաշտպանությանը և այդ պատճառով կառավարական հռչակագրում սահմանային վեճերը ներկայացրեց խեղաթյուրված ձևով: Ըստ կոմս Նեսելրոդի հնարած մեկնակերպի «սահմանային հարցերը լուծվում էին «իրենք իրենց», իսկ պատերազմի եզրին գտնվող ռուս-պարսկական հարաբերություններն իբր «այնքան բարեկամական էին», որ «ռուսներն ուղղակի չէին հավատում, որ պատերազմը կարող էր բռնկվել այն ժամանակ, երբ լուրջ վեճերի որևէ պատճառ չկար» և «չկային բողոքի հիմքեր», իսկ Գյուլիստանի հաշտությունը հաստատված էր ոչ այլ կերպ, քան «փոխադարձ երդումներով»¹:

Նեսելրոդեն տպավորություն էր ստեղծում, որ իբր ցարական Ռուսաստանը բոլոր հարցերում իրավացի էր, իսկ անշնորհակալ պարսիկներն իրենց վարքագծով գրգռեցին կայսեր ցասումն ու զայրույթը. «Մեր զենքը կպատժի այն վիրավորանքի համար, - գրում էր Նեսելրոդեն ցարի հանձնարարությամբ, - որ Կայսրությանն է հասցրած: Նա կպատժի և վրեժ կլուծի, որպեսզի հետայսու չլինի և նման ներխուժում: Կայսրը... դաս կտա ուխտադրության համար, «և այս բոլորն այն բանի համար», որպեսզի ամբողջ վճռականությամբ պատերազմ վարի մինչև նրա հաջող ավարտը և հասնի շահավետ և ամուր խաղաղության»²:

Այդ նույն ժամանակ Ջ.Կաննինգը բանակցություններ էր վարում Լոնդոնում ռուսական դեսպան Բ.Ա.Լիվենի հետ հաշտության վերաբերյալ ռուս-պարսկական բանակցություններին մասնակցելու համար, որպեսզի օգտվի ռուսական զորքերի կողմից 1826թ. վերականգնված Գյուլիստանի պայմանագրի սահմաններից և Պարսկաստանին «ջրից չոր դուրս բերի», առանց որևէ տարածքային կորստի: Այդ հարցի կապակցությամբ մինչեղափոխական ռուս պատմաբան Ի.Ա. Ջինոկևը գտնում էր, ոչ առանց հեզմանքի, որ «Աբաս-Միրզան գործում էր ոչ այնքան անգլիացիների ցուցումով, որքան իր թեթևամտությամբ, երբ ստեղծում էր բազմաթիվ խոչընդոտներ սահմանային կոնֆլիկտները հարթելու համար, բայց գործը հասցրեց պատերազմի»³:

Ուշագրավ է նաև 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի

¹ Նույն տեղում:

² ВПР, Документы Российского министерства иностранных дел, N:206. Циркулярная депеша статс-секретаря К.В. Нессельроде дипломатическим представителям за границей, 16(28) августа 1826г, (перевод с французского), т.6(14), серия вторая, М., 1985.

³ Зинovieв И.А., Россия и Персия. Эпизод из русско-персидской войны 1827г., СПб., 1897, с.1.

մասնակից Մ.Ե.Կոնցերուի տեսակետը, որը, ի տարբերություն Ի.Ա. Ջինոկևի, գտնում էր, որ Աբաս-Միրզան վրեժխնդրության ծարավ էր զգում պարսկական զորքերի պարտության համար՝ շնորհիվ մոլեռանդ շիիթական հոգևորականության, որի ազդեցության տակ էր գտնվում, և դրանով տարբերվում էր իր հորից՝ Ֆաթի-Ալի-խանից, որի խաղաղասիրությունը բխում էր իր ազահությունից: «Շահը երբեք չէր համարձակվում դրամ ծախսել պատերազմի վրա», - գրում էր Մ.Ե.Կոնցերուն¹: Նա գտնում էր նաև, որ պատերազմի սկզբի պարսկական զորքերի առժամանակյա հաջողությունները, որ ռուսական զորքերի հարկադրված նահանջի պատճառ եղան և իրենց արտահայտությունը գտան «նախնական պաշտպանության՝ երմուլվյան տեսակետի մեջ», գործնականում բխում էին ռուսական զորքերի թվի և կայսրության հարավային սահմանների պաշտպանության շահերի անհամապատասխանությունից²:

Այդ պատերազմի մեկ այլ մասնակից՝ կոմս Սիմոնիչը նշում է, որ ռուս-պարսկական պատերազմը սկսվեց ամենևին ոչ գեմ. երմուլվի պատճառով, ինչպես համարում են նրա հակառակորդները, այլ շնորհիվ անգլիացիների, որոնք օգնեցին Աբաս-Միրզային ստեղծել պարսից կանոնավոր բանակ, որպեսզի նա Պարսկաստանին վերադարձներ Գյուլիստանի պայմանագրով կորցրած հողերը³:

3. Ակկերմանի բանակցությունները և մեծ տերությունների համատեղ գործողությունները Թուրքիայի դեմ Նավարինում

Երկյուղ կրելով Օսմանյան կայսրության փլուզումից և ջանալով «ժամանակ շահել» թուրքական կանոնավոր բանակի կազմավորման համար, անգլիական դիվանագիտությունը ձգտում էր թույլ չտալ ռուս-թուրքական պատերազմը, մի կողմից՝ Ակկերմանի պայմանագրի համաձայն ժամանակավոր թուրքական զիջումների, իսկ մյուս կողմից՝ ռուս-պարսկական պատերազմի (1826-1828թթ.) օգնությամբ, որն Անգլիայի պլաններով պետք է շեղեր Ռուսաստանին Թուրքիայից և սպառնար Ռուսաստանին երկու ճակատով պատերազմով՝ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակ:

¹ Коцебу М.Е., Описание вторжения персиян в Грузию в 1826., "Кавказский сборник", т.22, Тифлис, 1901, с.2-3, 61.

² Նույն տեղում, էջ 61:

³ Персидская война (Кампания 1826г.). Из записок графа Симонича, "Кавказский сборник", т.22, Тифлис, 1901, с.2-3.

Հարավային Եվրոպայի հեղափոխությունը ճնշելուց հետո եվրոպական մեծ տերությունները ձգտում էին օգտագործել հույն ազգային-ազատագրական շարժման հաջողությունները՝ Բալկաններում իրենց ազդեցությունն ապահովելու համար, որը բերեց այդ շրջանում ուժերի նոր տեղաբաշխման և մեծ տերությունների արտաքին քաղաքականության մեջ նպատակաուղղվածության փոփոխության: Անգլիան օգտագործեց Ալեքսանդր 1-ինի անվճռականությունը՝ Բալկաններում Ռուսաստանի ազդեցությունը թուլացնելու և Հունաստանին իր կողմը գրավելու համար: Ավստրիան պաշտպանում էր սուլթանին նրա նոր ձգտումների մեջ՝ ճնշել հույների ապստամբությունը Մուհամեդ Ալիի եգիպտական նավատորմի օգնությամբ, որը ափ էր հանել Իբրահիմ-փաշայի եգիպտական զորքերը: Այդ պայմաններում Ալեքսանդր 1-ինը համոզվեց անհուսալի «պարտնյորների» օգնությամբ «համատեղ զործողությունների» քաղաքականության անզորության մեջ, կտրուկ փոխեց քաղաքականությունը և հրաժարվեց արևմտաեվրոպական մեծ տերությունների հետ հեռագա բանակցություններ վարելուց, որը հավասարազոր էր Ալեքսանդր 1-ինի՝ մեծ տերությունների հետ նրա հարաբերությունները վերանայելուն և միաժամանակ Ռուսաստանի սպառնալիքն էր Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ: Սակայն պատահեց անսպասելի: 1825թ. նոյեմբերի 19-ին Ալեքսանդր 1-ինը վախճանվեց Տագանրոգում, գահն անցավ Նիկոլայ 1-ինին, իսկ դեկտեմբերի 14-ին բռնկվեց դեկաբրիստների ապստամբությունը: Ռուսական գահի հետ կապված փոփոխությունները և Սենատի հրապարակում դեկաբրիստների հետ դատաստան տեսնելը ուղեկցվում էին ինքնակալության արտաքին քաղաքականության մեջ փոփոխություններով: «Երկաթյա ցարի»՝ Նիկոլայ 1-ինի հայտարարությունն այն մասին, որ նա մտադիր է «շարունակել, բայց ոչ թե կրկնել իր նախորդին, սկսել սուլթանի դեմ պատերազմ և վերջ տալ Օտտոմանյան կայսրությանը, եթե Մահմուդ 2-րդը չընդունի իր պայմանները», չէր կարող տագնապի մեջ չզգեց Անգլիային և մյուս մեծ տերություններին: Դրանից հետո Լոնդոնում արդեն շտապեցին կանխել Նիկոլայ 1-ինին, որպեսզի չկանգնեն կատարված փաստի՝ սուլթանի կայսրության փլուզման առաջ: Ի պատասխան Նիկոլայ 1-ինի սպառնալիքներին Անգլիան Պետերբուրգ ուղարկեց Վատերլոոյի հերոս՝ դուքս Վելլինգտոնին: 1826թ. ապրիլի 4-ին պայմանագիր ստորագրվեց Ռուսաստանի և Անգլիայի համագործակցության մասին «Հունաստանը հանդարտեցնելու» հարցում՝ նրան ներքին ինքնավարություն ընձեռելու ճանապարհով:

Բանակցությունները Պետերբուրգում դեռ շարունակվում էին, երբ առանց Վելլինգտոնի գիտության Նիկոլայ 1-ինը Կոստանդնուպոլիս ուղարկեց իր դեսպանին՝ Մինչակիին, որը 1826թ. մարտի 17-ին Դաանը

վերջնագիր հանձնեց հետևյալ պահանջներով.

- դուրս բերել թուրքական զորքերը Մուղավիայից և Վալախիայից,
- վերականգնել Մուղավիայում և Վալախիայում կարգավիճակը՝ համաձայն ռուս-թուրքական պայմանագրերի, որոնք 1821թ. հետո խախտել էին թուրքերը,
- վերադարձնել Սերբիային Բուխարեստի 1812թ. պայմանագրով ստացած իրավունքները,
- վերսկսել ռուս-թուրքական բանակցությունները, որոնք անարդյունք էինք 1816 թվականից մինչև 1821 թվականը:

Այս բոլոր պահանջները ընդունելու համար Թուրքիային տրվում էր վեց շաբաթվա ժամկետ:

Լավ ըմբռնելով այն բանը, որ Թուրքիայի անհաշտ դիրքորոշումը կարող է հանգեցնել պատերազմի, Անգլիան խորհուրդ տվեց սուլթանին՝ ընդունել Ռուսաստանի պահանջները: Համանման խորհուրդ տրվեց սուլթանին նաև Ավստրիայի կողմից, իսկ ռուսական զորքերի կենտրոնացումը Պրուտ գետի վրա արագացրեց իրադարձությունների ընթացքը: Օտտոմանյան կայսրության ներքին վիճակը թույլ չէր տալիս սուլթանին զինված դիմադրություն ցույց տալու Ռուսաստանին և այս անգամ: Բացի այդ, Մահմուդ 2-րդը պատրաստվում էր 1826թ. վերացնել «եմիչերներին» կորպուսը և փոխարինել այն կանոնավոր բանակով, որպեսզի առավել եռանդով պատրաստեր Ռուսաստանի դեմ պատերազմին: Կային և այլ պատճառներ՝ կապված հիմնականում Ակկերմանի պայմանագրի հետ, որոնք ստիպեցին սուլթանին ընդունել Ռուսաստանի հերթական վերջնագիրը:

Ակկերմանի երկարատև բանակցություններից հետո, սկսված 1826թ. հուլիսի 13-ից, ռուսական պատվիրակության կողմից կազմված Ակկերմանի պայմանագրի տեքստը 1826թ. հոկտեմբերի 7-ին ընդունվեց թուրքական պատվիրակության կողմից առանց որևէ փոփոխության կամ հակաճառության:

Ակկերմանի պայմանագիրը բաղկացած էր 8 հոդվածներից և երկու առանձին որոշումներից:

Պայմանագիրը հաստատեց, լրացրեց և ընդլայնեց Բուխարեստի հաշտության պայմանագրի հոդվածները Ռուսաստանի և Թուրքիայի իրավունքների մասին: Ռուսաստանին տրվեցին սևծովյան արևելյան ափի Սուխում, Անակլիա և Ռեդուտկալա քաղաքները: Սուլթանն ընդունեց Ռուսաստանի կողմից առաջարկված Դանուբի սահմանագիծը: Ռուսաստանն ստացավ Թուրքիայի բոլոր նահանգներում առևտրի իրավունք և ռուսական առևտրական նավատորմին ևս՝ Օտտոմանյան կայսրության բոլոր ծովերում ազատ նավարկության և առևտրական նպատակներով նեղուցներն օգտագործելու իրավունք ընձեռնվեց: Թուրքիան

պարտավորվեց Մոլդավիային և Վալախիային վերադարձնել Բուխարեստի պայմանագրով նախատեսված բոլոր իրավունքներն ու արտոնությունները: Հռչակվեց Սերբիայի ներքին անկախությունը: Անգլիայի ուժեղ ճնշման տակ սուլթանն Ակկերմանուն առանց պատերազմի ստորագրեց անվերապահ կապիտուլյացիա, որպեսզի 14 ամիս անց (1827թ. դեկտեմբերի 18-ին) հայտարարի ոչ միայն Ակկերմանի և Թուրքիայի երբևէ Ռուսաստանի հետ կնքած բոլոր մյուս պայմանագրերի չեղյալ լինելու մասին, այլև Ռուսաստանին հայտարարի «ջիհադ»՝ սրբազան պատերազմ:

Ա.Վ.Ֆադեևը գրում էր, որ այն ժամանակ, երբ Ակկերմանի պայմանագրով քողարկված Անգլիան հրահրում էր Թուրքիային և զրգռում էր շահին ռուսների դեմ ռևանշիստական պատերազմի, Նիկոլայ 1-ինը արել էր սուլթանի դեմ դիվանագիտական հարձակումը¹:

Ֆադեևը գտնում էր, որ Կաննինգը գերազնահատել է Կաջարների հզորությունը և չի կանխատեսել բոլոր այն վտանգները, որոնցով հղի էր նրա համար Ռուսաստանի հետ պատերազմը: Սակայն Կաննինգը չէր կարող գերազնահատել պարսկական բանակի հզորությունը, որին Անգլիան ինքն էր գինում, իսկ անգլիական վարձկան սպաները ծառայում էին այդ բանակում և, հետևաբար, ոչ մի կերպ չէին կարող սխալվել պարսկական զինված ուժերի գնահատման մեջ: Բացի այդ, Անգլիան հազիվ թե կասկածում էր Պարսկաստանի նկատմամբ Ռուսաստանի վերջնական հաղթանակի մեջ, թեպետև խոստացել էր շահին վերականգնել Գյուլիստանի պայմանագրի սահմանները պարսկական զորքերի պարտության դեպքում: Սակայն հազիվ թե կարելի է խոսել Կաննինգի դիվանագիտության պարտության մասին պարսկական զորքերի հզորության գերազնահատման կապակցությամբ², որովհետև դրանից հետո էլ Անգլիան շարունակում էր մնալ հզոր տերություն:

Մեր կարծիքով Ա.Վ.Ֆադեևի «Ցարիզմի քաղաքականությունը արևելյան ձգնաժամի ոլորտի ընդլայնման շրջանում (1824-1827թթ.)» «մենագրության երրորդ գլուխը պետք է առավել ամբողջական բացահայտեր Արևելյան հարցի և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի փոխադարձ կապերը և փոխադարձ ազդեցությունը³:

¹ Фадеев, Указ. соч., с. 147-148.

² Նույն տեղում, էջ 148:

³ 19-րդ դ. 20-ական թվականների Արևելյան ձգնաժամի երկրորդ փուլը Ա.Վ.Ֆադեևը սահմանափակում է 1824-1827 թվականներով՝ հունական ապստամբության ճնշմանը եզիպտական նավատորմի մասնակցության կապակցությամբ, իսկ 1827 թվականը համարում էր այդ երկրորդ փուլի ավարտը, հավանաբար այն բանի համար, որ ռուսական բանակի մարտական գործողությունները Պարսկաստանի դեմ պատերազմում հիմնականում ավարտվել էին դեռ 1827թ., չնայած այն բանի, որ Թուրքմենչայի պայմանագիրը կնքվել էր 1828թ.: Բացի այդ, 1828թ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, և Ա.Վ.Ֆադեևը գիտակցաբար է բոլոր տվել անձտություն տարեթվերի մեջ:

Սակայն, ցավոք, Ա.Վ.Ֆադեևը այդպիսի խնդիր չի դրել իր առջև, իսկ դա թույլ տվեց Ն.Ս. Կինյապինային և «Արևելյան հարցը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» գրքի մյուս հեղինակներին դիտել 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը որպես Անդրկովկասի տարածաշրջանի տեղային պրոբլեմ: Որոշակի ուղղումներ այդ հարցում մտցրեց Բ.Պ.Բալայանը: Նա գտնում է, օրինակ, որ 1826թ. պարսկական ներխուժումն Անդրկովկաս և Ակկերմանի բանակցությունների սկիզբը տեղի ունեցան նույն ժամանակ շնորհիվ՝ ոչ միայն անգլիական, այլև թուրքական դիվանագետների կանխամտածված գործունեության¹: Բացի այդ Անգլիան և Թուրքիան հրահրեցին Պարսկաստանին այդ պատերազմն սկսելու՝ Ֆաթի-Ալի-շահի համար ծայր աստիճան անբարենպաստ ռազմաքաղաքական իրադրության մեջ, երբ Ռուսաստանը, Նեսեղոդեի բառերով ասած, «բոլորի հետ հաշտության մեջ էր», իսկ Թուրքիան պատրաստ չէր պատերազմ սկսելու²:

Անգլիան և Թուրքիան շահագրգռված էին, որպեսզի շահը Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնի, համոզված լինելով, որ սուլթանն իր ռազմական դաշնակիցը կլինի: Լոնդոնում և Կոստանդնուպոլսում իրավունք ունեին մտածելու, որ այդպիսի համոզվածության բացակայությունը կարող էր սասանել Կաջարների վճռականությունը: Այդ պատճառով թուրքերի ռազմական լրատվության սխալ տեղեկությունների հետ մեկտեղ (որ իբր Ռուսաստանի սահմանի վրա Թուրքիան կենտրոնացնում է զորքերը), անգլիական դիվանագետները թաքցնում էին շահից և նրա ժառանգորդից այն ամենը, ինչ վերաբերում էր պատերազմի պատրաստ չլինելուն, սուլթանին ներկայացված 1826թ. մարտի 17-ի ռուսական վերջնագրի՝ Պետերբուրգի ապրիլի 4 թվակիր պայմանագրի և, վերջապես, Ակկերմանի բանակցությունների մասին, որոնք չէին վկայում սուլթանի և նրա կողմից ստեղծվող բանակի հզորության մասին³:

«Լսելով ռուս-պարսկական պատերազմի մասին, - նշում է Ա.Վ.Ֆադեևը, - սուլթանի լիազորները սկսեցին դիտավորյալ կերպով ձգձգել բանակցություններն Ակկերմանում, բռնելով ռուսական կողմի առաջարկությունների ակնհայտ սաբոտաժի ուղին: Նրանք հույս էին փայփայում, որ այժմ, կապված լինելով Կովկասի պատերազմով, ցարն արդեն չի կարողանա վճռականորեն հանդես գալ Թուրքիայի դեմ:

Ակկերմանի կոնֆերանսում թուրքական պատգամավորների վարքագծի մեջ փոփոխությունները նկատվել էին նաև Պետերբուրգում... Եթե մայիսին այնտեղ վստահ էին բանակցությունների հաջող ավարտի

¹ Балаян Б.П., Международные отношения Ирана в 1813-1828гг., с.132.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

մեջ, ապա օգոստոսին արդեն սաստիկ ափսոսում էին, որ այդ բանակ-
ցությունները դրսևորում էին որոշ անտարբերություն և դանդաղաշար-
ժություն»¹:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմն անհրաժեշտ էր Կան-
նինգին ո՛չ միայն նրա համար, որպեսզի սուլթանի հետ բանակցու-
թյուններով և Պարսկաստանի դեմ պատերազմով պետերբուրգյան ար-
քունիքի ուշադրությունը շեղի, այլև այն բանի համար, որպեսզի իր քա-
ղաքականությունը Յունաստանի և Թուրքիայի վզին փաթաթի և Ակ-
կերմանի բանակցությունների ժամանակ թուլացնի Ռուսաստանի պա-
հանջները: Պատահական չէ այն պատճառով, որ 1826թ. սեպտեմբերին
գտնվելով Պետերբուրգում, Ա.Վելլինգտոնը Պարսկաստանում նախ-
կին անգլիական դեսպան Մակդոնալդին բացեիբաց գրում էր, որ պար-
սիկների հարձակումը, ըստ երևույթին, Ռուսաստանին Ակկերմանում ա-
վելի չափավոր կդարձնի»²: Բացի այդ, Անգլիան թուրքական դիվանա-
գետներին կողմնորոշել էր Ակկերմանում բանակցությունները նենգա-
դուլի ենթարկելու ուղղությամբ: Դրանով կարելի է բացատրել բանակ-
ցությունների ժամանակ տիրող «անտարբերությունը և դանդաղկոտու-
թյունը», որոնց մասին մատնանշում էր Գլխավոր շտաբի պետ գեմ. Դի-
բիչը³: Նենգադուլը և Ակկերմանում թուրքերի սպասողական մարտա-
վարությունը հիշեցնում էին 1826-1828թթ. երկրորդ ռուս-պարսկական
պատերազմի տարիների բրիտանական դիվանագիտության մարտա-
վարական գիծը: Այդ պատերազմի առաջին ամիսներին, Աբաս-Միրզա-
յի բանակի առժամանակյա հաջողությունների շրջանում, որ բացատր-
վում էր հարձակման անսպասելիությամբ, Օսմանյան կառավարությու-
նը շտապողականություն չէր ցուցաբերում և, հետևելով սպասողական
տակտիկային, բռնեց բանակցությունների սաբոտաժի ուղին: Սակայն
1826թ. սեպտեմբերին, երբ ռուսական զորքերն անցան հակահարձա-
կումների և պարսկական բանակին մի շարք ջախջախիչ հարվածներ
հասցրեցին, Ակկերմանի բանակցությունների ընթացքի մեջ տեղաշարժ
զգացվեց և շատ չանցած՝ բանակցություններն ավարտվեցին այն բա-
նից հետո, երբ ռուսական զորքերի հաջողություններով ոգևորված, Նի-
կոլայ 1-ինի լիազորները հայտարարեցին թուրքերին, որ ոչ մի հարցում
նրանց չեն զիջի, և որ Ռուսաստանի պահանջները պետք է ընդունել
ամբողջությամբ առ 7-ը հոկտեմբերի, այլապես բանակցությունները
կընդհատվեն:

Ընկնելով անհույս վիճակի մեջ Մահմուդ 2-րդը չէր կարող հաշվի

¹ *Фадеев А. В., Указ. соч., с. 146 ссылкой на ЦГВИА, Ф. ВУА, д. 2591, л. 210. Дибич-Витгенштейну, 15 августа 1826.*

² *Kaye W. The life and correspondence of J. Malcolm, vol. II, London, p. 450.*

³ *ЦГВИА, Ф. ВУК, д. 2591, л. 210.*

չառնել այն օգուտները, որոնք Թուրքիան կարող էր ստանալ ռուս-
պարսկական պատերազմի միջոցով և այդ պատճառով խորհուրդներ
էր տալիս Թեհրանի արքունիքին և անում էր ամեն ինչ, որպեսզի այդ
պատերազմը դարձնի անխուսափելի¹: Ինչպես երևում է, սուլթանը մա-
խաձեռնեց հուսահատ մի փորձ՝ փրկել զորությունը քաղաքական դի-
վերսիայի օգուտությամբ: Ռուսական հրամանատարության անօրինութ-
յան տակ կային ապացույցներ այն մասին, որ ռուսական սահմանազ-
խից, Ախալցխայի մոտակայքում, թուրքերը մեծ աճապարանքով հա-
մախմբեցին զորքերի մնացորդները, զորահավաքի ենթարկեցին նոր
կոնտիգենտներ և իրենց գործակալների միջոցով լուրեր տարածեցին
այն մասին, որ սահմանազխից տեղակայված է տաս հազարանոց կոր-
պուս Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու համար պատրաստ վի-
ճակում²: Կաջարները խանդավառությամբ ընդունեցին Բ. Դեան այդ
սխալ լրատվությունը: Բացառված չէ, ուրեմն, որ պատերազմի մասին
Պարսկաստանի ընդունած որոշումը հիմնված էր որոշակի չափով թուր-
քական սուլթանի այդ խաբեության վրա:

Այսպիսով, 1826թ. հուլիսի կեսերին Մահմուդ 2-րդը, ըստ երևույթին,
կարողացավ հանդել Ֆաթի-Ալի-շահին այն բանում, որ պատրաստ-
վում է Ռուսաստանի դեմ պատերազմելու, իսկ այդ ժամանակ Ակկեր-
մանում Ռուսաստանը ոչ թե խորհրդակցում, այլ պարզապես «թելադ-
րում էր պայմաններ» թուրքերին, որպես թույլ կողմի, որն ընդունակ չէ
դիմադրության:

Թուրքիան համաձայնվեց բանակցություններ վարել Ակկերմանում
առանց որևէ խանդավառության, քանի որ, ըստ էության, դա սուլթանի
կապիտուլյացիայի սկիզբն էր առանց պատերազմի: Իսկ գլխավորն այն
էր, որ այդ բանակցությունների մասին Պարսկաստանում հայտնի դար-
ձավ ռուս-պարսկական պատերազմն սկսվելուց հետո: Հակառակ դեպ-
քում այդ պատերազմը կարող էր և չսկսվել:

Ակկերմանի պայմանագիրը երկարատև ժամանակով Պարսկաստա-
նի պլաններից հանեց Ռուսաստանի դեմ պատերազմում թուրքական
բանակի օգտագործման հեռանկարը: Բացի այդ, թուլացնելով Բալկան-
ներում Թուրքիայի գերիշխանությունը, Ակկերմանի պայմանագիրը վե-
րականգնեց Ռուսաստանի գերիշխող ազդեցությունը դանուբյան իշխա-
նապետություններում:

Ռուսաստանի վրա Պարսկաստանի հարձակման և Ակկերմանի բա-
նակցությունների միջև գոյություն ունեցած կապի մասին ժամանակին
մատնանշում էր Նոսկովը, որն ուղեկցել էր Մենշիկովին շահի մոտ ուղևո-
րության ժամանակ: Նրա կարծիքով Պարսկաստանը հույս էր կապում

¹ *Дебидур А., Дипломатическая история Европы. Указ. соч., с. 259.*

² *А. В. Фадеев., Указ. соч., с. 147.*

Ակկերմանի բանակցությունների ձախողման և Թուրքիայի հարձակման, իսկ Անգլիան բանակցությունների շարունակության և Պարսկաստանի հարձակման հետ¹: Այս բոլորը լույս է սփռում բրիտանական արտաքին քաղաքականության նպատակների վրա և վկայում 20-ական թվականների Արևելյան ճգնաժամի ժամանակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում Անգլիայի դիվանագիտական կողողինացված գործունեության մասին: Սուլթանի հետ միասին բորբոքելով ռուս-պարսկական պատերազմը, Անգլիան փորձում էր արգելակել Ռուսաստանի դիվանագիտական հարձակումն Արևելքում, շեղել նրան հունական և թուրքական պրոբլեմներից, Անգլիայի տնտեսական և քաղաքական գերիշխանությունն Արևելքում երկարաձգելու և ապահովելու նպատակով, իսկ Կաջարները չհասկացան եվրոպական և թուրքական դիվանագիտության խաբեբայական մանևրները և ակնհայտեցնում շտապողականություն ցուցաբերեցին պատերազմի հարցում, որը նրանց համար աղետալի ավարտ ունեցավ:

* * *

Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1827թ. հունիսի 25-ի (հուլիսի 6-ի) կնքված Լոնդոնի պայմանագիրը հարված հասցրեց Արբազան դաշինքի քաղաքականությանը²: Այդ պայմանագիրը հնարավորություն ընձեռեց Ռուսաստանին իր հայեցողությամբ լուծել Արևելյան հարցը, իսկ Անգլիան ոչ միայն չկարողացավ ենթարկել ռուսական քաղաքականությունն իր վերահսկողությանը, որին նա ձգտում էր Ռուսաստանի հետ համաձայնության գալով, այլև հարկադրված էր նպաստել ռուսական պլանների կենսագործմանն Արևելքում³:

Կատարելով Լոնդոնյան պայմանագրի պայմանները, դաշնակիցները նոտա ներկայացրին Բ. Դուռ, առաջարկելով հույներին ինքնավար պետության իրավունք վերապահել: Սուլթանը հրաժարվեց բավարարել երեք մեծ տերությունների պահանջները: Այդ ժամանակ ցարական կառավարությունը դաշնակիցներին առաջարկեց ետ կանչել Կոնստանդնուպոլիսից իրենց դեսպաններին, իսկ երեք մեծ տերություններին՝ զրավել դանուբյան իշխանապետությունները: Ֆրանսիան և Անգլիան հակաձառում էին, սակայն, զգուշանալով Բալկաններում Ռուսաստանի

ինքնուրույն գործողություններից, համաձայնվեցին դաշնակից մեծ տերությունների նավախմբերը միավորել՝ թուրքական և եգիպտական նավատորմերը միասնական շրջափակման ենթարկելու նպատակով, առանց «շրջափակումը» վերածելու պատերազմի: Դաշնակից էսկադրայի հրամանատար էր նշանակված անգլիական ծովակալ Կողրինգտոնը⁴: Յունաստանը միացավ Լոնդոնյան պայմանագրին, իսկ սուլթանը հայտարարեց, որ չի ցանկանում նույնիսկ ծանոթանալ բովանդակության հետ և ի պատասխան երեք մեծ տերությունների սպառնալիքներին նավարիյան նավահանգստում միավորեց թուրքական և եգիպտական նավատորմերը՝ թվով 66 նավ և 20 հազար նավաստի: Դաշնակցային էսկադրան կազմված էր 27 նավից և 10 հազար անձնակազմից⁵:

Ռուսների ճնշման տակ 1827թ. հոկտեմբերի 5(17)-ին եգիպտական Իբրահիմ-փաշային ներկայացվել էր վերջնագիր, որով առաջարկվում էր դադարեցնել հույների դեմ ռազմական գործողությունները, հակառակ դեպքում դաշնակիցներն սպառնում էին պատերազմով: Սակայն Իբրահիմ-փաշան հրաժարվեց ընդունել այդ վերջնագիրը:

Փորձելով համաձայնության գալ թուրքերի հետ, ծովակալ Կողրինգտոնը նավարիյան ծովածոց ուղարկեց միայն անգլո-ֆրանսիական նավատորմը: Դաշնակցային հրամանատարությունը հույս ուներ ռուսական էսկադրայի մոտենալու հետ ստանալ թուրքերի համաձայնությունը կոնֆլիկտի խաղաղ լուծման մասին: Սակայն թուրքերն սկսեցին դաշնակցային էսկադրայի գնդակոծումը, որը բերեց դաշնակիցների պատասխան գործողություններին⁶: Ճակատամարտը տևեց երկու ժամից ոչ ավելի և ավարտվեց օտտոմանյան ուժերի ոչնչացումով³:

Նավարիյան պարտությունից հետո սուլթանը փոխհատուցում պահանջեց ոչնչացված թուրքական նավատորմի համար և կտրակաճապես հրաժարվեց Յունաստանին ինքնավարություն տալուց⁴:

Լոնդոնյան պայմանագիրը ստորագրող երեք պետությունների դեսպանների մեկնումը Կոստանդնուպոլիսից չանհանգստացրեց Մահմուդ 2-րդին, քանի որ լորդ Դեղլեյը հայտարարեց, որ Նավարիին չի նշանակում պատերազմական վիճակ⁵: Դրանից հետո ցարի հպատակները Թուրքիայում ենթարկվում էին հալածանքների, ռուս վաճառականների ապրանքները բռնագրավվում կամ թալանվում էին, իսկ 1827թ. դեկտեմբերի 18-ին սուլթանը պաշտոնապես հայտարարեց ակկերմանյան պայմանագրի միակողմանի լուծարքի մասին և թուրքերին դիմեց մա-

¹ ЦГПР, Ф.ВУА, Коллекция 444, д.3, л.4 об.
² АВПР, Главный архив, 1-9, д.13, ч.1, л.48 об., 57. Нессельроде-Паскевичу, 14.УИП. 1827: Дэдлей-Ливену, 27.УИ. 1827, Ливен-Нессельроде, 29.УИ, 1827.

³ Княгиня Н.С., Внешняя политика России первой половины XIX века, М., 1963, с. 125-126.

⁴ Նույն տեղում, էջ 126-127:

⁵ Նույն տեղում, էջ 127:

⁶ Նույն տեղում:

⁴ Սանրամասն տես՝ Ե.Վ.Богданович, Наварин, М., 1877.

⁵ Всемирная история, т.УІ, М., 1959, с. 281.

նիֆեստով («Խատտի-Շերիֆ»), որի մեջ հույս էր հայտնում, որ քրիստոնյաների հետ սրբազան պատերազմում նրանք «կհիշեն իրենց նախնիների փառքը և կգերազանցեն այն սեփական սխրանքներով»: Սակայն 1827թ. հոկտեմբերի 20-ից հետո, երբ նավարինյան ծովային ճակատամարտում ջախջախված էր թուրք-եգիպտական նավատորմը, իսկ սուլթանի բանակը դարձել էր պակաս մարտունակ, «Խատտի-Շերիֆը» ավելի էր վերածվում սխալ հռչակագրի: Որքան էլ ցանկանային թուրքական ասքյարները «հիշել իրենց նախնիների փառքը», որին նրանց կոչ էր անում սուլթանը, Օտտոմանյան կայսրությունը կաթվածահար էր եղել, իսկ Ռուսաստանը, խուսափելով Արևելքում երկրորդ ճակատից, շտապում էր Պարսկաստանի հետ հաշտություն կնքել, որպեսզի այնուհետև պատերազմ սկսեր թուրքիայի դեմ¹:

Չի կարելի ուշադրության չարժանացնել մեկ այլ հանգամանք ևս, որը մատնանշում է Պարսկաստանի և նավարինյան ծովածոցի իրադարձությունների միջև եղած կապի մասին: Խոսքն անենևին պատահական զուգահեռության մասին չէ: Լոնդոնյան պայմանագիրը ստորագրված էր շահի բանակի վրա ռուսական հարձակման թեժ շրջանում, իսկ նավարինյան ճակատամարտը տեղի ունեցավ ռուսական զորքերի թավրիզ մտնելու հինգերորդ օրը², քանի որ Անգլիան երկյուղ էր կրում ռուսական զորքերի դեպի Թեհրան առաջխաղացումից:

Նավարինում մեծ տերությունների միասնական հարձակումը կամ նրանց միասնական միջամտությունը Հունաստանի և Թուրքիայի գործերին Անգլիային առիթ տվեցին հուսալ պարսկական հարցում անգլո-ռուսական համաձայնության մասին, օրինակ, Պարսկաստանից զորքերը դուրս բերելու և ցարիզմի ակտիվությունն այդ երկրում սահմանափակելու հարցում, ինչպես նաև Արևելքում իր սեփական էքսպանսիան ապահովելու համար³: Սակայն, երբ հայտնի դարձավ, որ ռուսական զորքերը չեն պատրաստվում մնալ Պարսկաստանում և դուրս են գալու երկրից հաշտություն կնքելուց և ռազմատուգանք ստանալուց հետո, Գեորգ 4-րդը և Վելլինգտոնը դժգոհություն և կարեկցություն հայտնեցին նավարինյան ճակատամարտի կապակցությամբ:

Այդ ամենով հանդերձ լոնդոնյան պայմանագիրը և Նավարինը, այնուամենայնիվ, հույս էին ներշնչում, որ ռուս-թուրքական պատերազմում Անգլիան սուլթանի կողմից հանդես չի գա (զոնե բացեիբաց)⁴: Այդ պատճառով ցարը պնդում էր Ֆաթի-Ալի-շահի հետ հաշտություն կնքելու անհրաժեշտության մասին⁵:

¹ А.В.Фадеев, Указ. соч., с. 174.

² Балаян, Б.П., *Международные отношения Ирана, с. 202.*

³ Նույն տեղում, էջ 186:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 187:

Հունական անկախ պետության ստեղծումը չէր համապատասխանում բրիտանական կառավարության շահերին, քանի որ կհանգեցներ Օսմանյան կայսրության մասնակի քայքայմանը և Միջերկրականում Անգլիայի գերիշխանության թուլացմանը:

Նավարինյան ճակատամարտից և Դեհկարհանի բանակցությունները փակուղու մեջ ընկնելուց հետո սուլթան Մահմեդ 2-րդը համոզում էր շահին շարունակել Ռուսաստանի դեմ պատերազմը, իսկ շահն իր հերթին մեծ հույսերով սպասում էր Թուրքիայի պատերազմին: Չորքերն Ադրբեջան ուղարկելով, շահն ակնհայտորեն փորձում էր ցույց տալ սուլթանին, իբր պատրաստվում է շարունակել պատերազմը, իսկ իրականում այդ անում էր թուրքերի հարձակումն արագացնելու՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ռուսաստանի համար անբարենպաստ պայմաններում բարենպաստ հաշտության հասնելու նպատակով: Այդ նույն նպատակով շահը հետաձգում էր Դեհկարհանի բանակցությունները, բայց չէր կարող երկար ժամանակ սպասել թուրքերին, քանի որ սուլթանն ի վիճակի չէր պատերազմելու, թեպետև ձգտում էր դրան¹: Խուսափելով Արևելքում երկրորդ ճակատից, Ռուսաստանը շտապում էր հաշտություն կնքել Պարսկաստանի հետ, որպեսզի այնուհետև սկսեր պատերազմը Թուրքիայի դեմ: Ցարիզմն աշխատում էր անել հնարավոր ամեն բան գործն արագացնելու համար: Այդ պատճառով 1828թ. հունվարի 6-ին Նիկոլայ 1-ինն առաջարկեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին ձեռնարկել վճռական միջոցներ Բ.Դաան դեմ, իսկ Պասկևիչը նույն օրն իսկ ընդհատում է Աբաս-Միրզայի հետ բանակցությունները Դեհկարհանում, որպեսզի սպառնա Թեհրանին Կովկասյան հատուկ կորպուսի զորքերով և Կաջարներին կապիտուլյացիայի հարկադրի²:

Հայ պատմագրության մեջ ամրապնդվել է մի հայեցակետ, ըստ որի երեք մեծ տերությունների Լոնդոնի 1827թ. հուլիսի 16-ի պայմանագիրը և նավարինյան ճակատամարտը ռուս-պարսկական բանակցությունների ժամանակ Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական զորքերի հարձակողական գործողությունների շրջանում Անգլիայի միջնորդությունն ապահովելու Ջ.Կաննինգի փորձերից էին, երբ նա «միասնական գործողությունների» համակարգն օգտագործում էր ո՛չ միայն հունական և թուրքական հարցերում, այլև Պարսկաստանի և Ռուսաստանի հետ նրանց հարաբերությունների մեջ: Բացի այդ, 1827թ. հոկտեմբերի 13-ին ռուսական զորքերի կողմից Թավրիզը գրավելուց հետո Արևելա-հնդկական ընկերությունը չէր բացառում դեպի հնդկական սահման գնն. երիսթովի զորքերի առաջխաղացման

¹ ЦГВИА, Ф. ВУА, д.4329, л.30.

² Балаян Б.П., Указ. сочинение, с.202.

հնարավորությունը:

Անգլիան շահագրգռված էր Դեհկարհանի բանակցությունների կասեցման և ռուս-պարսկական պատերազմի շարունակության մեջ այն բանի համար, որպեսզի թույլ չտար Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և այդ նպատակով պարտադրեր Ռուսաստանին պատերազմել միաժամանակ երկու ճակատով: Այդ իմաստով 1827թ. հոկտեմբերի 8(20)-ին նավարինյան ծովածոցում թուրք-եգիպտական նավատորմի ջախջախումն անգլիական դիվանագիտության համար խուսանավելու մեծ հնարավորություններ ստեղծեց, քանի որ նավարինյան ճակատամարտը ստիպեց Մահմուդ 2-րդին չեղյալ հայտարարել Ալկերմանի պայմանագիրը և Ռուսաստանին սրբազան պատերազմ հայտարարելը, իսկ Դեհկարհանի բանակցությունների ընթացքում համոզել շահին շարունակել պատերազմը ռուսների դեմ Թուրքիայի հետ դաշնակցած: Սակայն գեմ. Պասկևիչի զորքերը վերսկսեցին իրենց հարձակողական գործողությունները Թեհրանի ուղղությամբ, և շահը համաձայնվեց ռազմատուգանքը վճարել և կնքել Թուրքմենչայի հաշտությունը¹:

Սպասելով ռուս-թուրքական պատերազմին, Ֆաթի-Ալի-շահը մոլորության մեջ զցեց սուլթանին այն բանում, որ իբր թուրքական սահմանի մոտ կենտրոնացվել են պարսկական զորքեր, նաև հայտնեց, որ Աբաս-Միրզայի փոխարեն գահաժառանգ է նշանակում սուլթանին ցանկալի՝ Խորասանի կուսակալին և հավանություն տվեց սուլթանի առաջարկության՝ հինգ կուրուր տալ ոչ թե ռուսական, այլ պարսկական զորքերին: Այնինչ, շահը Նավարինյան ջարդից հետո չէր վստահում սուլթանին և սպասում էր Ռուսաստանի դեմ Թուրքիայի պատերազմին, որպեսզի դրանից հետո միայն լուծի Ռուսաստանի դեմ Պարսկաստանի երրորդ պատերազմի հարցը:

¹ Балаян Б. П., *Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России*, Ереван, 1984, с. 12 (Автореферат докторской диссертации).

ԱՄՓՈՓՈՒ

Անդրադառնալով աշխատության մեջ քննարկված 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի մի քանի հիմնահարցերին և քննհանրապնելով այդ պատերազմի պատճառներն ու նրա բնույթը պայմանավորող նոր չափանիշները, վերլուծելով դրանք հայ պատագրական շարժման շահերի, ցարական Ռուսաստանի, շահական Պարսկաստանի և Արևմտյան մեծ տերությունների շահերի տեսանկյունից և անփոփելով ներածության և աշխատության գլուխներում քննարկված հարցերը անհրաժեշտ ենթ համարում կատարել հետևյալ ելրակացությունները.

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմը սկսվեց 1826թ. հուլիսի 16-ին, սակայն Կաջարները այն մտադիր էին սկսել դեռևս գարնանը և սպասում էին ռուս-թուրքական պատերազմին, որպեսզի Ռուսաստանին ստիպեն պատերազմել երկու ճակատով: Սակայն դա տեղի չունեցավ, քանի որ Թուրքիան ինքն էր սպասում ռուս-պարսկական պատերազմին, որպեսզի չպատերազմեր Ռուսաստանի դեմ և խուսափեր պարտությունից: Հետագայում միայն Կաջարները համոզվեցին, որ անգլիացիները և թուրքերը խաբեցին իրենց Էրզրումի 1823թ. պայմանագրի կնքման ժամանակ, երբ հրաժարվեցին Ռուսաստանի դեմ թուրք-իրանական դաշինք ստեղծելուց, որը Պարսկաստանին Ռուսաստանի դեմ պատերազմի հրահրման անգլիական պլաններում գրավում էր առանցնահատուկ տեղ:

Տապալվեց նաև Ռուսաստանի դեմ Պարսկաստանի «անվտանգ» պատերազմի պլանը:

Անգլիան չէր կարող չկանխատեսել Պարսկաստանի պարտությունը Ռուսաստանի դեմ պատերազմում և վստահեցրեց Կաջարներին, որ նրանք ոչինչ վտանգի չեն ենթարկում, քանի որ նրանց պարտության դեպքում Անգլիան իբր հանդես կգա որպես միջնորդ ռուս-պարսկական հաշտության բանակցություններում և կվերականգնի Գլուխտանի պայմանագրի որոշած սահմանները: Անգլիան և Թուրքիան շահագրգռված էին ռուս-պարսկական պատերազմի հարցում, որը թույլ չտվեց Ռուսաստանին պատերազմել միաժամանակ երկու ճակատով՝ Թուրքիայի և Պարսկաստանի դեմ:

Աշխատության մեջ քննադատված է նաև XIX դարի եվրոպական պատմագրության մեջ տարածված այն կարծիքը, թե իբր Ռուսաստանն է Պարսկաստանին ներքաշել պատերազմի մեջ, ինչպես ժամանակին Անգլիան բուրերին: Այդ մեկնակերպը դժվար չէր հորինել, քանի որ Եվրոպայում հայիվ թե որևէ մեկը մտածեր, թե թույլ Պարսկաստանը կարող է հարչակվել հյոր Ռուսաստանի վրա: Իրականում այդ տեսակետի հեղինակը անգլիական դիվանագիտությունն էր, որը ամեն կերպ աշխատում էր իրեն վերծ պահել այդ պատերազմի համար

որն է պատասխանատվություն կրելու:

Արտասահմանյան պատմագրությունը ծայր աստիճան հակասական կարծիքներ է արտահայտել 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառների և հետևանքների գնահատման հարցում: Ղա առավել ցայտուն աչքի է ընկնում անգլիական պատմագրության մեջ: Ինչպես արդեն նշել ենք, Մակնիլը պնդում էր, որ միայն Անգլիայի շնորհիվ Պարսկաստանը պահպանեց իր անկախությունը: Մեկ այլ պատմաբան՝ Պ.Սայքսը չի համաձայնվում այդ կարծիքի հետ և գտնում է, որ Թուրքմենչայից հետո Պարսկաստանը դադարեց անկախ պետություն լինելու, իսկ պատմաբան Բեյքը համոզված էր, որ Անգլիան Ռուսաստանի դրսևորած ռազմական և դիվանագիտական ակտիվության լոկ անգործունյա դիտորդն էր հանդիսանում:

Բերված գնահատականներից պարզ է, որ վերոհիշյալ անգլիական հեղինակներից և ոչ մեկը կամ չէր պատկերացնում Անգլիայի դերը ռուս-պարսկական պատերազմի հրահրման գործում, կամ կանխատեսված կերպով խեղաթյուրում էր փաստերը, քանի որ այդ պատերազմում Անգլիան հետապնդում էր քայքայապես իր նպատակները:

Ի տարբերություն անգլիական պատմաբանների, Ժամանակակից պարսիկ պատմաբանները՝ Ալի Ակբար Բինան, Մ.Մահմուդը և ուրիշներ գտնում են, որ այդ պատերազմում Պարսկաստանը հանդիսացավ եվրոպական դիվանագիտության վոճը և առաջին հերթին մեղադրում էին անգլիական դիվանագիտությանը այդ պատերազմի աննպատեղման և Պարսկաստանի պարտության համար¹:

Աշխատության մեջ քննադատվում է նաև ամերիկյան պատմաբան Մ.Էտլի-նի տեսակետը 1826-1828թթ. պատերազմի պատճառների գնահատման հարցում: Էտլինը ամեն կերպ արդարացնում է Պարսկաստանին Ռուսաստանի դեմ պատերազմը սանձազերծելու հարցում և փորձում է ապացույցել, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմը հանդիսանում է լոկ 1804-1814թթ. պատերազմի շարունակությունը:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառների և հետևանքների վերաբերյալ անգլիական, պարսկական և ամերիկյան պատմագրության հիմնական տեսակետերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ժամանակակից պարսիկ պատմաբանների գնահատականները հանդիսանում են առավել անաչառ և հիմնավորված, քան անգլիական և ամերիկյան պատմագրության տեսակետերը:

Անդրադառնալով վերոհիշյալ հարցերին, մենք փորձում ենք ճշտել կամ վերանայել այդ պատերազմի պատճառների վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսակետեր, որոնք երկար տարիներ գտնվում էին գաղափարական ճնշման տակ: Հայտնի է, որ խորհրդային պատմագրությունը հաճախ քողարկում էր ցարիսի վարած քաղաքականությունը Անդրկովկասում, իսկ Ռուսաստանի, Պարսկաստանի և Արևմտյան մեծ տերությունների քաղաքականությունը դիտում էր ոչ թե Անդրկովկասի ժողովուրդների, այլ այդ տարածաշրջանը

նվաճողների շահերի տեսանկյունից:

Ռուս-պարսկական պատերազմների բնույթի գնահատման հարցում որոշակի չափով հաշվի չէր առնվում անդրկովկասյան տարածաշրջանի բուն բնակչության վերաբերմունքը նրանց հնամենի տարածքում ծավալվող պատերազմների նկատմամբ, բայց դրա փոխարեն հիմնական ուշագրությունը դարձվում էր օտարերկրյա պալթիչների մղած «արդարապի» և «անարդարապի» պատերազմներին:

Հարյի վերջնական լուծման հավակնությունը չունենալով, այնուամենայնիվ ավելի նպատակահարմար ենք համարում, որպեսզի պատմաբանները տարբերակված մոտեցում ունենան պատերազմների գնահատման հարցում: Կոնկրետ տարածքում ծավալվող յուրաքանչյուր պատերազմ առաջին հերթին պետք է դիտվի այդ տարածքի բուն ժողովրդի և անկախության համար նրա պատագրական պայքարի շահերի տեսանկյունից: Պատերազմի պատճառները և ընթացքը առաջին հերթին անհրաժեշտ է դիտել տեղի նախարների ժողովուրդների ազգային շահերի տեսանկյունից և հետո միայն առանձին փաստորեն գալթիչների հետապնդած շահերի տեսանկյունից, հաշվի առնելով նաև արտաքին գործոնները, որոնք պայմանավորված են մեծ տերությունների քաղաքականությամբ:

Անդրադառնալով վերոհիշյալ հարցին մենք գտնում ենք, որ ինչպես ցարական Ռուսաստանը, այնպես էլ մյուս պետությունները ամեն ինչ անում էին իրենց արտաքին քաղաքականության մոլի գաղութատիրական բնույթը քողարկելու, երկրորդ ռուս-պարսկական պատերազմի իրական պատճառները սահմանային վեճերին հանգեցնելու համար:

¹ Պարսիկ պատմաբանների կարծիքները մեջ են բերված ըստ պրոֆ. Բ. Պ. Բալայանի գրքում օգտագործված աշխատությունների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 5

Գլուխ առաջին. 1826-1828թթ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՍԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Ցարական Ռուսաստանի արտաքին գործոց
նախարարության պաշտոնական տեսակետը սահմանային
վեճերը որպես պատերազմի պատճառներ դիտելու
մասին 25
2. Մ.Ն. Պոկրովսկու տեսակետը 1826-1828թթ. ռուս-պարսկական
պատերազմի պատճառների մասին 36
3. Նոր տեսակետներ երկրորդ ռուս-պարսկական
պատերազմի պատճառների մասին հայ և ռուս
պատմագիտության մեջ 42

Գլուխ երկրորդ. ԱՆԳԼԻԱՅԻ ԴԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ
ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՍԱՆՁԱԶԵՐԾՍԱՆ
ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍԵՐԻԿՅԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ
ԱՆԳԼՈՒԻՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՄ-ԻՐԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ժամանակակից աներիկյան պատմաբան Մուֆիել Էտկինի
տեսակետը XIX դարի սկզբին անգլո-իրանական և ռուս
իրանական հարաբերությունների մասին 51
2. Անգլիայի և Պարսկաստանի միջև կնքված Թեհրանի
1814թ. պայմանագրի դերը 1826-1828թթ. ռուս-պարսկական
պատերազմի սանձազերծման գործում 72
3. Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի անգլո-
իրանական պլանի և Ջ. Կաննինգհի ու ռուսական դեսպան
Ք. Լիվենի լոնդոնյան բանակցությունների ծախսողունը 79
4. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին
Անգլիայի միջամտության հարցը հետիոկտեմբերյան
շրջանի հայ և ռուս պատմագրության զնահատմամբ 89

Գլուխ երրորդ. ԹՈՒՐԹԻԱՅԻ ԴԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ
ՌՈՒՄ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ
ՍԱՆՁԱԶԵՐԾՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ *

1. Թուրք-իրանական պատերազմը և Էրզրումի 1823թ.
հաշտությունը հակառուսական դաշինք ստեղծելու
անգլո-թուրք-իրանական պլաններում 97
 2. Ռուսաստանի պայքարը թուրք-իրանական դաշինք
ստեղծելու դեմ ռուս-պարսկական պատերազմի
եզրափակիչ փուլի նախօրյակին 106
 3. Ակկերմանի բանակցությունները և մեծ տերությունների
համատեղ գործողությունները Թուրքիայի
դեմ Նավարինում 111
- Ամփոփում 123

Շարվածքը, ձևավորումը և տպագրությունը «ՀԱՅԷՂԻԹ» ՍՊԸ
Սրևան, Հալաբյան 41ա:

